



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material



5574

Q-un-pi-q-jun-<sup>u</sup>

Q-un-pi-q-jun- U-p-mi-gu-ni-wu


4. On Chu

1867

891.99

U-43

2011





ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱՏՐ  
ԳԱՐԵԳԻՆ  
ՄՐՈՒՄՆՉՏԵԱՅՑ  
ԱԶԳԱՅԻՆ ՈՂԵՐԳՈՒԹԻՒՆ  
ԶՈՐՍ ՄԱՍՆՈՎ

ՀԵՂԻՆԱԿԱՐԳԻՒՆ

ՄՈՐԿՈՍ ԱՂԱԲԵԴԻՆ



Կ. ՊՕԼԻՍ  
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՈՒԽԵՆԻ Յ. ՔԻԿԻՐՃԵԱՆ  
ՅԻՆԱՆՁԵԼԱՐ ԵԶԳՈՒՇՈՒ ԹԻՒ 19.

— 1867 —



891.99  
Ա-43  
մար.

# ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱՏՐ

ԳԱՐԵԳԻՆ ՄՐՈՒԱՆՁԵԱՅՑ  
ԱԶԳԱՅԻՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ  
ԶՈՐՍ ՄԱՍՆՈՎ



Կ. ՊՈԼԻՍ  
ՏՊԱԴՐՈՒԹԻՒՆ Ո. Յ. ՔԻՒՐՔՃԵԱՆ  
— 1867 —

1805

2482-578

2003



# ԹԱՒՂԹ

## ԱՌ Պ. ԳԱՐԵԳԻՆ ՄՈՒՐԱՏԵԱՆՑ

Քեզ եմ համարձակումնուիրել, Աղնիւ բարեկամ, այս՝ քեզ  
համանուն ողբերգութիւնը, որն որ մեր այժմեան քերթողական գը-  
րականութեան մէջ՝ իմ ունեցած երախայական կարողութեանն ա-  
ռաջին երախայրիքն է, Այս առաջին անդամն է, Աղնիւ Հայաստան-  
ցի, որ կամք ու փափաք ունեցայ մեր երբեմն ծաղկած ու բերրի  
և այսօր անմշակ և անբերրի գողթան գաւառի գաշտերի և բլուր-  
ների վրայ թոթուալով ման գալ իմ երերուն թեւերով և գողդո-  
ջուն ծնկներով։ Այս առաջին անդամն է, ասում եմ, որ բանաս-  
տեղծների գրախոր մտնել յանդդնեցայ, որպէս զի մի քանի վարդ  
և շուշան, միխակ և մանիշակ քաղելով՝ արդեան աղդային գրա-  
կանութենէն մի քերթուածոյ փունջ շինեմ։ Կարծում եմ շինած-  
լինել այդ փունջը և արժանի քեզ նուիրելու, որ քո հողեղէն զգա-  
ցողութեամբ նրա անոյշ բուրմանէ զմայլելով՝ զգաս, և տեսութեան  
ճաշակովն նրա դոյնդդոյն տեսքէ հիանալով՝ վայելես։ Արդ՝ քեզ  
և քեզ նման բանասէրների կը մնայ քննել իմ այս նոր գրականա-  
կան փունջը և վկայել, թէ արդեօք բաղդաւո՞ր եղել եմ, սրտի հա-  
մար դիւրալի, աչքի համար հաճելի և բուրելու համար անոյշ ծա-  
ղիկներով զարդարել, եթէ ոչ անբաղդ, կոշտ ու կոպիտ թփերով  
և վայրի դալարներով եմ շինել։ Իմ նպատակը, չանք և փոյթ ա-  
նել է եղել յաջողելու, եթէ հասել եմ իմ նպատակին, բաղդաւոր  
եմ համարում ինձ, իսկ եթէ չեմ հասել, ընդունեցէք և այնպէս  
իմ այս չնչին նուերը ինչան իմ շնորհակալութեան այն մտերիմ և  
անկեղծ բարեկամութեան, որ ինձ նման տար աշխարհների մէջ ծը-  
նած ու մնած մի հայկաղն երիտասարդ եկել է ու դտել քեզ նման  
բուն իր հայրենի աշխարհի մէջ մեծացած ու զարդացած հայկաղն  
երիտասարդի մօտ։

Մի քանի տեղեկութիւն տալ քեզ այս ողբերգութեան մասին ա-  
մենեւին անպատշաճ չթուեցաւ ինձ։ Այս ողբերգական հատուա-  
ծուն մէջ, մի միայն մեր հայրենական աշխարհի, աղդի և կրօնի հո-  
գին, կիրքն ու կեանքը նկարագրելուս համար Ս.Գ.Ա.Յ.Ի. վերնադիրը

աւելացնել յանդղնեցայ : իսկ ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱՏՐ անուն տալ կամենալը ուրիշ բան չէ՝ այլ նրա ձեւուն և կերպին մի առանձին յատկութիւն և կերպարանք տուած լինել եմ կարծում, առ հասարակ եւ բոպական թատրների ձեւերէն հեռայնելով նրան և ասիական ձեւեր տալով, կամ թէ աւելի պարզն ասեմ, նախնի Հայոց քրիստոնէական վարքն ու բարքը նրա առանձին կերպարանք և հանգամանք անելով : Եթէ մի ցաւալի ճշմարտութիւն գիտենալ կը կամենաս, Աղնիւ բարեկամ, կը փութամ այս առմով իմաց անել քեզ թէ ըստ իմ կարծեաց, մենք այսօրուայ Հայքու չենք կարող մեր ներկայ վիճակին նայելով մի ճշմարիտ Հայկական կամ Աղդային թատրունենալ թէ գիւղաղնական և թէ ընտանեկան կեանքէ վեր առած, սրա հաղար ու մէկ պատճառները քեզ յայտնի են անշուշտ, որոնց գլխաւորներն են, նախ՝ մեր նախնեաց իրանց համար թատերական խաղերու նման մի յատուկ հրապարակական դրօսանք չունենալը կամ եթէ ունեցել են, որն որ խիստ շատ հաւանական է, մինչեւ մեր ձեռին չհամարը . երկրորդ՝ ի՞նչ ես տեսնում այժմեան ժամանակ, բայի Հայոց աշխարհի մի քանի կողմերի բնիկ որդւոց մէջէն՝ օտար աշխարհներ տարագիր եղող Հայոց մէջ, որոնց աղդային վարքը, բարքը, զգացմունքը, հողին, կիրքը այսօրուան օրս այն աստիճան զգալի, երեւելի և նշանակելի լինի, որոնք կարելի լինին թատերական բեմի վրայ իրեւե կենդանի պատկերներկայացունել : Եւ այլ սրանց նման այլեւայլ պատճառներ կան, որոնք ուրիշ անդամ, թէ առիթ կունենամ յառաջ կը բերեմ, թատերական խաղերու վրայ ճառելու որ լինիմ :

Ուստի ես, Աղնիւ բարեկամ, այսօրուայ Հայոց քաղաքական և ընտանեկան բարքն ու վարքը արդեան դրականութեամբ պատկերացնելու ճարտարութիւնն ուրիշ կորովի, հանճարեղ գրիչների թողելով, յետ մղուեցայ հաղարաւոր տարիներով՝ վեր կացայ գնացի իմ սիրական նախնեաց մէջ Հայկական հողի, սիրտ և կեանք փըտըւելու, շատերի պատահեցայ, բայց իմ հողին և ուշքը գըրաւողն եղաւ գարեղին Սրուանձտեայցը, այն մանկագոյն նախարարը, որոյ անունը, Դու, քո վրայ ես կրում և որոյ պատմութիւնը, մեր երանելի եղիշէ վարդապետի, գրեթէ առաջին ուշադրութեան արժանի առարկայն է եղել, ինչպէս երեւում է իր ՎԱՍՆ ՎԱՐԴԱՆԱՅ ՊԱՏԵՐԱԶՄԻ գրուածքին մէջ :

Աղնիւ բարեկամ, գարեղին Սրուանձտեանի պատմութիւնը, որքան ինձ, անշուշտ և քեզ էլ այնքան և կարելի է աւելի ծանօթէ : Ես նրա պատմութիւնը եղիշէն եմ վեր առել, բայց Փարպեցւոյն և Ճառընտրոյն մէջն էլ մի քանի տեղեկութիւնք եմ գտել նրա մասին, որոնք եղիշէի ասածին այնքան յարմար չեն պատասխանում : Փար-

պեցին յիշումէ երկու եղբարք ի տանէ Սրուանձտեայց, խուրս և գարեգին անուն, որոնց նահատակութիւնը վարդանանց պատերազմին է դնում. իսկ Եղիշէն թէ և խուրսն էլ է յիշում, բայց գարեգնի համար ասումէ, թէ Յաղկերտ երկու տարի ձեռքն ու ոտքը կապած՝ չարչարել տալէն յետոյ նրամէն առնելով իր տէրութիւնը, սպանել տուաւ.

Ահա քեզ նաեւ, Զամշեան Միքայել վարդապետի պատմածն էլ այս դէպէի մասին, որն որ այս ողբերդութեան առարկայն պարզացնելու համար բաւական լցո կը տայ.

« Ի պատերազմիլ Յաղկերտի ընդդէմ Հոնաց՝ տեսեալ, թէ երկարի այն դործ, շինեաց մօտ ի դուռն Ալանաց բաղումաշխատանօք երաղում ծախիւք զբերդ մի մեծ և հզօր. և այս այն է, որ կոչի ի դիրու Եղիշէի Պահակ Հոնաց, և շուրջ զնովաւ կանդնեաց զբաղում աւանս ի բնակութիւն մարդկան իրբեւ զբաղաք. և արար անդէն զարքունիս, և բնակէի անդ. և ընդ ժամանակս ժամանակս դնայր ի Տիսրօն, և դառնայր անդըէն. Այսպէս առնէր մինչեւ ի մետասաներորդ ամին թագաւորութեան իւրոյ. Եւ հանապաղ երկնէր ի սրտի՝ որսալ ի կամս իւր զբրիստոնեայս, որք էին ի բանակի, երբեմն խրոխտայր ի վերայ նոյս, և երբեմն ողոքէր, երբեմն արհամարհանօք խօսէր, և երբեմն ցուցանէր առ երես՝ թէ հաւանէ ընդունել զճշմարիտ Աստուածն. քննեսցի, ասէր, և տեսցի, ո՞ր Աստուածլաւ իցէ, ընտրեսցի նա ի պաշտօն, և աղա մնոտի բանիւք զովէր զարեգակն և զհուր, և արհամարհէր զօրէնս քրիստոնէից. և բազում անդամ եսպերելով ասէր. ո՞րպիսի է այն Աստուած, որ խաչեալ իցէ և մեռեալ և թաղեալ:

« Ի հանապաղորդել նորա զայսալիսի բանս, յաւուր միում մանկագոյն նախարար ոմն ի Հայոց ի տոհմէ Սրուանձտեայց՝ որում անունն էր Գարեգին, չհանդուրժեալ այսչափ անարդանաց նորա՝ ասէցնա. արքայ քաջ՝ դու ուստի դիտես, թէ խաչեալ է Աստուած մեր, և մեռեալ և թաղեալ. Եւ նա ասէ, իմ առաջի ընթերցան զդիրս մոլորութեան ձերոյ. Ասէ ցնա պատանեակն ընդէր արքայ ցարդ վայր միայն ետուր ընթեռնուլ, այլ եւս յառաջ տուր կարդալ, ուր լուիցես և զյարութիւն նորա և զվերանալ նորուն յերկինս, և զխուտումն միւս անդամ դալստեան, եւայլն՝ որ ի կարդի. Ընդ այս զամօթի հարեալ թագաւորին՝ ծիծաղեցաւ ի վերին երեսս և ասէ. այդ ամենայն խաբէութիւն է. Պատասխանի ետ Գարեգին և ասէ, եթէ հաւատարիմ թուին քեզ չարչարանքն և անարդական մահ նորա, աղա հաւատարմագոյն եւս թուեսցին փառաւոր յարութիւնն և համբարձումն նորին, և ոչ թէ խաբէութիւն. Բարկացեալ ընդ այս արքայի՝ նոյն ժամայն ետ կապել զձեռու և զոսս նորա, և ար-

կանել ի բանս, յորում տառապեցաւ երանելին ամս իրը երկու, որ և թէպէտ վճիռ մահու եւս էր ընկալեալ, բայց յետոյ ընդ այլ նախարարուն արձակեալ ի խնդրոյ նոցա՝ նահատակեցաւ ընդ սրբոյն վարդանայ ի մեծի պատերազմին<sup>(1)</sup> » :

Խակ Գարեգնին՝ Երանուհի անուն մի քոյր որ տուել եմ և որն որ երկրորդ դիւցաղն եմ արել իմ ողբերդոթեան մէջ. նոյնպէս էրէց ներն, որոնք մասնակիոյ եմ արել Գարեգնի արկածին, Զամշեան Միքայէլի պատմածին նայելով եմ արել, որ ասումէ Եղիշէէն և ֆարանցիէն վեր առած՝ իր Հայոց պատմոթեան Բ. Հատորին, Ե. Գլխին և 43 երեսին մէջ :

« Իբրեւ տարածեցաւ լուր այսր գործոց յաշխարհս Հայոց, ամենեքին առ հասարակ զինու վառեալք՝ հասանեին անդր, ընդ որս և կանայք ոմանք տուր ածեալ ընդ մէջ՝ վահան ի ձեռին և սազաւարտ ի դլուխս՝ պատրաստեալք ի պատերազմ, այլ և եպիսկոպոսունք և քահանայք բազում յոյժ, եւս և նա ինքն Յովսէի կաժողիկոս՝ դիմեալ եկին և անդր ի յորդոր քաջոթեան. Եւ եւս բազումք ի նոյանէ՝ որք ի բանակին էին ընդ մոդակետին՝ քահանայք և ժողովուրդք, զատեալք ի բանակէ անտի, անկան ի քաղաք անդր և եղեւ ամբոխ բազմոթեան մեծ յոյժ » :

Միւս նախարարները, ինչպէս են Մանուճիհը Ռշտունի, Ատովմ Գնունի Եւայլն, որոնք իբրեւ երկրորդական անձինք են ներկայանում ողբերդոթեան մէջ, նոյնպէս և դրանց մասին Զամշեանն այս կերպովէ պատմում այս դէսլքին մէջ :

« Զայսպիսի գործ Յազկերտի տեսեալ երկուց ի նախարարացն Հայոց, Ատովմայ Գնունւոյ և Մանուճիհի Ռշտունւոյ, որք էին արք երեւելիք և պատեեալք առաջի արքայի, և դիտայեալ՝ թէ այս հուր օր ըստ օրէ առաւել ճարակի և թէ յաւուր միում հանդերձեալ է Յազկերտ և դինքեանս ստիպել յուրացութիւն հաւատոյ, առին զիւրեանց զառանձին զօրս, և մեկնեցան զանխուլ ի տեղւոջէ անտի, ընդ որս էին և վարս Սեպուհ յ՛Աստանեայ տանէ, և Ներսէ Երուանդունի և Վարձաւոր Արծրունի :

» Իբրեւ լուաւ Յազկերտ դիմախուստ ոցա, զայրացաւ անհնարինա՝ և կամեցաւ առնուլ վրէժ ի նոյանէ, բայց զի մի՛ զայրացուսցէ զսիրտ այլոց զօրականաց Հայոց՝ որք առ իւր էին, դրեաց նենդոթեամբ թուղթ ողոքական առ Ատովմ և առ ընկերսնորս, այսպէս :

» Յազկերտէ յաստուածոց հաւատարէ՝ արքայից արքայէ՝ առ սիրելի ծառայսդ, առ ազատութ և առ ուամփկ հեծեալս Հայոց, որ ի

(1) Զամշեան Միքայէլ վարդապետի Պատ Հայոց: Հատ. Բ. ՊԼ. Պ. եր. 49.

մարդէ աստի մեկնեցայք, ողջոյն հասցէ ի մերմէ տէրութենէս, Յիշեցաք զվաստակս ձեր և դքաջութիւն՝ որ առ թշնամիս մեր, և կամիմք մեծաւ պատռավ ճոխութեամբ արձակել զձեղ յաշխարհ ձեր, զի տեսեալ եղբարյն ձերոց՝ առաւել փութասցին ի մեր ծառայութիւն, միայն զի փութով հասանիցիք առ մեզ.

” Զայս թուղթ եւս Յաղկերտ ի ձեռս միոյ ուրուք ի հաւատորիմ ծառայից իւրոց և փութապէս արձակեաց զկնի Ատովմանց, և նորա հասեալ առ նոսա ի միջոց սահմանակցութեան աշխարհին Հայոց և Պարսից՝ մատոյց նոցա զթուղթն և յորդորեաց դառնալ յետս: Իսկ նոքա յայտնի դիտելով զհնարս թագաւորին՝ ոչ կամեցան անտալ նմա: Դիտեմք ասեն՝ զի կայ մեղ առաջի վտանգ հոգւոյ, վասն որոյ և ոչ կամմիմք դառնալ: Յայնժամ վաղվաղակի դարձ արարեալ պատղամաւորին՝ ծանոյց Յաղկերտի զմիտս նոցա: Եւ նա նոյն ժամայն առաքեաց ստուար դունդ մի յիւրոց անտի՝ գնալ զհետ Ատովմանց մինչեւ յաշխարհին Հայոց: և թէ ոչ հաւանեացին դառնալ մահու սպանցեն զնոսա: Հասեալ զնդին ի Հայս՝ լուր առին թէ Ատովմ ընկերօք իւրովք և Մանաճիհը այլովքն հանդերձ շրջին անապատ տեղւո՞յ ուրեք յաշխարհին վասպուրականի ի կողմանս Սնձեւացեաց: Գասեալ ապա իւրեանց զոք առաջնորդ և մատնիչ՝ դիմեցին զհետ Ատովմանց:

” Իսկ Ատովմ և ընկերօք իւր՝ որք դեղերէին ի դաւառն Սնձեւացեաց, ընկալսն յայտնութիւն ի կրօնաւորէ միոջէ սրբոյ, եթէ հանդերձեալ են մարտիրոսանալ: Եւ ապա ի բանակիլ նոցա ուրեք՝ ետես Ատովմ նախարար տեսիլ ոքանչելի, զի ձգեցաւ լուսեղէն կամար ի վերայ դնդին իւրոյ և զօրավարայն՝ որ ընդ նմա և այր մի լուսաւոր բաշխէր պսակս ամենեցուն՝ բոլորեալ ի կարմիր վարդից: Զայս տեսեալ նորա՝ պատմեաց ամենեցուն՝ որք ընդ իւր էին և նոքա սկսան ուրախ լինել, և ասեն: Երանի է մեղ, զի փոխանակ պսակելոյ յերկրաւոր և ի բռնաւոր թագաւորէ՝ պսակիմք յերկնաւորէն: Զայս ասցեալ՝ կային յաղօթս յնծութեամբ սրտից:

” Եւ մինչդեռ յայսմ ուրախութեան էին, հասին Պարսիկք ի վերայ, և նոցա տեսեալ զայն՝ զէն հանին պատերազմիլ ընդ նոսա: Յայնըմ վայրի դարձեալ երեւեցաւ ամենեցուն նոցա տեսիլն այն, զոր տեսեալ էր Ատովմ, յայն հայեցեալ նոցա ընկեցին զզէնս իւրեանց: Իսկ Պարսիկք, սկսան ստիպել և փութացուցանել զնոսա դառնալ յետս և հնաղանդիլ Յաղկերտի, և ուրանալ եւս զհաւատս: Բայց իբրեւ տեսին թէ նոքա հաստատուն կան, սուր հանին ի վերայ նոցա կոտորել զնոսա և նոքա յնծալից ուրախութեամբ մատնեցին զանձինս իւրեանց ի զենումն: ուր նա ինքն երանելին Ատովմ նախ մատոյց առաջի զորդի իւր զվարոս և ապա զինքն բոլոր դնդաւն: Մի

ոմն ի Պարսից տեսեալ անդանօր զտեսիլ պաակաց սրբոյն՝ ինքն եւս  
հաւատաց ի Քրիստոս և խառնեալ ի գունդ նոցա՝ նահատակեցաւ  
ընդ նոսա :

” Խակ Մանաճիհը հանդերձ գնդաւ խրով դնայր ի Ռշտունիս առ  
որս հասեալ Պարսիցն՝ կոտորեցին և զնոսա յոչխարանոցն ընդ նը-  
մին օրինակի : Ինահատակիլ սրբոց կրօնաւորն այն , որ գուշակեալ  
էր զմարտիրոսութիւն սոցա , առեալ յաստուծոյ դյայտնութիւն վասն  
մարմնոց երանելեացն՝ աղդ արար եալիսկոպոսին և նա եկեալ  
ուխտիւն և այլ բազմութեամբ թաղեաց զնոսա և շինեաց վանս , որ  
կոչեցաւ Ռշխարանից վանք ” :

Եւ մի յատուկ դրոշմ , որ ջանք արի տալ իմ ողբերգութեան , այն  
եղաւ՝ որ բոլորովին զանց արի նրա մէջ՝ թագուն բանսարկութիւնք  
և սիրահարութիւնք խառնել , ինչպէս սովորական է Եւրոպական  
թատրերդուներին : Մի միայն հայրենի աշխարհի և եկեղեցւոյ սիրոյ  
դդայողութիւնը մի անհնարին յուղմունք արի իմ դիւցազանցն հոգ-  
ւոց մէջ իրանց մարմնաւոր և երկրաւոր կրքերը յաղթել տալով այդ  
դդացմունքէն և նայեցայ , որ իմ հատուածն աւելի նկարագրական  
լինի քան թէ բանաստեղծական :

Մրանք են , իմ Աղնիւ բարեկամ , այն տեղեկութիւնք , որոնք  
ձեզ տալով՝ նոյն և մի ժամանակ իմ ընթերցողներին էլ մաս կը հանեմ :

Մնամ ձեր աղնիւ բարեկամութիւնը միշտ յարգոլ ,

ՄԱՐԿՈՍ ԱՂԱԲԵԳԵԱՆ

ԹԻՖԼԻ 1861 ՅԱՆՈՒԱՐ 2 \*

## ՄԻ ԽՍՕՔ ԷԼ ԸՆԹԵՐՑՈՂԻՆ

ԱՅՍ ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ԱՌԹՈՎ,

Թատերական դիտութիւնը մեր ազգայնոց մէջ, ամեն տեղ, դեռ առաջին երախայութեան մէջ է և մեղ այնպէս կը թուի, որ դեռ երկար ժամանակ պիտի մնայ այդ վիճակին մէջ. վասն զի, դեռ մեր ազգայինք չեն հասկացել ու չեն կամենում հասկանալ, որ՝ ինչ բան հրապարակ դուրս պիտի դայ և հասարակաց համար պիտի լինի, այդ բանն ենթակայ է ու պէտք է լինի բանաքննութեան. Բանաքննութեան տակովս ընկնին ամենեւին չեն սիրում մեր ազգայնոց մէջ նրանք, որոնք հասարակաց համար հրապարակ դուրս կը դան, հապա, միշտ կսպասեն դովեստ լսել. դովեստն՝ կը կարծեն դրանք իրանց դործին յաջողութեան և կատարելութեան ամենամեծ ապացոյցն է. Սխալ կարծիք, ամենէն հեշտ և ամենէն աժան բանն որ կայ այսօր մեր բանաքննիչների համար, դովեստ տան է որ և է աղդային հեղինակութեանց. Պատճառ, որ դովեստ դրելու համար ոչ աշխատանք և ոչ դիտութիւն է հարկաւոր. Իսկ բանաքննութիւննելու համար տարակոյս չկայ, որ մի հեղինակի շինած դործին վրայ ընդհանուր հայեցուածք պէտք է ունենալ, այդ հայեցուածքն էլ ունենալը շատ դիւրին բան չէ այսօրուայ մեր հրապարակխօսներին.

Ազգային թատերական դրականութիւնն էլ այդ վիճակումն է այսօր Պօլսոյ մէջ. ուր թատրոն կայ, բանաքննութիւնն էլ դրանը կանգնած է. Մենք էլ մեր մէջ թատրոն ունինք, բայց բանաքննութեան տեղը բոնած է սուտ դովեստը՝ ուղիղ նայուածքի տեղը՝ ծուռ նկատողութիւնը և արդար դատողութեան տեղը, շողոքորթ քաջալերութիւնն. Եւ աւելի ցաւալին, պարստանք Հայոց ժողովրդին՝ մեղադրելով նրան, իբրեւ թատրոնական ճաշակ չունեցող, ազգային զդացմունք չկրող իր մէջ և ազգային աշխատաւորներին չվարձատըլ, չքաջալերող և այլն. Մենք բոլորովին դրա հակառակն կը պընդենք և կասենք թէ մեր ազգային լրադրերն ու թատերականքն ամենեւին ամենավոքը աշխատութիւնն անդամ չեն առել իրանց վզին Հայոց ազգային թատրոնի կատարելութեան համար. Երբէք Հայոց՝ ոչ պատմական կեանքին վրայ են միտ դրել, ոչ նրա այսօրուայ վիպասանական լեզուն են սովորել և ոչ էլ այդ լեզուի արտաքերու-

թեան մասին ամենափոքր մտադրութիւնն են մատուցել . այլ ամեն մասնով եւրոպականն են օրինակել առանց որ և է քննողութեան և ընտրողութեան և զարմանալին էլ այն է , որ պահանջել են՝ որ Հայոց ժողովուրդն այդ թատրոնը հաւանի և թատերականը քաջալերէ այդ ճանապարհին մէջ :

Պիտի ասեն մեզ թէ , ուրեմն դու վեր կաց ու բանաքննիր մեր թատրոնը , ու մեզ մի ճանապարհ ցոյց տուր : Հէնց այդ նպատակով է , որ մենք էլ սրամէն վեց տարի յառաջ մեր մի շինած ողբերդութիւնը հրապարակում ըստ կը հանենք և գործով ցոյց տալոց յետոյ մեր տկար հասկացողութիւնն թատերական արհեստին մէջ , թէ կեանքի , թէ պատկերի , թէ կրքերի , թէ լեզուի և թէ քերժութեան կողմանէ , կը հրաւիրենք բանաքննիչներին իրանց հայեցուածքը դարձունել թատերական գրականութեան վրայ և մենք պատրաստ ենք մեր ձեռքէն եկածին չափ դոհացունել իրանց եռանդն այս մասին :

Այս Գ.Ս.ԲԵԳԻՆ ՍՐՈՒԱՆՉՏԵԱՅՅՅ ողբերդութիւնն յառաջն կը հանենք մեր ազգայնոց երկու կերպարանքով : Առաջինն է , մի հայեցուածցոյց տալ հինգերորդ դարու Հայոց կեանքի վրայ : Երկրորդն է , Հայոց այժմեան վիպասանական լեզուէն մի օրինակ յառաջ բերել : Մենք ազգ ային թատրոն չենք ունենալ , թէ որ մեր պատմական կեանքի և վիպասանական լեզուի վրայ քաջ հմտութիւն և ճաշակ չենք ստանալ : Թատրոնն ուրիշ բան չէ , բայց միայն կենդանի պատկեր , նախ նախնեաց պատմական կեանքի , երկրորդ՝ այժմեան ժողովրդային բարքին և վարքին : Առաջնուն համար մի գրաւոր կենդանի լեզու է հարկաւոր , երկրորդին՝ ժողովրդի կենդանի խօսուն լեզուն : Այդ գրականութիւնը , այսինքն դիւցազնական և ժողովրդական լեզուները թատերադրին հանճարն այնքան պիտի բարձրացնեն՝ որ նա կարող լինի դնալ մինչեւ հին դարերն և վինառել նրանց մէջ այս օրուայ մարդկանց դիւր դալու պատկերներ , նոյնալէս այնքան ընդարձակենայն , որ նա ( թատերադիրը ) կարող լինի ամեն կարդ ժողովրդին , արհեստաւորին կամ գործաւորին կեանքը , բարքը և վարքը պատկերացունել կենդանի դոյներով և հասկանալի խօսքերով : Ահա , ըստ մեզ , մեր ազգ ային թատերականներին հետեւելու ուղղութիւնն այս է : Ճանաչել մեր նախնեաց պատմական կեանքն ամեն կողմէն . նմանապէս այսօրուայ Հայոց կեանքն , ամեն աշխարհ , ամեն քաղաք ուր կը դտնուին և ծանօթ լինել նրանց բարքին , վարքին , լեզուին և կրքին հետ : Այս կերպով , այն ժամանակ Երեւանցին ճաշակ կառնէ Պօլոյ կեանքէն , նոյնալէս Մոսկուայու Հայն բան կը հասկանայ իզմիրու Հայու կեանքէն եւայլն . իսկ նախնեաց կեանքի թատրոնական պատկերները , պէտք է լինին մեր ամեն տեղի ազգայ-

նոց համար ընդհանուր բան , Մոսկուայու , Պօլսոյ , Թիֆլիզու , Կալկաթայու Հայքն այդ աղղային պատմական թատրոնի մէջ պէտք է այն դարու Հայոց կեանքի , բարքի , վարքի , սովորութեանց պատկերն տեսնայ , որոյ կը պատկանի , և ոչ թէ ամեն երկրի Հայն իր շինած թատրոնին մէջ դնէ իր դարուն , իր ապրած ընկերութեան կեանքի պատկերը :

Կը մնայ մի դվառաւոր հանգամանք , այն է թատրոնական լեզուն որոշել : Դիւցաղներգական թատրոնի համար անպատճառ վիպասանական լեզու է հարկաւոր և այսօր էլ այդ լեզուն ունեցողքն են Հայաստանցիք և Ռուսահայք : Դրանց մէջ անհամար վիպասանք կան և անհամեմատ դերադանց են թուրքահայոց մէջ գտնուածներէն , Սայաթ Նովայն , Պատկանեանք , Յ. Ամրիկեան , Պ. Մաթաթեան , Արծուիկն վասպուրականի Գարեգին Սրուանձտեան (1) և այլ շատերն կարող են ամեն մէկն մի մի տեսակ վիպասանական դրագի հիմնադիրը լինել և դրանց ընթերցումն քիչ չօգնեց և մեղայս Գարեգնի վրայ աշխատելիս , թէ առաջին հրատարակութեան և թէ այս երկրորդ տպադրութեան ժամանակ : Մեր մէջ , եթէ մի աննման վիպասան ունինք ՆԱՀԱՊԵՏՆ է (2) Պլուտ Առարարի քերթուածին հեղինակն , բայց այդ քերթուածն Պօլսոյ բարբառով գրուած չէ և երբէք այդ բարբառով էլ չեր կարելի մի Պլուտ Առարարի տոեղծել : Իսկ ժողովրդական թատրոնի , այն է կատակերգութեան , +աղջի հանու տուած քերթուածների համար , տարակոյս չկայ՝ որ ամեն կենդանի կեանք և իր կենդանի լեզուն իր ընական վիճակովն պէտք է ներկայանայ . ուստի Խղմիրցին իր կեանքն իր մէջ խօսւն եղած լեզուով պէտք է պատկերայնէ , նմանապէս Մշեցին , Թիֆլիզեցին , Շուշեցին +աղջի հանու (վուվիլ) կամ ըստ Պօլսեցւոյ զառեց և կատակերգութիւններն իրանց յատուկ բարբառովն պէտք է պատկերայնեն առանց ամենափոքր փոխտխութեան :

Անյաղթելի դժուարութիւնք են դրանք , կարելի է տսող լինին մեզ . հէնց մեր ասածն էլ այն է մեր թատերականաց համար՝ թէ ոչ ինչ աշխատութիւն չեն կրել Հայկական թատրոնի կատարելութեան կամ յառաջադիմութեան համար : Մեր տեսածներն մինչեւ այսօր Հայոց թատրոնական բեմերի վրայ՝ ուրիշ բաներ չեն , այլ Եւրոպացւոց թատրոների Պօլսոյ դրաւոր լեզուով թարգմանութիւնքը , իսկ աղղային ասուած թատրոններն անյաջող նմանութիւն եւրոպականին , և ոչ թէ մեր նախնեաց այն դարերու մարդկանց կեանքի պատկերը՝ որն որ աղղային թատրոնի յատուկ կերպարանքը պէտք է լինի :

(1) Այսօր Գարեգին վարդապետ :

(2) Հայր Ղեւոնդ Ալիշանեան :

Մեր Հայոց ազգին , ուր որ է , ինչպէս դպրոցը , օրադիրն ամենէն հարկաւորն են , հաւասար հարկաւոր է և թատրոնը , ինչպէս մեզ այլեւայլ կարդ դպրոց , և տեսակ տեսակ օրադրեր են հարկաւոր այնպէս էլ թատրոններ են հարկաւոր : Փափաքելի էր , որ ամեն քաղաք ուր դպրոց և օրադիր ունինք , ունենայինք և մի վոքրիկ թատրոն , բայց այդ թատրոնների համար էլ երեւելի թատերադրեր են հարկաւոր , մենք կարծենք որ երբ մեր մէջ թատերական վիպասանների գրուածքներ կը լինին , այնքան կը ներդործեն դրանք մեր հոգուն և սրտին վրայ , որ քարոզ հարկաւոր չլինիլ թատրոններ կառուցանելու , բայց քանի վիպասան ունինք այսօր , որ մեր նախնեաց կեանքն իր հանճարով երգած լինի՝ որ արժանի լինի թատրոնական բեմի վրայ երեւալու . ինդքենք ուրեմն Աստուծմէ , որ մեր մէջ էլ թատերադիր վիպասաններ ունենանք : Կունենանք՝ երբ այն երկնային հուրը , որ է ազգային սիրոյ զգացումը մեր մէջ եռ կը դայ ամենի սրտումը :

1867 Յունիոն 3.

ՄԱՐԿՈՍ ԱՂԱԲԵԿԵԱՆ





# ԳԱՐԵԳԻՆ ՍՐՈՒԱՆՉՏԵԱՅՑ

## ԱԶԳԱՅԻՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ

ԶՈՐԱ ՄԱՍՆՈՎ

### ԱՆՁԻՆՔ

ԱՏՈՎԾ ԳՆՈՒՆԻ	Նախարարք
ԳԱՐԵԳԻՆ ՍՐՈՒԱՆՉՏԵԱՅՑ	
ՄԱՆԱՃԻՀՐ ՌԵՏՈՒՆԻ	
ՎԱՐՍ ՍԵՊՈՒՀ	Առանեաց տանէ
ՆԵՐՍԵՍ ԵՐՈՒԱՆԴՈՒՆԻ	
ՎԱՐՉԱԿՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ	Աղատանի
ՀԵԽՈՆԴ	
ԽՈՐԵՆ	Երէցք
ՄԻ ԾԵԲՈՒՆԻ ԿՐՈՆԱԿՈՐ	
ՄՈՒՇԵՂ	Դաստիարակ և վերակացու տանն Ալբ-
	ուանձաեայց
ՎԱՐԴԱՆՈՅՑ	Մայր Գարեղնի
ԵՐԱՆՈՒՀԻ	Քոյր Գարեղնի
ՄԻ ԿԻՆ	Դայենակ Երանուհու
ՅԱԶԿԵՐՏ	Թագաւոր Պարսից
ՄՈԳՊԵՏԱՆ ՄՈԳՊԵՏ	
ՄՈԳՊԵՏ ԵՒ ԴԵՆՊԵՏ	
ԲԱՆՏԱՊԵՏ	
ԶՈՐԱՎԱՐՔ	
ԶՈՐԱԿԱՆՔ	
ՄՈԳԵՐԻ ԳՈՒՆԴ	
ԶԻՆՈՒՈՐՆԵՐԻ ԳՈՒՆԴ	
ԴԱՀԿԻՃՔ	
ՍՊԱՍԱԿՈՐՔ	

Դէպքը պատահումէ , Հայաստան և Պարսկաստան ,  
Յիսուսի Քրիստոսի 449 թուին .

# ԳԱՐԵԳԻՆ ՄՐՈՒԱՆԶՏԵԱՅՑ

## ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ՏԵՇԻԼ Ա.

Տեսարանն է Բաղրեւանդայ գաւառին մէջ Բագուան քաղաքումը Գարեգնի հայրենական ապարանքի մի դահլիճը, որն որ մի գմբեթով ծածկուած է, մէջ տեղէն ունենալով մի բոլորակ լուսամուտ, ուր տեղէն լոյս է առնում դահլիճը։ Դահլիճն է վեց անկիւնի կիսաշրջան երեք կամարաւոր դռներով, մինը մէջ տեղը, երկուսն երկու կողմէն. զարդարանքն են պատերի վրայ կախ արած նախնեաց պատերազմական զէնքեր, զրահներ եւ դրոշներ. դէս ու դէն հնաձեւ ահագին աթոռներ եւ մէջ տեղը մի սեղան, որոյ վրայ մի փայտէ խաչ, մի երկսայրի սուր եւ մի մեծ սուրբ դիրք է դրուած։ Նախարարք ու աղատանիք կիսաբոլոր կանզնած են երեցների աջ ու ձախ կողմերը։ Գարեգինը ներս է մտնում եւ ողջոյն տալուց եւ առնելուց յետոյ սկսում է խօսել։

ԳԱՐԵԳԻՆ

Երեցք եւ նախարարք, սեպուհ, ազատանի,  
Պաշտպանք, աղատարարք Մեծին Հայաստանի։

Բարի է ձեր դալուստ, ի՞նչ պաշտօն պիտանի,  
Հարկ է որ կատարէ Սրուանձտեանն պատանի։  
Չընի թէ վերջն ու վերջ մի բօթալի համբաւ,  
Մեր մեծին վարդանայ ականջին էլ հասաւ։

Թէ Յաղկերտ մեծ արքայն Յունաց հետ խուվեցաւ,  
Եւ բիւրաւոր զօրքով գընաց կարին զարկաւ։

Տէր հարք իմ, ձեղ եմ հարցընում,  
ի հարկէ, դուք էք իմանում։

Ինչ որ այսօր անց է կենում,  
Պարսից, Յունաց աշխարհներում։

Նախարարներ և Սեպուհներ,  
Աղատանի և Ասպետներ։

Գիտէք քանի դաւաճաններ,  
Յաղկերտ պաշտօնի է դըրեր։

Գիտէք, որ ասում են թէ՝ Վասակ Սիւնին ինքն է սպանել,

Իր հօրեղբայր Վաղինակին ու նրա տեղն իրան դրաւել։

Յաղկերտի թելադրութեամբ Սիւնեաց մեծ իշխան է տարել,  
Որ մին օր էլ մեր վըրայ կարող լինի բռնի տիրել։

ՂԵԽՈՆԻ ԵՐԵՅ

Գարեգին իմ, աղնիւ որդեակ, դուք, նախարարք աղասանի, Ականջ դըրէք, ասեմ ես ձեզ. Յաղկերտ արքայն Արեաց աղդի. Հրաման է տուել իր սիրական Միհըրներսէն մարզպանի, Արեաց դընդով գընալ տիրել բաղրեւանդայ մեծ դաւառի. Իսկ ինքն Յաղկերտ կատազութեամբ դիմել, հասել է կարնոյ վրայ, Աղգաց, աղանց սարսափ տալով երկիրն արել է տակն ու վրայ. Ինքն անօրէն ու սրբավիղծ ձեռն ու ոտն արիւնլուայ, Ընդունել է կայսեր ողջոյնն ի ձեռն մեծին Անատոլայ. Այսպէս, իմ քաջ որդեակ, Յաղկերտ իրեւ մի հրէշ ամբարտաւան, Յետ է դարձել քարուքանդ արած՝ ամեն քաղաքն ու աւան. Նոր օրէնք, նոր քարոզ է հանել իր մոգակետաց խիստ հաւան, Մըտքումն է դրել, որ աղդ և աղինք բոլորն իրան հաւատան. Ի՞նչ էք ասում, տաղնապ, սարսափ Հայոց երկրին չի սպառնում, Հայաստանեայց եկեղեցին վտանդումը չի դըտընւում. Ճամէ, ժամէ, պատանիք իմ քարոզ կարդալ եկեղեցում, Թէ սէր կրօնի և սէր աղդի մեղ յերկինս են վերացընում. Եթէ հոգի, եթէ մարմին, եթէ վարք բարք միաբանին, ի սէր կրօնի, ի սէր աղդի արիաբար պատերազմին, Պաշտպանելով հայրենիքն ու եկեղեցին աստուածային, Ըստ Յիսուսի Քրիստոսի Տեառն մերոյ պատուիրանին. Արթուն կացէք, պատրաստ եղէք արեւելքէն մինչ արեւմուտ, Արեաց աղդը վեր է կացել լոյս կրօնն մեր անում է մութ. Մոդակետութեան, դենակետութեան երբ թադաւոր լինի հըմուտ, Ողջ աշխարհիս աղդաց աղանց տիրապետել է հետամուտ. Ճամէ արդ ժամ, որ վրտանդէն մեր աշխարհըն մենք աղատենք, Հողւով մարմնով, խօսքով սրբով եկեղեցին մենք պաշտպանենք. Մեր արիւնն ու քըրտինքը նր' աղատութեան համար թափենք, Եւ սուրբ խաչըն, որ մեր դրօշնէ, մեր աշխարհի մէջ տեղ կանգնենք. Մեր աշխարհին թշնամիքը Բիւղանդիօն ու Պարսկաստան, Սուրբ ուխտն ու դաշն մեր վեհ նախնեաց չի պահեցին միշտ անսասան Հաւատալով և մենք նըրանց կեղծ ու պատիր սուտ մուտ խոստման, Բաժանեցինք մենք մեր ձեռքով մեր աղնիւն ու մեծն Հայաստան, Կայսրըն Յունայ Բիւղանդիօնում, Արքայն Պարսից ի Տիաբօնում. Հըսլարտ հըսլարտ դուռողանում, Թէ ո՞լ իրանցմէ կարողանում Հայոց մեծաց աշխարհն ջնջել, Եկեղեցին ուխտէն քակտել, Ինչպէս, մարմնոց կամին իշխել

Այնպէս հողւոց տքնին տիրել :  
Այսպէս , իմ որդեակը ովրականք ,  
Մեր այս երկու մեծ բրոնակալք .  
Իրար արիւնուշտ ոխակալք ,  
Եղել են մեզ մեծ ինքնակալք :

Սակայն , թէ մինը , թէ միւսը իրանց նրապատակին համար ,  
Կորուսին զօրք , կորուսին փող , պատերազմելով մեզ համար ,  
Միուն միւսին կորուստն ու վսասն է անհամար  
Մարտընջելով իրարու հետ այնքան տարի կատաղաբար .  
Բիւզանդիոն սարսափումէ Եւրոպիոյ աղատ հոգոց  
Արեաց աշխարհն տատանումէ բռնաբարոյ խուժդուժ մողոց :  
Մեծն վարդան , Տէր մեր Յովսէփի միաբան են , դիտեմ վաղոց ,  
Եկեղեցին Հայաստանեաց ողաշտպանելու ամեն զինոց :  
Բայց , աւազ , ողբամմեր վրրայ , ահա իշխան վարազվաղան ,  
Միւնեաց իշխանին վասակայ , ուրացող անօրէն փեսան ,  
Դիմումէ առ Միհրներսէն , լինել բանսարկու դաւաճան  
Տաղալել վասակն իր աները ու թաւալել Հայաստան :  
Բաւէ , արդ իշխանք , որ մենք մեր անողորմ ու անգութ ձեռքով  
Զարդ ու բուրդ , ցիրուցան անենք մենք մեր թըրովն ու հըրով ,  
Մոռանանք Պապն ու Արշակն Արտաշէսն ու Խոսրով  
Իրանց այլ և այլ սրբապիղծ ու անպիտան զործքերով :  
Միայն մեր Հայրենեաց , միայն Եկեղեցուն  
Միայն Հայոց ազգին հարազատ որդուն .  
Ազատութեան վրայ խորհինք օրն ի բուն  
Որպէս զի կանգնենք մեր հայրենի տուն .

### ԽՈՐԷՆ ԵՐԵՑ

Քաջ խօսեցար Վեւոնդ Եղբայր իմ հողեւոր  
Ների՞ր ինձ էլ և ես խօսիմ իրեւեւ զինուոր ,  
Եկեղեցու ու Հայրենեաց մեր երկնաւոր  
Ի՞նչ տառապանք ի՞նչ հալածանք կրելն այսօր :  
Որդի եմ ես , մնուած , օծուած մեր Հայրերէն  
Որոնց հոգին էր սիրաշունչ աստուածեմէն  
Լուսով , սիրով փառաւորուած անհուն երկնէն ,  
Սակայն նրանք էլ հալածուեցան մեր պապերէն .  
Այս , մենք ամենքըս երկապառակ ենք , երկապառակ ,  
Կորուսինք դահ , կորուսինք թաղ աննրապատակ ,  
Վոյելում ենք կեանք և վիճակ մեզ հակառակ ,  
Եկեղեցին աշխարհիս հետ է աւերակ .  
Միթէ և դուք , Ազատանի և նախարարք

Պիտի լինիք ոմանց նըման խըռովարարք ,  
Զէք տեսնում , որ խուժդուժ աղղեր և բռնակալք  
Հալածում են Եկեղեցին ու մեր աշխարհ.ք :

Ի՞նչ օրէնքով , ի՞նչ ասելով , Պարսիկները մեղ են տիրել  
Մեր երկրումը , մեր դաշտումը գաղթականներ են հաստատել  
Երասխու մօտ , Բագուանումը ատրուշաններ են կառուցել  
Մեր կանայքը , մեր որդիքը մոդալաշտութեան են դարձուցել .  
Զի հաւատանք նրանց մեծ մեծ խարեւատիր խոստմոնքներին ,  
Այսօր սիրող , վաղն ատող պիտի լինին մեր ամենքին  
Երբեւ դերի իրբեւ ըստրուկ պիտ՝ ամեն օր մեղ հետ վարուին ,  
Խնչպէս արին աղդաց ոմանց արեւմտեան հիւսիսային .  
Մի հաւատաք , ասում եմ ես , նրանց խօսքին ու օրէնքին  
Սնհաւատ են , անկրօն են ըստ օրինաց զըրադաշտին  
Դաւ են լարում , հնարք են ճարում տիրասլետել տիեզերքին  
Ընդդէմ խաչի , ընդդէմ անուան ջետոն մերոյ Քրիստոսին :

Եւ այս էլ ասեմ ձեղ , իմ սիրական որդեակ.ք ,  
Յաղկերտ կանչումէ ձեղ ի դուռըն անդ պահակ ,  
Այրուձին միատեղ , նոյնալէս և հետեւակ  
Մեր Հայոց զօրքերն դիմեն անդ միայնակ ,  
Առանց նախարարաց քաջ առաջնորդութեան  
Երթան պատերազմին ի Ճորայ , ի Քուշան .  
Այս դաւն է Վասակայ կամ թէ Վարադվազան  
Խոքհուրդ է տալի միշտ արքային , անպիտան ,  
Որ Հայոց նախարարք բաժնելով զօրքերէն  
Սնդօր , անօդնական չապատամբին Պարոիկէն ,  
Եւ այդ ինչ իրաւամք , կը հարցունեմ ձեղմին ,  
Ասէք ինձ , ինդրեմ բաժնեց ձեղ այրուձիէն .  
Ո՞չ ապաքէն Վասակ իր մտքումն է դըրել  
Զնջելով նախարարք կարենայ մեղ տիրել ,  
Եւ Հայոց աշխարհին իրան միայն տէր կոչել .  
Միթէ պէտք է տանինք և թողնենք նրան իշխել .

Զե՞լ եմ ասում , իմ նախարարք  
Զե՞լ եմ ասում , աղատանիք  
Եթէ մենք , դուք պինդ միանանք  
Կը սարսափենք մոդն ու արիք .  
Դու , իմ աղնիւ գարեղին ,  
Դու իմ տիրոջ քաջ որդին ,  
Ցաւադին է ցաւադին  
Թողնել մայր , քոյր առանձին .  
Սակայն հարկն է պահանջում ,

Տէրն մեր է վարձատրում.  
Ով իր համար մարտընջում  
Ով, իրան պէս զո՞հ լինում։  
Դու Ատովմ գընունի  
Որդի իմ սիրելի  
Հստ քաջ օրինակին  
Մեր սրբոյն Տրդատին։  
Դուք, Սեպուհ Ռատանի,  
Մանաճիհը Ռըշտունի,  
Ներսեհ Երուանդունի,  
Վարձաւոր Արծրունի,  
Տուէք ձեր ձեռներն ինձ,  
Խոստացէք իսկոյն ինձ,  
Պիտ' աղատէք  
Եկեղեցին,  
Պիտ' պաշտպանէք  
Հայոց աղդին  
Քաջալանջ  
Քաջութեամբ  
Նորասքանջ  
Զօրութեամբ,  
Այո՛,  
Թէ ո՞չ  
Եղէք  
Միշտ ողջ։

Ա. Դնիւը միասին մէ արէական Յայնով  
Ա. յո՛, այո՛, ի՞նչպէս թէ ո՞չ,  
Պատրաստ ենք մենք ամենքս ողջ,  
Յառաջն առնել բռնաւորին  
Հալածողին մեր սուրբ կըօնին։  
Ա. յո՛, այո՛, ի՞նչպէս թէ ոչ,  
Կերթանք և մենք ամենքս ամբողջ  
Մողպետներին արտաքս վանել  
Բաղինները քանդել աւրել։  
Ա. յո՛, այո՛, Ղեւոնդ, Խորէն,  
Օրհնեցէք մեղ հէնց այս ըստէն  
Մեր երկսայրի սուրն ու թուրը,  
Զընջեն նրանց ջուրն ու հուրը։

ԽՈՐԵՆ ԵՐԵՑ

Այս, իմ քաջ որդեակը, այս, աղասարարը,  
Զեք լինիր քաջ ասպետք և քաջ զօրավարք,  
Եթէ լոյս, եթէ յոյս ձեր հոգուն չեն շընջել  
Եթէ սէր և հաւատ ձեր սրառմն չեն դըրել.

ՂԵԽՈՆԴ ԵՐԵՑ

Օրհնեալ լինիք, օծեալ լինիք, Սամուելի օրհնութեամբ  
Արի լինիք, հրզօր լինիք Դաւթի մեծի քաջութեամբ.  
Տէր մեր ինքը փառաւորէ, քաջալերէ ձեր հոգին,  
Տէր մեր ինքը արիութիւն, զօրութիւն տայ ձեր բաղկին.  
Պատրաստ կացէք, մեր սուրբ կրօնին աստուածային զօրութեամբ  
Յուղի ընկէք վաղուայ օրն ամենքըդ էլ քաջութեամբ.  
Սուածն ելէք մեծ արքային Պարսկաստանի ատենին,  
Զդոյշ կացէք հրբապուրէն մոդպաշտամբն չաք դենին,  
Չընի թէ ձեղ ոմանց նըման պատրեն, խարեն, համոզեն,  
Որոդայժով իրանց կրօնին որսան տանին, դարձունեն,  
Մերթ ահ ու դող, աքսոր, պատիմ, տանջանք ու մահ սպառնան  
Մերթ յարդ, պատիւ, փառք, ատիճան, պաշտօն նշան խոստանան.  
Եթէ երբէք, այդ խօսքերով թաղաւորը ձեղ տանջէ,  
Եթէ երբէք այդ կերպերով թաղաւորը ձեղ պատոէ,  
Մի հաւատաք նըրա խօսքին, կեղծաւոր է կեղծաւոր,  
Զդոյշ կացէք նըրա դաւէն, նենդաւոր է նենդաւոր,  
Արիք որդիքս, յուղի ընկէք, Աստուած ձեղ հետ է, ձեղ հետ,  
Զարթիք արդիքս, յուշի բերէք այս երկիրն է մեր երդ, մեր երդ,  
Եկեղեցին ու դերդաստան, աղդայնութիւն, ընտանիք,  
Թող ձեղ լինին մի ապաստան, ժառանդութիւն, հայրենիք.  
Սէր հայրենեաց, սէր ընտանեաց թող ձեղ շնորհեն սուրբ պատէ  
Յաղդայ յաղդս ձեր սերընդոց անմահական է կըտակ.  
Արդ ուրեմն, խորէն երէց Աւետարան ու ժամադիր  
Պատրաստ արա վաղուայ համար, որ եղել ենք ժամադիր,  
Օրհնենք այժմէն եկեղեցուն քաջ զինուորաց և արանց  
Օրհնենք արդէն չայաստանւոյն մեր հայրենեաց պաշտպանաց,  
Արիք, քաջաղն մեր նախարարք, մերկացուցէք ձեր թրերը  
Արիք, մեծաղն աղատանիք արխացուցէք ձեր սրաերը,  
Այս սուրբ խաչով, այս սուրբ դրքով օրհնում ենք ձեր թուրն ու սուրբ,  
Այս սուրբ խաչն, այս սուրբ դիրքը լինին միշտ ձեր ըյօն ու թուրբ,  
Երթաք և դոք խաղաղութեամբ և Տէր Յիսուս ընդ ձեղ լինի,  
Երթանք և մենք խաղաղութեամբ և սուրբ հոգին ընդ մեղ լինի.

ՏԵՍԻԼ Բ.

ԳԱՐԵԳԻՆ, ԱՏՈՎՄ, ՄԱՆԱՃԻՀՅ, ՎԱՐՄ, ՆԵՐՍԵՀ, ՎԱՐՉԱԽՈՐ

ԱՄԵՆՔԸ ՄԻԱՍԻՆ

Դարեղին, յիրաւի՞քո մըտքումն ես դըրել  
Դու, մեղ հետ միասին Յաղկերտի դէմն ենել

ԳԱՐԵԳԻՆ

Ի հարկէ, միթէ դուք տակաւին չէք դիտել  
Որ վաղուց հետէ ես հաստատ ուխտ եմ դըրել,

ԱՏՈՎՄ

Դու էլ իմ գարեղին, դու էլ ես ուխտ արել,  
Մայր, քոյր, տուն տեղ անտէր և առանձին թողնել,  
Մոռանում ես, որ դու Տանն Արուանձտեայց  
Ազատական ցեղին մեծին Հայաստանեայց  
Մի միայն ժառանդն ու անդրանիկ որդին ես.

ԳԱՐԵԳԻՆ

Դուն էլ չես իմանում, որ ասում եմ և ես  
Վատ արանց տէրութեան անիրաւ օրէնքը,

ՎԱՐՄ

Նոյնպէս և ես նըրանց անարի դօրքն ու դէնքը,

ՄԱՆԱՃԻՀՅ

Իսկ դուք, ազատասի, ի՞նչ յանկի էք խորհում  
Միտք ունիք մեղ հետ դընալ Արեաց աշխարհում,  
Դէմ յանդիման կալ Պարսից Յաղկերտ արքային,

ՆԵՐՍԵՀ ԵՒ ՎԱՐՉԱԽՈՐ

Մենք, պատրաստ ենք վաղուց ըստ մեր հարց պատուերին  
Եկեղեցու ուխտին մինչի մահ հաստատ կալ,  
Կեանք, անուն, փառք, պաշտօն նըրա փառացը տալ,

ԳԱՐԵԳԻՆ

Է՛ր, ուրեմն այդպէս, ով իմ քաջ նախարարք  
Խորհուրդ էք անում այժմ ունայն, աննըպատակ:  
Ե՛ս, ի վաղուց անտի իմ մոքումն եմ դըրել  
Պարսից չար մոդերին մեր երկրէն դուրս հանել:

ԱՌԴ , ԵՐԺԱՌԱՆՔ , ՍԻՐԱԿԱՆՔ , ՅԱՂԺԵՆՔ ՄԵՆՔ ՄՈԴԵՐԻՆ  
Եւ ցոյց տանք աշխարհիս ողջ քրիստոնեայներին  
Մեր սուրբ Եկեղեցուն արիական փառքը  
Եւ՝ մեր Հայաստանեայց յաղժական պրակը։  
Այն , Աղատանի , իմկոչումն երկնային է  
Ու չի կատարելն ինձ անհընարին է։  
Փառք տամ քեզ Տէր Աստուած՝ որ դու ինձ ես ընտրել  
Քո ահեղ թշնամուն չարութեան դէմ դընել։  
Փորձիր իմ հաւատը , զօրացու իմ սիրտը ,  
Երկնային սուրբ պրակ կապիր իմ դւխիկը։

Ա.ՏՈՎ.Մ]

• • • • • • • • • • • • • Գարեղին  
Փորձանք ես պատրաստում դու մեր աղդի դըլխին։  
Թէեւ երկնային լոյսն ու Հայրենեաց սէրը  
Վառելով քո հոգին արել են քեզ քո տէրը ,  
Բայց՝ հոգուդ յուղմանցն ու աղատ կամացդ  
Սանձ ու չափ դիր մի վոքք , նըկատիր դիմացդ ,  
Որ նա ինքն է Յաղկերտ մոդերով պաշարուած ,  
Անհամար զօրքերով զէնքը ձեռին կանդնած։

Գ.Ա.ԲԵԳԻՆ

Ես , Ատովմ , նուիրել եմ ինձ հոգւով ու մարմնով  
Զինուոր Քըրիստոսի ինձ անել անվըրդով ,  
Գընալ Յաղկերտին մօտ ու դէմ յանդիման կալ  
Եւ Սուրբ Գիրքը նրան՝ բաց անել ու կարդալ ,  
Գուցէ ահ կամ թէ մահ , գուցէ հուր կամ թէ թուր ,  
Իմ դըլուխը տանին ու մարմինս անեն կուր։  
Փոքք է , Ատովմ այդ զոհն մեր սուրբ Եկեղեցուն  
Տեառն մերոյ Յիսուսի Որդուն Աստուծուն։

Ա.ՏՈՎ.Մ

Վայ , մեր դըլխին կընի , թէ՝ դու իմ Գարեղին ,  
Այդպէս անվըրդով ու այդպէս մոլեղին  
Դէմ ու դէմ կանդնիս դու այն կատղած արքային  
Մոդպետաց , Դենաղետաց և Որմըզդայ դէնին։  
Նրանք՝ քեզ պատառ պատառ , այն գաղանաց առջեւ  
Ողջ կերակուր կանեն կամ թէ զոհ և պարդեւ .  
Քաջ արանց բարքն այն է՝ որ իմաստուն լինին  
Ըզդաստ ու խելօք խօսք ու խոհեմ կերալ սորվին։  
Միթէ , դու Գարեղին , չես ուղում ինձ լըսել .

Ո՛չ, Առովմ, ոչ, հարկ չէ ինձ ուրիշ կերպ անել,  
Այլ, պէտք է, որ դիմեմ այն մողակետաց յառաջ  
Քարբառեմ համարձակ և կամ անդ քաջալանջ :

ԱՏՈՎԱԾԲՆՅՐ

Բայց, լու է, որ մարդու մի փոքր հանդարտ ու հեղ,  
ՎԱՐՍ

Բայց, պարտք էլ է, դիտենաս, դէմ կենալ և մեղ.  
Եւ լինել անվեհեր և լինել ախոյեան  
Ամեն քրիստոնէից մեծի տան թորդոմեան :

ԱՏՈՎԱԾ

Բայց, մահն էլ պէտք է, որ մենք ոչ ինչ համարինք  
ՎԱՐՍ

Ու երկնային թագին այնպէս արժանի լինինք

ԳԱՐԵԳԻՆ

Մենք, միայն նահատակ և միայն քաջ զինուոր  
Լինելով մեր ուխտին կը լինինք երկնաւոր :  
Տէր մեր ինքն է բայել մեղ երկնից դոները  
Տէր մեր ինքն է վարել մեր զդայուն սրտերը,  
Թէ սուրբ կրօն, լոյս հաւատ պաշտում ենք ամենքնիս  
Ցոյց էլ տանք մենք դործքով համօրէն աշխարհիս :  
Ո՛վ որ երկընչումէ վրտանդէն ու մահէն  
Վատն ու անարին է նա մեր մէջ ամենէն :

ԱՏՈՎԱԾ

Թէ քո անդին կենայն ամեն մի ըոպէն  
Կը բառնաս, գարեղին, քո հայրենի տանէն .  
Մեծ ցաւ է, դիտենաս քո հայրենեաց համար :

ԳԱՐԵԳԻՆ

Ա՛հ արիւնս եմ թափումնըրա կենաց համար :

ԱՏՈՎԱԾ

Յիրաւի, գարեղին մահն աչքու ես առել .  
Բայց, ես վախենում եմ դառն տաջանք կըրել :

ԳԱՐԵԳԻՆ

Մի վախենար Առովմ, Տէր Աստուած մեղ հետ է  
Նա պաշտպան է նըրանց, որ յոյսը դըրել է  
Միայն նըրա վրայ . . . . .

Բայց , միթէ՞ , մի քեզ պէս մատաղաս պատանի  
Երբ միայն ինքն իրան դըլխին կապաստանի  
Քաջութիւն կը լինի՞ նըրա այդ արածը :

ԳԱՐԵԳԻՆ

Ատովմ , ցոյց է տալի ինձ քո այդ ասածը ,  
Որ քո սիրտն ու հոգին սառելէ , սառել ,  
Բայց , իմ սուրբ ուխտն այն է վութալ ու ըշտապել ,  
Թողենք Տէր Ատուծուն հայր , մայր , քոյր և եղբայր  
Թէ լինելն նախարար և թէ տէր , աւագ այր :  
Ցաւ է ինձ , ով Ատովմ , ճշմարիտըն ասեմ ,  
Քեզ այդպէս սարսաված՝ ու անըղդայ տեսնեմ :  
Միթէ մենք մըկըրտուած մի սուրբ աւաղանում  
Մի հաւատ և մի կրօն սրտանց չե՞նք դաւանում :

ԱՏՈՎԱ

Իրաւ է , քո ասածն , ով Աղիւ Գարեդին ,  
Բայց իմ վիճակըն է կարի շատ ցաւագին :  
Շընորհք , սէր և հաւատ , լոյս և մըկըրտութիւն  
Տալիս են քո հոգուն մ'անվեհեր քաջութիւն :  
Խալ ես , մեղաւորը՝ զուրկ այդ սուրբ շընորհքէն  
Տաղնապումէ իմ սիրտ ձեր վրայ ամենքէն :  
Երբ մի մեծ , չար դիպուած և ահաւոր արկած  
Իմ յառաջն է դալի յանդէտս ու յանկարծ ,  
Կարծում եմ դըժուար է ու խիստ անհընարին  
Դէմ դընել ու յաղթել նըրանց չար հարուածին :  
Այս , ինձ մի պատիժ է , իմ մեղքերին համար  
Որոնցմէ վախում եմ իբրեւ մի մարդ վատթար +  
Բայց , Տէր մեր Աստուածըն , որոյ վրայ է իմ յոյս ,  
Քեզ օրինակ կարդեց ինձ էլ անտարակոյս :  
Հոգի , սիրտ տուիր ինձ , ով արի Գարեդին  
Ըղդում եմ երակումն դեռ արիւնս ուժդին :  
Արի դընանք , արի այն անօրէնին դէմ  
Եւ ճառ , քարող կարդանք նըրա սուտ դէնին դէմ .  
Եւ ամեն աղդ աղինք , թող լըսեն իմանան  
Եւ հոգւով և մարմնով մեզ հետ դան միանան :

ԳԱՐԵԳԻՆ

Փառք քեզ Տէր իմ Աստուած , դու մեզ միշտ ողորմիք  
Եւ մեր ուխտի վըրայ մեզ միաբան պահիք :

Եւ, Դու ովք քաջ Աստովմ վսաահ լե՛ր, ինձ լըսի՛ր,  
Վեհ հոգի, քաջասիրու ու անվեհեր եղի՛ր . . . .

ԱՄԵՆՔԸ ՄԻԱՍԻՆ

Բաւ է արդ, ովք եղբարք, ժամանակն է եկել  
Գընալ ու մեր ուխտին պատարագն անել  
Գընա՞նք, եղբարք գընա՞նք, մեր Քըրիստոնէից  
Դըրօշակն ազատենք մեր թըրշնամեաց ձեռից.  
Գընանք, քանդենք նըրանց ատրուշանն ու մեհեան,  
Յաղթանակ կանդնեցնենք մեր Տիրոջ սուրբ անուան։

Նախարարներն պատրաստ են գնաւած, Գայրեժինն ամենին յեպոյ պատրաստ գնաված՝ միւս  
կողմէն պատճեն էր մայրն ու փոյրը ներս են մասնաւած ու կանգնեցնաւած են իրան։

ՏԵՍԻԼ Գ.

ԳԱՐԵԳԻՆ, ՎԱՐԴԱՆՈՅՑ, ԵՐԱՆՈՒՀԻ

ՎԱՐԴԱՆՈՅՑ

Գարեղին իմ որդեակ, ուր ես դնում դուն էլ, ուր։

ԵՐԱՆՈՒՀԻ

Գարեղին իմ եղբայր, ումն ես թողնում քո քուր։

ԳԱՐԵԳԻՆ

ԱՌ, Վարդանոյշ մայր իմ, դու, քոյր իմ Երանուհի  
իմ հոգուս, Ամ սրախ դուք էք միայն տիրուհի։  
Կամ առէք այս հոգիս, կամ վատացրէք այս սիրս  
կամ թողէք, որ գընամ պաշտպանեմ հայրենիքս։  
Ըզդում եմ, որ ես միակ ծընունդ տան Սրուանձտեայց  
Պիտ ըլնիմ ազատիչ աշխարհին Հայաստանեայց։  
ՈՌ աստուած իմ Աստուած քեղ միայն յոյս և հաւատ  
Նուիրել իմ սըրտանց դու պահի՛ր ինձ հաստատ  
իմ ուխտին, իմ խօսքին և սուրբ Եկեղեցուն։  
Արդ, խօսի՛ր այժմ մայր իմ, քո հարազատ որդուն։

ՎԱՐԴԱՆՈՅՑ

ՈՌ, վայ ինձ, որդեակ, վայ ինձ, այդ ի՞նչ ասացիր,  
Հէնց, կայծակ և փայլակ իմ գըլիսին շողացիր։  
Միթէ ես, քեղ կեանք, լոյս նրա համար եմ տըւել  
Որ անըզդամ Պարսիկք կարենան քեղ զոհել։  
Տէր Աստուած, ութսուն տարի է այս, քեղ համար  
Հայոց աշխարհըն զոհ է անում անհամար։

Արշակն մինչ վերջին Արտաշէս վատ արքայն  
Անթիւ նախարարք ու աղատօրեայք կորան։  
Բանտերն ու բերդերն մեր պապերով լիացան  
Մայրեր ու հարսեր որբ սըդաւոր խեղճացան։  
Եւ քո հայրն, գարեգին հէնց եօթ տարի ամբողջ  
Բանտերում, աքսորում տանջուեցաւ ողջ ողջ։  
Քեզ միայն քեզ իմ որդեակ Աստուած նրուիրեց ինձ,  
Գըթա՛ քո որբ քեռ վրայ ու խնայիր և ինձ,  
Դառն արտասունքիս ու ցաւած սըրտիս նայիր,  
Աղերս, պաղատանք են քեզ համար, ընդունիր։  
Չոհիր կամքդ, զոհիր վառքդ, զոհիր և քո անուն,  
Պահիր կեանքդ, պահիր ցեղդ, պահիր և քո արիւն։  
Ո՞հ, դըժբաղդ եմ, դըժբաղդ, դու էիր միայն իմ յոյս  
իմ որդի, իմ հոդի և երկու աչքիս լոյս։  
Արդ խորհիր, գարեգին, որ քո երակներում  
իմ և քո պապերու քաջ արիւնն է եռում։  
Ճանաչիր, այդ արիւնն, որ Հայոց մեծացն է  
Մեծի տան Արուանձտեայց վերջին սերունդըն է։  
Մեր Հայոց աշխարհն ու մեր սուրբ Եկեղեցին  
Յարդ, պատիւ պէտք է տայ քեզ նման մեծ ցեղին։  
Ճանաչիր, ասում եմ, քո յանդուդն խորհուրդը  
Պահպանիր, խնդրում եմ, քո հոդու յուղմունքը  
Ո՞հ, սարսափ և սոսկում ուշքըս, միտքս են շուարում  
Երբ աչքիս առաջն այն տանջանքն են երեւում,  
Որ քեզ պէս բիւր քաջեր այն վատ արանց ձեռքէն  
Տանջուելով անխընայ զոհ եղան նրանց կըրքէն։  
Դրանց մէջն էր և քո հայր, ո՞հ, իմ սիրուն որդեակ  
Դրանց հետ միասին եղաւ սուրբ նահատակ։  
Ի՞նչպէս սիրու ես անում և դու այդ հասակով  
Այն վայրենեաց դէմ կալ միայն քո քաջ սըրտով,  
Նրանք որ հայհոյումեն, նրանք որ արհամարհում  
Մեր սուրբ Աւետարանն որ լոյս է աշխարհում,  
Պատիժ կըսպառնան քեզ, տանջանք տալ կը տան քեզ  
Մինչեւ կըօնդ չուրանսս ընաւ չեն խնայել քեզ։  
ԱՌԴ ինչով իմ որդի կը դիմանսս նրանց  
Կատաղի, մոլեղին ու անօրէն բըռնութեանց։  
Ոչ դունդ, ոչ զէնք ունիս, ոչ անյաղթ այրուձի  
Ոչ մի հզօր զօրութիւն, որ նրանց կիրքը սանձի։  
Ե՞կ, իմ սիրուն որդեակ, ինձ լըսիր և հաճիր,  
Այդպէս յանդընութիւն մի դէն դիր, մի՛ անիր։

Բաւ է մեր Աստուծուն մի մեծ համբերութեամբ  
Աղօթքով, մաղթանքով և սաղմոսերդութեամբ  
Սուրբ Երկիրապութիւն, սուրբ փառաբանութիւն  
Երդ, սաղմոս, պատարագ, ջերմեռանդ օրհնութիւն։

ԳԱՐԵԳԻՆ

Եւ նրա Աստուծութեան սուրբ մարտիրոսութիւն,  
Եւ Երկնային անուան քաջ արխնհեղութիւն։  
Մայր իմ, իրաւ է, ես քո որդին եմ մարմնաւոր  
Բայց դիտենաս այժմ, որ Քրիստոսի եմ զինուոր։  
Ոչ մի մարմնաւոր սէր, ոչ մի Երկնաւոր փառք  
Զեն կարող խափանել իմ խոստմունք և իմ սկարոք։  
Իրաւ է դու ես միայն իմ ծընող կենսատու  
Բայց ոչ թէ պահանջող քեղ միայն լինել հլու։  
Գիտեմ, որ հողեղէնք միմեանց համար են եղել  
Եւ բարեպաշտ ծնողք որդւոց համար են եղել,  
ինչպէս էլ և որդիք իրանց ծընողացն են  
Մի միայն մխիթարանք մի միայն ապաւէն։  
Բայց մեր սուրբ կրօնին մէջ, երբ մենք՝ բուն հողեղէնք  
Հաւատով ու դործով կը լինինք հողեղէնք,  
Տէր մեր Աստուծուն է մեր ամենքին հայրն, տէր,  
Տէր մեր Աստուծուն է պահանջող մեր կեանքն ու սէր։  
Ըզդում եմ, մայր իմ ըզդում մի հուր սրտիս մէջ,  
Որ գիշեր և ցորեկ վառւումէ միշտ անշէջ։  
Այս, մ'երկնային հուր է կամ լուսավառ հոդի  
Որ ոչ մ'երկրային տարր չէ կարող նրան յաղթի։  
Ի՞նչ կասես, դու քոյր իմ միթէ այս ըզդացմով  
Չի ծընա՞նք, չի սընա՞նք մեր դայեկին ձեռքով  
Միթէ դու էլ ինձ նման չես ըզդում այս սըրտումդ։

ԵՐԱՆՈՒՀԻ

Ո՛հ, Գարեգին իմ եղբայր, առ ինձ քո գրկումդ-  
Եւ ասա՛ ինձ, մի առ մի ինչ որ կայ քո միտքը,  
կարծում ես թէ վաղուց չեմ դիտել ես քո սիրու-  
Ոչ եղբայր, դու չես քննել իմ սըրտի խորունկը  
Որպէս զի գրաւէիր իմ ներքին խորհուրդը։  
Ահա՛, այժմ, Աստուծոյ և առաջն իմ ծնողաց  
Խոստովանում եմ, թէլ զուրկ եմ սուրբ շնորհաց,  
Որ նուիրել եմ ես էլ իմ կեանք, իմ կոյս հասակ  
Մեր հայրենեաց համար անել ողջ նահատակ։  
Վաղուց եմ հրաժարուել թագէն ու պըսակէն

Գրաւուելէ իմ հոգին երկնաւոր սուրբ վառքէն .  
Թող տուր ինձ էլ մայր իմ, թող որ Եկեղեցուն  
Դրօշակը ցոյց տամ ես ամեն Հայաստանցուն .  
Սուրբ քարող կարդամ ես մեր տիկնաց տիրուհեաց ,  
Ասեմ պատրաստ լինին զ’ահա ժամնէ հասած  
Մեր աշխարհը պաշտպանել և մեր կրօնն աղատել  
Մեր մարմնաւոր կեանքը նըրանց համար զոհել .  
Մի վարանիր մայր իմ, մի յուսահատիր այդպէս  
Չըկայ աշխարհիս մէջ Աստուծոյ սիրուն պէս .  
Այս, մի երկնային հուր է, որ Աստուած նրան կը տայ ,  
Որ մի սուրբ եռանդով իրան կը հաւատայ .  
Միթէ ես ու Գարեգինն մի մեծ մեղք ենք դործել  
Որ Աստուծոյ սիրով մեր սիրտն ենք սընուցել .  
Դու ես մայր իմ, դու ես մեղ այսպէս զարդացնողն  
Մեր հայրենեաց համար մեղ այսպէս պատրաստողն .  
ԱՌԴ մեր Եկեղեցին մեր հայրենեաց դրօշը չէ .  
Երբ այն վըտանդումն է մեղ աղատել պարտք չէ .  
Իրաւ է, որ ես քո միակ կոյս աղջիկն եմ  
Բայց իմ սեռին մէջ ես ամենէն կրտիճն եմ .  
Կը դընամ եղբօրս հետ Յաղկերտի դիմացը  
Կը վարուիմ հակառակ նրա անօրէն կամացը .  
Եթէ հուր և ջուր մեղ պաշտել տալ կամենայ ,  
Եթէ ահ և մահ էլ մեղ համար ըսպառնայ .

ՎԱՐԴԱՆՈՅԵ

Ա[ս], Տէր իմ Աստուած, այս ի՞նչ ժամաւ հասուցիր ինձ ,  
Քո աղախնուն հոգին արխացու, վայ ինձ .  
Չեմ կարող էլ կոռւիլ իմ հոգուս յուղմանց դէմ  
Չեմ կարող դէմ դընել մայրական սիրուս դէմ .  
Իմ պապերն ու իմ տէրը քո անուան համար Տէր ,  
Իրանց կեանքն ու վառքը զոհ արին քեզ միայն Տէր ,  
Կոյս էի ծնողազուրկ դու մխիթարեցիր ինձ ,  
Նախարարն Սըրուանձտեան Տէր և այր արիր ինձ ,  
Օրհնեցիր մեր սէրը, նուիրեցիր մեղ միմեանց  
Փառք տալով քեզ միայն սիրեցինք մենք միմեանց .  
Օրհնեալ է, դովեալ է քո անունն Տէր, իշխան  
Շնորհեցիր ինձ որդի, իմ անտէր տան իշխան .  
Օրհնելով իմ որդին պատուիրեցիր նըրան  
Հետեւիլ իր հօրը հարազատ լինել նրան .  
Քեզ միայն պաշտելու քեզ միայն սիրելու  
Եւ ըստ քո պատուէրին հայրենիք սիրելու .

Նա՝ իր մահուան ժամուն պատուիրանք տըւաւ ինձ  
իմ որդին քեզ զահել ուխտ և պարտք անեմ ինձ։  
Նա միշտ դրկին առած՝ իր միակ սիրուն որդուն  
Ասում էր անդադար թէ նըման քո որդուն  
Պատարադ անեմ նրան մեր հայրենեաց համար,  
ինչպէս որ դու արիր մեր փըրկութեան համար։  
Ահա քեզ, Աստուած իմ, ես մատաղ եմ անում  
ինչպէս որ Աբրահամն իր որդին քեզ անում։  
Սա, իմ հանդուցեալ տիրոջ և իմ արիւնն է  
Մեր Հայոց աշխարհին աղատութեան յոյսն է։  
Պահպանիր դու սըրան ամեն փորձութենէ  
Դեւի սատանայի մոլար փորձութենէ։  
Զօրացու սրա հոգին, արիացու սրա լեզուն  
Որ ափ ի բերան անի քո թըշնամու լեզուն։  
Գնա՛, դու որդի՛, գնա՛, Աստուած միշտ քեզ հետ է  
Նրա ապաւինողին նա ինքը միայն տէր է։  
Իսկ դու, իմ սիրական դուսար Երանուհի  
Դո՞ւ էլ ես կամենում լինել իսկ Սրբուհի,  
Ո՛չ, այդ յանդպնութիւն է և ոչ նահատակութիւն  
Պարտ է քեզ լինել ինձ մօտ մըխիթարութիւն։  
Եւ իմ տըխուր կենաց վերջին սեւ օրերում  
Պահպանես ինձ քո ժիր և հրզօր թեւերում։  
Մինչ հոգիս Աստուծոյ ձեռումը յանձնեմ ես  
Դու պէտք է իմ մահուան սեւ քողը վրաս ձգես։  
Ես կը մեռնիմ մին օր և դու այն ժամանակ  
Կերթաս քո եղբօր մօտ կը լինիս նահատակ։  
Իսկ այժըմ պէտք է մնաս դու իմ մօտ ըսվովիիչ  
իմ տըրատում և տըխուր օրերին միսիթարիչ։

ԳԱՐԵԳԻՆ (Մօրը նընկն ընդեւկ)

Ո՛հ, մայր իմ, մայր . . . տուր ինձ աջդ համբուրեմ . . .

ԵՐԱՆՈՒՀԻ (Նոյնպէս ըստին)

Ուրախ կաց մայրիկ իմ, ես միշտ քո մօտն եմ . . .  
Մի լար, մայր իմ մի լար . . .

ՎԱՐԴԱՆՈՅՑ (Թռուլացած)

Ո՛հ, որդեակ որդեակ, ի՞նչպէս դիմանամ ես . . . ,  
Դու, միայն ջէր, դու միայն իմ յոյսն ու կեանքն ես .

ՎԵՐՋ ԱՌԱՋԻՆ ՄԱՍԻՆ

# ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

Տեսարանն է ի Տիտոն, Պարսկական ճարտարութեամբ շինուած մի ապարանի դահլիճն, որոյ սիւնազարդ եւ գմբեթաւոր լուսամաներէն երեւում է քաղաքն ու ապարանը։ Դահլիճի մէջ տեղն է մի արքայական դահ, որոյ պատուանդանն երեք աստիճանով յատակէն բարձրացած է եւ երկու կողմէն թեւեր ունի թեւաւոր չորքուանի կենդանիք, դահի ամպովանին է մի սիրամարդ թռչուն, որ փետրազարդ տառունով ծածկել է դահի վրան, երկու կողմներէն կանգնեցուցած են մեծ դրօշակներ որոնց վրայ նկարուած են արեգակն ու թեւաւոր վիշապ։ Տիգաւոր եւ զրահաւոր զօրականք կամարների տակովը ման են դալի։ Սրբնաների ու թմբուկների ձայնն երգողների ձայնի հետ խառն ու միաբան իմաց են անում թագաւորի դալուստը։

## ՏԵՇԻԼ Ա.

ՄԵ ԳՈՒԱՆԻՇ ՊՐԱԿԱԿՈՒԹՅՈՒՆ և ԱՐԵՎԱԿՈՒԹՅՈՒՆ ԵՐԳԵԼՈՎ ԳԱՎԱՆ Են։

ԿԵՐՋԵՍ ԴՈՒ, ՄԵՐ ԱՐՔԱՅ ՊՈՐԱՎՈՐ,  
ՏԵՐ ԵՍ ԴՈՒ ԱՆԱՐԵԿԱՅ ՀԵՇԱՎՈՐ։  
ԲԱՐՁՐ ԵՍ ԴՈՒ, ԵՐԿՐԱՎՈՐ ՄԵՐԵՐԷՆ,  
ԾՆՈՒՆԴ ԵՍ ԴՈՒ, ԵՐԼԻՆԱՎՈՐ ՄԱՐԵՐԷՆ։

ՄԵ ԳՈՒԱՆԻՇ ՊՐԱԿԱԿՈՒԹՅՈՒՆ ԵՐԳԵԼՈՎ ՆԵՐԱՆ ԵՆ ՏՐԻՆՈՒՅ։

ԲԱՐԻ Է, ՔՈ ԳԱԼՈՒՍՈ, ՏԵՐ ԱՐՔԱՅ  
ԴՈՒ ՈՐԴԻ, ԱՍՏՈՒՃՈՒՆ ՈՐՄԸՂԴԴԱՅ,  
ԽԺԽԵՍ ԴՈՒ ԱՉԽԱՐՀԻ ՈՂՋ ԱՂԱՆՊ  
ՕԳՆՈՒԹԵԱՄԲ ՄԵՐ ԴԵՆԻ ՄԱՂԴԵՂԱՆՊ։

ԶԻՆՈՒՈՐՆԵՐԻ ԳՈՒՆԴԸ

ԿԵՐՋԵՍ ԴՈՒ ՄԵԾ ԱՐՔԱՅ ՍԱՍԱՆԵԿԱՅ  
ՀՐԱՄԱՅԻՐ, ՄԵՆՔ ՅԱՂԹԵՆՔ ԱՆԱՐԵԿԱՅ,  
ՄԵՐ ԴԵՆԻՆ ՕՐԵՆՔԸ ՆՐՐԱՆՊ ՄԱՆՔ  
ԼՈՅ, ԱՐԵՒ, ՀՈՒՐ և ՋՈՒՐ ՍԼԱՂՄԵԼ ՄԱՆՔ։

ՄՈԴԵՐԻ ԳՈՒՆԴԸ

ԲԱՐԻ Է, ՔՈ ԳԱԼՈՒՍՈ ՔԱՇ ԱՐՔԱՅ  
ԴՈՒ, ՈՐԴԻ ԼՈՒՍԱՎԱՌ ՈՐՄԸՂԴԴԱՅ  
ՊԱՏՈՒԵՐ ՄՈՒՐ ՔՐԻՍՏՈՆԵԿԱՅ ՈՂՋ ԱՂԴԻՆ  
ՀՆԱՊԱՆԴԻԼ, ՄԵՐ ԴԵՆԻ ՕՐԵՆՔԻՆ։

ԶԻՆՈՒՈՐՆԵՐԻ ԳՈՒՆԴԸ

ԿԵՐՋԵՍ ԴՈՒ, ՔԱՇ ԱՐՔԱՅ ԱՐՔԱՅԻՇ  
ՄԵԾ ԵՍ ԴՈՒ ԱՐԵԿԱՅ ՄԷՋ ԱՄԵՆԻՇ,

Տէր ես դու երան և տաներան  
Նըմանն ես մեր մեծի Որմըզդան

Մոգերի ԳՈՒԽԴԸ

Բարի է քո դալուստ, Տէր արքայ  
Դու որդի քաղցրաբուր Որմըզդայ,  
Արեւու նըման ես լուսավառ  
Աստուծոյ, անմահից հաւասար.

ՏԵՍԻԼ Բ.

Մահերն ու պիտուրիչ ժամի երկու կողմերը կանդինամ են: Թագաւորը մոխալեպան մոխալեպին ունաղեալին հետ միասին ժամի ու իր ժամի զբայ բազմամ:

ՅԱԶԿԵՐՏ

Ես, Յաղկերտ, արքայն արքայից, մեր Աստուծոյ մեծ օդնութեամբ  
Վեր կացայ, դընացի Մըծքին անյաղթելի մեծ զօրութեամբ:  
Մի ձեռիս հուր, մին ձեռիս թուր Յունաց աշխարհն դողացուցի:  
Արեաց ու անարեաց աղերն իմ անունով սարսեցուցի:  
Իմ շանթանման յարձակումին Մեծ թէոդոս կայսրըն Յունաց  
Իր երերուն դահին վըրայ ահն ու սարսափ սրտում մընաց:  
Մեծ ասպատակ սրվուեցի ես նըրա ամեն դաւառներում,  
Մեծ դանձ, մեծ աւար թողի ես՝ իմ զօրականաց ձեռներում:  
Հսպարապետըն Անատօլ Յունաց թէոդոս թոյլ կայսեր  
Անդէն կատարեց իմ ահեղ և անդըրդուելին իմ պատուէր:  
Մոլար Պարսիկ ոմանք, որոնք կայսեր քաղաքն էին անցել,  
Հրաման արի նըրան բըռնել և խկոյն իմ ձեռին յանձնել:  
Այսպէս, իմ մողպետք և դենապետք դուռում դոչում տարածեցի:  
Քրիստոնէից տիրոջ ճակատն դետնի հետ հաւասարեցի:  
Ի՞նչ էք ասում, իմ անունէն քրիստոնեայքը չե՞ն սարսափում,  
Իրանց ուխտէն այս դէնն ու այն դէն անօդնական չե՞ն սասանում:  
Ես եմ ձեղ հետ խօսողն այս տեղ, իմ պաշտօնեայք ճախակողմեան  
Ականջ դըրէք, ի՞նչ է ասում, ձեր մեծ արքայն դու Ասսանեան:  
Ե՞ս, հաւասար մեծ Աստուծոյ, ես դիւցազանցն եմ դիւցազն:  
Փառք և պարծանք և վեհ անուն պահանջումէ իմ մեծ աղդն:  
Իմ նախահայր Շապուհ արքայն Աստուծներէն խիստ սիրուածը,  
Յըղացել էր մի նըպատակ ըստ Որմըզդեան օրինացը,  
Որոյ համար Որմիզդըն մեր արեաց աղդին մեծ Աստուծը  
Ուժսուն տարի կեանք նըռուիրեց որ կատարէ իր ասածը:  
Նա՝ երկրիս վըրայ դիցն օդնութեամբ շատ բան շինեց, շատ բան արաւ,  
Բայց անմահից դասն անցնելով՝ շատ բան թողեց, շատ բան չարաւ.

Ա.յլ թող տըւաւ կրտակագրով իրմէն սերւող վեհ սերընդին  
գըլուխ տանել ամեն դաւով, տիրապետել տիեզերքին.  
Ահա ես եմ այն սերունդը իմ դիւցազըն նախահօրը  
թուրն ու հուրը ձեռներումըս, նըրա կամքը կատարողը.  
Ա.յն, ես եմ այն վիշապը, որ Արեւելքումն եմ ծընում  
Ողջ Ասիան, ողջ Եւրոպան իմ ոտների տակն եմ ձրդում.  
Ովկ կարող է իմ դէմ խօսել, ովկ կարող է ինձ դէմ ելնել,  
Սարսափում են չոռմայեցիք, չեն յանդընում ինձ դէմ դնել.  
Արդ՝ ուստի որ կասկածն ունէի ահա աներկիւղ եմ անտի  
Զօրք ժողովենք, ու գունդ կազմենք, տիրենք ամեն երկրի, աղդի:  
Չընջենք աղդերն ու աղինքը, ջընջենք կրօններն ու լեզուներն  
Սըմբենք մեր դենի մաղդեզը հաստատենք մեր դենն ու զէնքերն.

### ՄՈԳՊԵՏԱՆ ՄՈԳՊԵՏԸ

Քաջ խօսեցա՛ր, դո՛ւ, մեր արքայ, վեհ դիւցազըն քաջազն Արեաց,  
Անփոյթ եղի՛ր, քո կամքն արա՛, օդնում են քեղ Աստուածք Արեաց,  
ինչպէս որ մեզ երեւումէ, թէ վարուխ դու ըստ օրինաց,  
կը կատարուին քո խորհուրդքը, ըստ մեր դիտման և քո կամաց:  
Մեր Աստուածքը, մեր սլաշտապանքը տուել են քեզ մեծ տէրութիւն,  
Պարզեւումենք յարդ, պատիւ, յաջող փառք ու մեծ յաղթութիւն  
Արդ կատարի՛ր, դու նրանց կամքը, բարձիր ամեն աղդ, տէրութիւն,  
Զի մարմնաւոր բանի նըրանք չունին բընաւ կարօտութիւն:  
Եթէ դո՛ւ, մեր վեհազն արքայ, մեր այս խնդիրը կատարես,  
Քո տէրութեան աղդն ու աղինքը ի մի օրէն թէ դարձունես,  
Ամեն աշխարհ մողպաշտութեան ատրուշաններ էլ հաստատես,  
Ա.յն ժամանակ մեր Աստուածոց կարօտութիւնն կատարած ես:  
Ա.րդ, լըսիր ինձ, մեր քաջ արքայ, ասեմ ես քեզ, թէ ինչպէս դու,  
Մեր Աստուածոց, քո նախահօրն կրտակադիլն կատարելու  
ի՞նչ որոդայթ, ի՞նչ նենգութիւն պէտք ունիս դու դործածելու,  
Որ վախճանիդ ճարտարութեամբ կարող լինիս լինել հասու:  
Նախ, պէտք է որ, զօրք դումարես, խաղաղ դընաս անդ ի քուշան  
գունդ կազմելով այրեւձիէն նախարարաց աղատազնեան  
Տանես, փակես Պահ դըռնէն ներս ամեն զօրքն ու աղդ և իշխան  
Մինչեւ որ Յոյնք սարսափելով, քեզ ճանաչեն իրանց իշխան:  
Ա.յսպէս, երբ դու ամեն երկրի նախարարքը և իշխանքը  
կառնես կերթաս պատուէր տալով նըրանց կենալ այն աշխարհքը,  
կը կատարուին քո խորհուրդքը և Աստուածոց օրհնեալ կամքը,  
վերանալով վերջն ու վերջը Քրիստոնէից թիւր հաւատքը:

### ՅԱԶԿԵՐԸ

Քաջ խմացայ, խոհեմ մողպես, խիստ հաճոյ է ինձ քո խորհուրդ

Քեզ եմ տառմ, իմ զօրապետ, դընա խկոյն կաղմիր մեծ դունու, Եւ դու դենալետ դրիչ առ ձեռըդ, մի մագալախ սլատրատիր: Ի՞նչ որ տաեմ, շոտ ըշտառիր, և մի առ մի արձանադրիր: Ասա՛, « Արեաց և Անարեաց և այն ամեն աղդաց աղանց, » Որ տէրութեանս մէջ են ապրում, չընին երբէք օրինաղանց » Եւ ես նըրանց ահա կը տամ իմ ողջոյնը մարդուրութեամբ, » Թոնդ ողջ լինին, և ես ողջ եմ միայն անմահ դիցն օդնութեամբ », Ասա, « Ես նըրանց առանց աշխատ և նեղութիւն մի առնելու » Ելայ, դնայի Յունաց աշխարհ առանց արխւն մի թափելու: » Սիրով, յարդով նուաճեցի այն երկիրն ուր, ես ոոք դըրի, » Պատուով, փառքով, խաղաղութեամբ իմ երկիրը յետ դարձ արի: » Արդ, դուք այժմ միայն բարին մըտածելով՝ ուրախ եղէք, » Եւ իմ տաճ այս մեծ պատուէրն անմիջապէս կատարեցէք: » Ես մըտքումն եմ դըրել արդէն, խաղալ, դընալ դէպ ի քոշան » Ապահով եմ դից օդնութեամբ, լինիմ ես նըրանց տէր և իշխան: » Խալ դուք, խկոյն, երբ այս թղթովն իմ պատուէրը քաջ կիմանաք » Վաղ այրուձի կը դումարէք, յԱպար աշխարհ յառաջ կերթաք » Աքի այս տեղ, դու, զօրապետ, վեր կալ այս իմ հըրովարտակ իմ տէրութեան մարրղպանաց դըրկիր շուտով մի սուրհանդակ, Ասա՛, նըրանց խմայ անեն աղդաց աղանց իմ նըրպատակ, Որոնք իմ մեծ տէրութեան մէջ քրիստոնեայ են և հըրպատակ:

### ՄՈԳՊԵՏԱՆ ՄՈԳՊԵՏԸ

Այս, այդպէս, մեր քաջ արքայ, պէտք է վարուխ ըստ մեր դենին Տարադըրելով քրիստոնեայքը իրանց ուխտէն պէտք է դըրդուին: Ոմանք պէտք են կամ կտպանքով, կամ տանջանքով անդ վախճանուին Ոմանք պէտք են կողոպառելով անարդանքով խիստ չարչարուին: Հըրամայիր զօրապետացդ պընդադեսպան վաղ յուղարկել: Հայոց, Վըրաց, Լըմինաց կորդուաց աշխարհներէն զօրք դումարել Քրիստոնեայքն իրանց ուխտէն միանդամայն դըրդուել, քանդել, Եւ քաջ մոդպետ յուղարկելով՝ նըրանց միջում մեհեան կանդնել:

### ՅԱԶԿԵՐԸ

Անհոգ եղէք, դուք իմ մոդպետք կը յաջողինք մենք անպատճառ կը հալածենք քրիստոնեայքը, կը կործանենք նըրանց տաճար, Միայն թէ մենք պարտական ենք ի դործ ածել մի կեղծ հանճար Մոլորելու ոսկւով, խօսքով մի մեծ իշխան աղդավաճառ: Ես, այս մասին պատուիրել եմ Միհըրներակէ մարրղպանին, Որսալ, դրաւել փառքով, ոլառով Հայոց, Վըրաց իշխաններին, Եւ այժմ, դիտեմ, մեր կողմէն է փառամոլըն վասակ Սիւնին Հայաստանի մարրղպանն ու նախարարաց երեւելին:

Այս խօսութելն ասելով յետոյ Առաջաւորը դասնեն իջնուածէ և իր մոժութանելին և զբանանելին աղջուանելով քնուածէ : Զօրական+ և մոժերը ուեղ են բայց անուած նրան, Առաջնուած և արքինդ աժաւուած են, պատկաւոր մոժերն առ զբանաւոր զօրիւրն գոփուակի երդելով՝ աբեսարանեն ժաշուած են :

ՄՈԳԵՐԻ ԴԱՍԸՆ

Արի ես, Արքայ քաջ Սասանեան  
Ծընել ես ձիրքերով Որմըզդեան,  
Աստուածք քեզ տուել են տէրութիւն  
Մարդկանց մեջ սըմուելու մոդութիւն :

ԶՕՐՔԵՐԻ ԳՈՒԽԴՅ

Հրդօր ես, մեծ արքայ արքայից  
Հաւասար նրման ես անմահից,  
Աստուածք քեզ տուել են զօլութիւն  
Որպէս զի կանգնես դու յաղթութիւն :

ՄՈԳԵՐԻ ԴԱՍԸՆ

Գլնա՛ դու, արքայ քաջ, մեր երան  
Տիրե՛ դու աշխարհին տաներան,  
Կատարուին քո խորհուրդ վառառ  
Գործ դրուին քո պատուէր ահաւոր :

ԶՕՐՔԵՐԻ ԳՈՒԽԴՅ

Դիմե՛ դու, մեր արքայ քաջ, զօրեղ  
Եղիլ դու թշնամուն շատ ահեղ  
Նուաճիր, քուշանաց աշխարհքը  
Բարձիր քրիստոնէից աղանդը . . .

ՄՈԳԵՐԻ ԴԱՍԸՆ

Կեցցե՛ս դու, մեծ արքայ Սասանեան  
Դու պաշտպան մեր դենին Որմըզդեան,  
Ըսպիտակ ցուլերով զոհ արա՛,  
Գիտաւոր նոխազով դոհ արա :

ԶՕՐՔԵՐԻ ԳՈՒԽԴՅ

Կեցցե՛ս դու, մեր արքայ անվեհեր  
Հաստատիր մեր դենին մեհեաններ,  
Մոդակետքը, դենապետքը մեծարիր  
Պըսակով և պատով վարձատրիր :

Տեսարանն է կույտում և առաջացնում մի տարածություն ու մեծ վրան պետք է լինի :  
Վարանի եղանակն պետք է երեւայ Պահակ պահանը , կարաւանը և արժուական բնակութեանը :

### ՏԵՍԻԼ Պ.

ԳԱՐԵԳԻՆ ՄՈՒՇԵՂ,

Մուշեղ Ա. Գրտուղեալ զբաղացած , Գարեգինը վրանն է ճանաչ :

ԳԱՐԵԳԻՆ

Ով հայրիկ իմ Մուշեղ , մեր են մեր սուրբ հարքը

ՄՈՒՇԵՂ , ( Որո՞ք զբայ կանչնելով և զարժանալով )

Միթէ Ատովմանց վրանն ուր տեղէն ես դալիս  
Չես տեսել նրանց այն տեղ սուրբ սպաշտոն անելիս :

ԳԱՐԵԳԻՆ ( Տիրապէն )

Ոչ , հայրիկ իմ Մուշեղ , չը տեսայ նրանց այն տեղ :

ՄՈՒՇԵՂ .

Կարելի է , որդի , գընացել են մի տեղ .

Բայց , ինչո՞ւ , ասա՞ ինձ , որդեակ իմ Գարեգին

Քո ոլրտն անհանգիստ է և դէմքըն ցաւաղին :

Չընի թէ մեր տէր հարց քեզ մինակ թողելը

Քո մըտքին ձլդեցին քո դառըն վիշտելը :

Տես , որդի ա՞հ արեւն իր մօրն է մօտենում

Եւ մեզ Աստուծոյ փառք տալ է իմաց անում :

Ուր որ են մեր սուրբ հարք կըշտապեն աստ կը դան

Երեկոյեան աղօթքըն էլ մեզ ասել կը տան :

Ահա Ատովը ու վարս , Մանաճիհըն , վարձաւոր

Այս տեղն են դալի , որ այս ժամուս ահաւոր

Երեկոյեան սպաշտոնն ու երդ սաղմոս , մաղթանք

Ամենքըս միասին առ Տէր Աստուծ կարդանք :

### ՏԵՍԻԼ Պ.

ԳԱՐԵԳԻՆ , ՄՈՒՇԵՂ , ԱՏՈՎԾ , ՄԱՆԱՃԻՀՅ , ՎԱՐՍ , ՎԱՐՉԱԽՈՐ

ԳԱՐԵԳԻՆ

Ալիք , իմ սիրելիք , աղատ աղատ՝ որդիք

Եւ սուրբ Եկեղեցուն հաւատարիմ որդիք ,

Երդ ու սաղմոս ասենք ամենքըս միաբան  
Մինչեւ որ մեր սուրբ հարք կարաւանէն դառնան

ՆԱԽԱՐԱՐԻ ԵՒ ԱԶԱՏԱՆԻՔ ( Ա.ԴՆ+Ը ԹՅԱՅԻՆ )

ՄԵՇԻ մեր սուրբ հարքը կարաւանն են դնացել

ՄՈՒՇԵԼ

Ինձ թուի թէ տեարք իմ, անակընկալ արգել  
Ըստիպած լինի իրանց կարաւանում մընալ :

ԳԱՐԵԳԻՆ

Եւ մի կարեւոր բան մեր մասին խմանալ

ԱՏՈՎԱ

Ի՞նչ կարեւոր բան, իմ սիրելի գարեղին  
կարելի է յուսալ օդտակար մեր մասին :  
Երկու տարի է ահա Հոնաց աշխարհում  
Անդադար կըռւում ենք, անդադար աշխատում  
Ու դեռ եւս Յազկերտ՝ մեր բըռնաւոր արքան  
Մի քաղցրը աչք լինի չը դարձուց մեր վըրան :  
Շատ մարդկանց արձակեց, շատ մարդկանց վարձատրեց  
կարծեմ մեղ քրիստոնեայքս այս երկրումն բանտարկեց :  
Կը տեսնե՞ս գարեղին, որ անշուշտ մի դուժկան  
Մեր սուրբ հարք, կարւանում, մեղ համար խմացան :

ԳԱՐԵԳԻՆ

Ի՞նչ, իբրեւ թէ մենք միշտ այս տեղ էլ կը մընանք :  
Ուրեմն, սկզաք է որ նորէն մենք արիանանք  
Եւ յանուն Յիսուսի թըշնամուն դէմ կենանք :

ՆԱԽԱՐԱՐԻ ԵՒ ԱԶԱՏԱՆԻՔ ( ՄԵԿԱՅԻՆ )

Բայց մեր հայրենիքն էլ մեր մըտքումն ունենանք

ԳԱՐԵԳԻՆ

Ա՛հ, իմ Սուշեղ, Սուշեղ, արդեօք ի՞նչ տաղնապում  
իմ մայրն ու քոյքն, ինձ համար են դտանուում  
Ոչ մի լուր, ոչ մի թուղթ և ոչ մի լաւ համբաւ  
Չըստացան ինձմէն որ ըսվովուի իրանց ցաւ :

ՄՈՒՇԵԼ

Աստուծով, գարեղին ուշ կամվաղ վերջապէս  
կը դընաս դու ինքըդ նրանց վիշտը կըսփովիս :  
Ոհամ, տեսէք տեարք իմ, մեր սուրբ հարք դալիս ան

ԱՏՈՎՄ

Ո՞ւր են, մեղ տեսնում են

ՄԱՆԱՃԻՀԻ

Ո՛յ, ես տեսնում եմ նրանց, տխրադէմ և տրտում  
Ճեպելով, ըշտապով դէպի մեղ են դիմում։  
Տեսնում ես, Գարեգին, Սուրբ Գիրքը ձեռներնին,  
Որ պարզապի դունէն դէպի մեր կողմը կանցնին։

ԳԱՐԵԳԻՆ

Ո՛հ, արդեօք, ի՞նչ դառն ու բուռն հրաման կը բերեն  
ԱՏՈՎՄ

Ո՞ւր տեղէն, Գարեգին, մեր Հայոց աշխարհէն

ՎԱՐՍ

Ո՞չ, ճանապարհն անանց է . . . . .

ԱՏՈՎՄ

Ուրեմն կարաւանէն

ՄՈՒՇԵՂ

Շատ կարելի է, որ անօրէն արքայէն

(ՏԵՍԻԼ Ե)

ԴԵԿՈՆԴ, ԽՈՐԵՆ ԵԿ ՍՈՎԱԶԻՆՆԵՐԸ

ԳԱՐԵԳԻՆ

Ո՞ւր տեղէն էք դալիս, ով սուրբ հարք պատռականք  
Մեր երկնաւոր հովիւր և հրեշտակ պահապանք։  
Գալուստ ձեր բարի է, անշուշտ մի նոր համբաւ  
Մեր սուրբ ուխտի մասին ձեր ականջին հասաւ։  
Բայց, այդ ի՞նչ եմ տեսնում ձեր լոյս դէմքին վըսայ,  
Զեղ տեսնողն ով հարք սուրբ կը ցաւի և լողբայ։  
Այդ արտսունք ձեր աչքին այդ ցաւն ձեր դէմքին վըսայ  
Ցոյց են տալի մեղ թէ՝ որ անշուշտ մի բօթ կայ։  
Ասայէք, ի՞նչ որ է ձեր տրտմութեան պատճառ

ԴԵԿՈՆԴ ԵՐԵՑ

Ա՛յս, որդեականք, մեր չարեաց ոչ տեղ կայ և ոչ ճար։  
Եւ ողբանք մեր վըսայ, զի մեր անբաղդ ազգին  
Օրհասն եկել է ու տառապանքըն վերջին։

կարաւանումն էի , որդեակալը իմ սիրականը ,  
Ուր տեղ մողը և մողակտը և արեաց զօրականը  
Քարող էին կարդում ամեն քրիստոնէից  
Ասուածամարտ մողոց և Յաղկերտի կողմից .  
Նրանը , որ ասում էին Հայոց , Վրաց , Աղուանից  
Ծողէից , Կորդուաց ու Լըփնաց աշխարհներից  
Եկել են ծառայել Որմբղդեան արքային ,  
Պէտք է նորէն կը ուռուին ընդդէմ Հոնաց աղդին .  
Կամ յաղթեն , ասում էին , կամ յաղթուին նրանցին  
Կամ թէ ոչ այս տեղ մնան և տանջուին մեղմէ ,  
Այս հրամանն որդեակ իմ , թաղցրնումէ իր տակ  
Մի դաղսնի որոդայթ և մի չար նըպատակ .  
Նրանց յասուկ գիտմունքը , նրանց առաջին կամքը  
Բանտարկելէ այս տեղ ամեն քրիստոնէայքը ,  
Մինչեւ որ վերջապէս , տանջուելով անընդհատ  
Կամ լինին սպառապուռ կամ լինին յուսահատ ,  
Այնպէս որ իրանք մեղ , ասեն , այն ժամանակ  
Ուրանալ մեր կրօնն ու պաշտել և արեգակ .  
Ահա ձեղ , որդեակալը իմ , ինչ լուր եմ իմացնում .

#### ԳԱՐԵԳԻՆ

Այդ լուրն է , ուրեմն ձեր սիրաը ցաւայնում  
Տէր հայր իմ , իրաւ է , յաւ է մեղ այդ լուրը ,  
Բայց նաեւ դեռ եւս չէ շիջել այն հուրը ,  
Որ իմ սիրտն է վառում երեք տարուց հետեւ  
Համբերել տանջանքի , չերկընչիլ Յաղկերտէ .

#### ՂԵԽՈՆԻ ԵՐԵՅ

Տէր Ասուածն է խօսում քո սրբայն գարեղին  
Նա սպարդեւէ քեղ մեղ և մեր անբաղդ աղդին .  
Բայց և այնուէս պէտք է մեղ յիշենք մեր հայրենիք  
Պաշտամանենք և նըրա տարադիր լուղճ որդիք .  
Արդ արիք , որդեակալը իմ , աղերսենք Ասուածուն  
Որ ինք տայ փրկութիւն իր սուրբ Եկեղեցուն .

#### ԽՈՐԵՆ ԵՐԵՅ

Այս , հայր իմ Ղեւոնդ , առ Ասուած մենք կարդանք  
Ծընրադրութեամբ աղօթք և օրհնութեան մաղթանք ,  
Որպէս զի վաղուան օրն՝ թէ Յաղկերտ մեղ կանչէ  
Եւ մողակտաց առաջն մեղ վորձէ ու տանջէ ,  
Տէր Յիսուս Քրիստոս մեղ օդնական լինի  
Եւ Հոգուն սրբոյ շնորհք մեր հոգւոց մէջ շընջի .

Միթէ՞, հայր իմ խորէն և այդ մասին անդամ  
իմայ անել տուաւ այն անօրէնն անզգամ,  
Որ կարծումէ իրան հողւոյ տէր և Աստուած  
իր ասածն անողոք, հրամանը կատարուած։  
Ուրեմն ես՝ հէնց էդուց այն դիւաց արքային  
Եւ խաբերայ մոդուց դիւական ատենին  
Յառաջը պիտ' ելնեմ, բարբառեմ քաջալանջ։

Ա.ՏՈՎ.Մ

Դո՛ւ, Տէր իմ Աստուած, դո՛ւ ցոյց տուր մեղ քո ըսքանչ,  
Եւ աղատի՛ր մեղ քո չար թշնամիներէն

ՄԱՆԱՃԻՀԻ

Ես, սպասում եմ, Եղբարք, մի վործանք Յաղկերատէն  
Թէ որ մենք վաղուան օրն նրա առաջն որ ելնենք։

Վ.Ա.ՐԱՄ.ԽՈՐ

Ո՞հ, Աստուած իմ Աստուած, ի՞նչպէս նրա դէմ դընենք  
Եթէ չար քեղ համար խօսելու որ լինի։

Վ.Ա.ՐՉԱ.ԽՈՐ

Հապա մեղ մեր կրօնէն դարձունել յանդըգնի  
Ու լուսնին, արեւուն մեղ բըռնի պաշտել տայ։

ՄՈՒՇԵԼ

Դո՛ւ միայն Տէր, դո՛ւ միայն մեղ նայի՛ր ու դժա՛.

Դ.Ե.ԽՈՆԴ ( Ա.Հ.Հ.Ա.Բ.Ա.Բ. )

Մի՛, որդեակալք իմ, որդեակալք, մի՛ վհատիք այդպէս  
Զըկան կարաւանում անվախ հողիք ձեղ պէս,  
Ձեղէ հիմա մընում մեր ուխոը պաշտպանել  
Եւ պահակումն եղած Հայոց զօրքն աղատել։  
Քանի անդամէ որ կոխներում էք մըղլում  
Եւ նրանց հետ յաղթելով՝ մեծ փառք էք ձեռք բերում։  
Ո՞վ էր ձեր պաշտպանը, Տէր Աստուած ինքը չէր,  
Ձեր հողուն բարբառին նա ինքը լըսում չէր։  
ԱՌԴ, արիք իմ որդեակալք, նորէն նրան մենք դիմենք  
Մեր աղօթքն ու աղերսն բարձրածայն նրան ուղենք։

Ա.Հ.Խ. Ժաման ժնիան վրայ ընկնելով բաղկարարած և ժլեանաց սկսում են աղօթք  
անել երժելով։

Ո՞վ Տէր Աստուած, երկնի և երկլի,  
Լեր մեղ ողորմած և յոյս մեր սրբակ։

Դու , լոյս ես լուսոյ և շնորհ.ք շնորհաց  
Դու մեղ զօրաց կալ ընդդեմ շարեաց :  
Ո՞վ Աստուած սիրոյ քեզ են.ք աղաչում  
Ուժ տուր մեր հոգւոյ կալ պինդ մեր կրօնում  
Փրկեն.ք հայրենի.քն ու Եկեղեցին ,  
Որ քո թրչնամի.ք ողջ կեղեքեցին :  
Աստուած , մեր Աստուած , Տէր ես դու տէրանց  
Լուր մեր ըղթացուած , Տէր կաց հայկալանց  
Մեն.ք ասու են.ք Եկել մեր հայրենի.քէն  
Տանջան.ք , ցաւ կըրել քո ոստիներէն :  
Ո՞վ տէր Աստուած մեր ամենակարող  
Տուր մեղ մի սուրբ ոէր մեղ միմեանց կապող ,  
Տուր խաղաղութիւն աղղաց և աղանց  
Եւ աղաստութիւն աղղին հայկալանց :  
Ո՞վ հայր Երկնաւոր ողջ տիեզեր.քին  
Դու լե՛ր դատաւոր մեր հալածողին :  
Դու տուր յարութիւն հայրենասիրաց  
Աղասել մեր տուն թրչնամն ձեռաց :  
Ո՞վ տէր զօրութեան դէտ հոգւոց , մըսաց  
Տե՛ս մեր դերութեան և լե՛ր մեղ դըմած  
Բաց մեղ Երկնից դուռն ու բաշխի՛ր մեղ ոէր  
Որ փըրկեն.ք մեր տունն ու մեն.ք լինեն.ք տէր :

### ՆԵԽՈՒԴ

ԱՌԴ , բաւ է , որդեակ.ք իմ , դընան.ք էլ մեր վըրան  
Աստուած , որ յերկինս է կը նայի մեր վըրան .  
Գընան.ք ու մի վոքը կանդ ու հանդիսաւ առնեն.ք  
Սուրբ գըր.քով մեր հողին պինդ անվեհեր անեն.ք \*  
Եւ թէ որ Յաղկերտ ին.քն էդուց իր առենում  
Նորէն Յիսուսի դէմ էլ լինի դանդաշում  
Տան.ք , որդեակ.ք իմ նրան մի արի պատասխան  
Գուցէ մեղ աքսորէ ի խուժ կամ Սաղասան :

### ԱՄԵՆՔԸ ՄԻԱՍԻՆ

Այն , հայր մեր Ղեւոնդ , այժմ դընան.ք մեր վըրան  
Աղաչեն.ք Աստուծոյ որ լինի մեղ վահան ,  
Երբ էդուց Յաղկերտին կը լինի.ք մեն.ք ներկայ :

ԳԱՐԵԳԻՆ ( Խնդի էրան )

Ի՞նչ որ պիտ' ասեմ ես այս սըրտումն պատրաստ կայ :

Ամենավաճառ մատուցած էն :

Տեսարանը դուրս է և ներկայացնուած աշտազոյն վարաբնակուած մի սրան, երկու կողմեն սահմալով դուրս է և ցածր գուանելը, ուսոր պատղեն ճոփելը պիտի է ներս մտնեն, մէջ ուեղն է մի երեխուանի վաստարան, որոյ մէջ մի կորմիր բաց է դւժը լուսած անդադար, պատերի վրայ նկարուած են զբարաշատական դեմք նշաններ, վեշտուներ, հրեշներ, ուստեղ, արեւ և լուսին էւայը :

## ՏԵՍԻԼ Զ.

ՄՈԳՊԵՏԱՆ ՄՈԳՊԵՏ, ԴԵՆՊԵՏՔ ԵՒ ՄՈԳՔ (ՄԵ-ԵՐ հայութ արածայր գորակիներով)

### ՄՈԳՊԵՏԱՆ ՄՈԳՊԵՏԸ

Արիք, մեր անմահ դից խմաստուն պաշտօնեայք  
Մի խորհուրդ անենք աստ դեռ եւս չեղած այդ .  
Զի արարիչըն մեր հըրասիւռ արեգակը  
Ուր որ է, ցոյց կը տայ իր հրախայլ կերպարանքը ,  
Եւ մեր քաջաղն արքայն, ինչպէս իր սուրբ պարտքն է  
Ուր որ է կըշտապի կը դայ պաշտօն կանէ .  
Գիսաւոր նոխաղներ և ըսպիտակ ցուլեր  
Տիեզերաց լուսին կը մատուցանէ զոհեր :  
ԱՌԴ, ժամէ հէնց այսօր ասել մեր արքային ,  
Որ ըսկսի աշկարա յայտ առնել բանակին  
Թէ ինքն այսուհետեւ ամեն առաւօտեան  
Զոհ պիտի նուիրէ լուսնին, արեգակն :  
Ուստի իրանք էլ շուտով թող հիմա պատրաստոին  
Ամենքը միասին մեհեանում հաւաքուին  
Հայք, Վիրք, Ծօդեայք, Աղուանք, Լըմինիք, Կորտիք և Գուտք  
Երան և տաներան ամենքն էլ միադոնդ  
Գան ու մատուցանեն մեծ պաշտօն կըրակին  
Եւ հաստատուն մընան մեր ճշմարիտ դենին ,  
Մոռանան իրանց կրօնն ու մոռանան իրանց աշխարհքը  
Որպէս զի վերանայ քրիստոնէից աղանդը :  
Է՛, ի՞նչ կասէք դուք, ո՞վ Որմըդդայ պաշտօնեայք  
Միթէ ժամ չէ՞ հիմա հալածել քրիստոնեայք :

ՄՈԳՊԵՏԱՑ ՄԻՆԸ (Մէնչեւ հետին խոնարհելով)

Քո խորհուրդը շատ քաջէ, ո՞վ տէր մեր քըրմապետ  
Միայն թէ հարկէ որ խորադէտ մի դենապետ  
Նուրբ, ճարտար դիտութեամբ համոզէ մեր արքան  
Թէ քրիստոնեայքն ու թէ ամեն տաներան

Մերթ երեսպաշտութեամբ պաշտպանէ , պարզեւէ  
Մերթ ըլոնաբարութեամբ չարչարէ անարդէ :  
Մինչեւ որ վերջապէս ժամանակ չանցկացած ,  
Եւ այս աշխարհներում տարագիր բանտարկուած ,  
Կամայ կամ ակամայ դաղտնի կամ համարձակ  
Պաշտեն ջուր և կըրակ , պաշտեն և արեգակ :

ՄՈԳՊԵՏԱՅ ՄԻ ՈՒՐԻՇԸ

Ես իմ վիզն եմ առնում այդ նրան խօսելու  
ինչպէս որ միշտ էլ ես էի նրան խըրատու :  
Քաջ գիտեմ , ինչ պէտք է ասել մեր արքային  
Եւ վարուիլ տալ նրան ըստ մեր դաղտնի դաւին :  
Բաւ է նրան համոզել թէ ինքն անմահից է ,  
Մարդկային բնութենէն գերադոյն էակ է :

ՄՈԳՊԵՏԱՆ ՄՈԳՊԵՏԸ

Ժամէ , արդ , ժամէ , ով իմ դենպետք և մողպետք  
Զի ահա այդ եղաւ Աստուածոյ զոհ են պէտք :  
Գընանք դէպի մեհեան մի պաշտօն կատարենք  
Եւ մեր դիտման համար դից պարզեւ նուիրենք :

Այս մշջոցն յասկարժ նշնչի և սրբէ յայներն խառն երթեցողներն յայնի հետ մոգութուն  
— պենալետը կը շուարեցնեն , որոնք ապօբուածնին վարաբարները բաց անելով կը պես  
նեն արեժական ծագուածը լեռներն ուսմանին : Արդուշան որ խորհրդապատճեն եր եւ  
դաշ կը լինի մի ընդարձակ պահլիճ սկանավարդ և գմբելնաւոր , Աստաւորը զօրականներն  
և նախարարներն ընկերութեամբ յէս քըսա նապատ ժակն է , զինուորներն գունդը նոյն  
երժն են երդուամ , որն որ առաջին գումարին մէջ երդուամ էին : Մոգութուն նոյնական իրանց  
կանքնամ պեղն նոյն պատասխանը կը պան : Յէտոյ մոգութուն լուսենալու իրանց երեւը  
դէպի արեժական դարձուածնելով՝ սկսուամ են իրանց ժլութ գլուխն զարնել և երիշրտել  
արեժական , Աստաւորը պահլիճն է մասնամ , Երթերը շարուանակառամ են նոյնական նշնչի-  
ներն արքնաներն եւ ածուամ , մոգութուն արեղնալու դուրս ժամանակ անշարժ են  
մասնամ , Աստաւորն եւ նոյն արարողութեամ կատարուամ է և յետոյ գնուամ իր գահին վըսա  
նապատճեն է :

ՏԵՍԻԼ Է :

ԱՌԱՋԻՆՔ , ՑԱԶԿԵՐՏ , ԶՈՐԱԿԱՆՔ , ԶՈՐԱՎԱՐՔ ԵՒ ՀԵՌՈՒԱՆՅ ԿԱՐԱԽԱՆՅ

ՄՈԳՊԵՏԸ ԽՐԱՏՏՈՒ

Արքայ քաջ , գու անմահ որդին մեր Որմըզդայ  
Ներիր ինձ , պատմեմ քեզ թէ ինչ երադ տեսայ :

Տեսայ , որ քաջ արքայ , դու սպիտակ ձիու վրայ  
Ասո և անդ լուսնի մեջ՝ անում էիր ելեւէջ  
Մի սպիտակ աղաւնի վընջաւոր դըլխանի  
կանգնեց քո ձիու դըլխին , թըռթըռաց պաշեց ձին  
կանքնեց և քո ուսին , դըրաւ և քո դըլխին  
Մի ակնեղէն սըրսակ , որ էր դից անմահ թագ :  
Այս էր քաջ արքայ իմ , տեսած երաղըն իմ  
Եթէ քեզ փափաք է իմանալ թէ ի՞նչ է  
Պարտ է ինձ ասել քեզ թէ դու անմահից ես  
Ծնունդ նուիրական , մեր դիյն անմահական :  
Արդ , դու ով արքայ քաջ , երան և տաներան  
Ասա՛ քրիստոնէից իրանց կրօնն ուրանան :  
Զի ահա մեր դենում դու այնպէս ես երեւում  
Մեծ յաղթող մեծ իշխան մեր բոլոր աշխարհում :  
Յունայ զօրութիւնը քո առաջն ընկճեցաւ  
Հոնայ թագաւորը նեղ վիճակումն ընկաւ :  
Հուումք սարսափում են քեզմէն ով քաջ արքայ  
Խայլընդուրք դողում են երեւիլ ի Ճորայ :  
Ոչ ապաքէն արքայ , այդ յաղթանակները  
Քեզ են միայն սպարդեւում մեր տէր աստուածները :  
Արդ ժամանակն է այժմ առիթը մի վասներ .  
Ամեն քրիստոնէից տուր քո ահեղ սպասուէր :  
Որ անդէն այսօրէն հէնց քեզ հետ միասին  
Այն ամեն քրիստոնէայք որք են քո բանակին  
Չիաւոր , հետեւակ զօրականք , զօրավարք ,  
Աղաս , աղասորդիք , ոստանիլ , նախարարք  
Գնան ամենք , միասին կըրակին զոհ անեն  
Ծնդունեն մեր օրէնքն ու մեր դենը պաշտեն :

### ՅԱԶԿԵՐՑ

Ես անմահից կարդից և արքայ արքայից ,  
Դիցն օդնականութեամբ յաղթեցի քաջութեամբ  
Հոյոց , վըրաց և Լըփնայ , Աղուանից և կորդուաց :  
Յունացմէ ուխտ առի , Հոնքն էլ նեղում դըրի ,  
Տէրութիւնս խաղաղ է՝ յաղթութիւնս կատար է ,  
Փառքն իմէ երկընքից և աղդն իմ դիւցաղնից :  
Արդ ուրեմն ով մողպետք և դուք իմ , ով գենպետք ,  
Այժմէն պատրաստ կացէք , դից զոհեր մատուցէք  
Ահա ձեղ նըշաններ , դոհարեայ սըրսակներ  
Զեղ համար սպարդեւներ , աստիճան պատիւներ :

Հընչուին սրինգները , թող ածուին թրմբուկները ,  
Նախարարք , դօրականք , այրուծի հետեւակք  
Ամենքն էլ միասին թող այս տեղ խումբ լինին ,  
Ըսպիտակ ցուլերով , գիտաւոր նոխազով  
Յաճախուին զոհերը , պաշտուի մեր դենը :  
Մեր ամեն ատրոշան և ամեն մեր մեհեան  
Կատարեն մեծ պաշտօն և պահեն այսօր տօն .  
Աւետիք զրկուի և իմաց թող տրուի  
Արեաց և անարեաց .քըրիստոնեայ աղղաց :

թուաբառով այս հրամանի վրայ Երգել ասելով և արքաներին ածելով բոլոր արեայ և անորեայ նախարարներին և զօրավարներին պատուի, Քրիստոնեական կարասաններին էլ իրանց իսականութ և պաշտոնութ ամենին էլ ներ էն մարդուած, որոնց մէջ նաև Պարեգինն, Ապուլս, Աւալս, Մանուչինը և այլ նաև Ղաւանից և Խորենի Երեսները :

## ՅԱԶԿԵՐԸ ( Եպիսկոպությունների լրացք )

զեղ եմ ասում ով Հայք, ձեղ եմ ասում Աղուանք  
զեղ, Վերք և Կորդեայք կամակոր քրիստոնեայք  
Մինչեւ Երբ դուք այդպէս մոլորուած մարդկանց պէս,  
Գընում էք ետեւէն խորշելով մեր դենէն  
Մի տանջուած և խաչուած, մի մեռած և թաղուած  
Լոկ մարդու աղանդին ու մոլար խըրատին.  
Ինչո՞ւ դուք միշտ այդպէս խուլի և կուրի պէս  
Զէք լըսում, չէք տեսնում, որ երկնում և երկրում  
Նա, որ չի սընանում մաղդեզանց օրէնքում  
Հարամանէն խաբուած ու բաժին է դիւաց.  
Սուտ է, որ ասում են թէ Աստուած երկրնքէն  
Այս աշխարհս եկաւ և կընոջմէ ծընաւ.  
Սուտ է, սուտ այն ասածն թէ մարդկանց Աստուածն  
Տանջուելով է խաչուած, մեռնելով է թաղուած.

ԳԱՐԵԳԻՆ (Բարձրավայրական մշտական գործերի դաշտ)

Արքայի քաջ, սըխալ ես, չես դիտում ի՞նչ կանու, Ուստի ես իմացել մեր Տիրոջ վրայ խօսել Այդպիսի ծուռ բաներ, որ քեզ բնաւ չեն վայլեր.

## ՑԱԶԿԵՐԸ ( Uժեամայնութեամայնք )

իմ առաջն կարդացին ձեր մոլար կը բօնին  
գիրքն ու . . . . .

ԳԱՐԵԳԻՆ (Համարչականիւամբ)

Ո՞վ արքայ, ինչու միայն կարդալ տուիր տեղն այն  
փոքր յառաջ կարդալ տուր լըսիր նրա հրաշալուր  
Յարութիւնն ու յայտնումն, վերն երկինք վերացումն  
Նստելը Հօր աջ կողմումը նորէն դալու խոստումը  
Առնելով ամենուն հրաշալի յարութիւն  
Արդար իրաւունք և համառօտ հասուցմունք

ՑԱԶԿԵՐՏ (Բարձրական և հետեւական)

Այդ ամեն սըստութիւն է և այդ արածդ լրբութիւն  
ի՞նչպէս, դու պատանի, որ մի Հայ ես անարի  
Յանդընում իմ առաջը

ԳԱՐԵԳԻՆ (Առանց շինուալու)

\* \* \* \* . . . Քարողել նրա սքանչը  
Այն, կը յանդընիմ ես, թէ դու հաւասում ես  
Միայն նրա տանջանքին և ոչ ահեղ դալըստին :

ՑԱԶԿԵՐՏ (Բարձրական)

Այ, դու ծնունդ Հարամանու . . .

ԳԱՐԵԳԻՆ (Բարձրական)

Հաւատա՛ և դու . . . Որդուն Ասուծու :

ՑԱԶԿԵՐՏ (Առագական)

Ո՞վ դահիճք և զինուորք, կապեցէք դրա ձեռն ու ոտք

ԳԱՐԵԳԻՆ (Զարդարելին)

Փառք քեզ Տէր իմ Աստուած, եղիցին կամք քո . . .

Դահճին մնը նրա բերնին է ուսկ

ԴԵՒՆԴԻ ԽՈՐԵՆ (Առաջնալու Դարձնին)

ԴԵՒՆԴԻ

Լեր որդի նահատակ, այժմ երկնից հրեշտակը  
Երկնաւոր սլըսակին . . . . . . . . . .

ԽՈՐԵՆ

\* \* \* \* . . . Արժանի քեզ արին  
Լեցցես դու Գարեգին . . . . . . .

Մէ պէսաւոր սուրէ և շուացնուայ երեցներէ ժլուին  
ՅԱԶԿԵՐԸ ( ՄԱԼՔԻՆ )


Չինուորք , մերկացուցէք դրան հայրենի տէրութեան  
փառքէն ու պատուէն ու ծիրանի վերարկուէն :

ԱՏՈՎՄ , ՎԱՐՍ , ՄԱՆԱՃԻՀՅ

Եւ բուլը +ընսունեայ+ սարսափած էրանց երեւը մէ կողմ շուաւու ուալով գլուխ գլուխ են :

Վայ մեր դրլիսին , գարեղին , ի՞նչ տանջանքներ դառնաղին  
Պատրաստ արիր մեզ համար . . . . . . . .

ՎԵՐՋ ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍԻՆ



# ՄԱՍՆ ԵՐՈՈՐԴ

Տեսարանն է մի ահագին եւ անառիկ բերդի մէջ, մի մութ եւ տըսուը բանտի խոռոչը, ուր տեղ Գարեգին ձեռն ու ոտքը շղթայակապ եւ վրան գլուխը պատուած մի փթտած անկողնու առջեւը ընկած, մերթ հառաջում է խորոց հանելով, մերթ մխիթարում իրան փառք տալով Աստուծուն, Բանտի խորշածեւ ձեղունէն մի լուսոյ սիւն Գարեգնի, ճակատն ու լանջքը լուսաւորում է: Բերդապահն զօրականի հագուստով դէպի մի անկիւն կանգնած ապուշ ապուշ նայուածքով հիանում է Գարեգնի վրայ ու ինքն իրան էլ վնթվընթում:

## ՏԵՍԻԼ Ա.

ԳԱՐԵԳԻՆՆ ՈՒ ԲԵՐԴԱՊԱՀ

ԳԱՐԵԳԻՆ

Ողորմի՞ր ինձ Աստուած, տո՛ր ինձ համբերութիւն  
Որ քո փառաց համար տանիմ այս նեղութիւն:  
Այս բանան ու այս շղթայն, որ ինձ պատիժ են տուեր,  
ինձ համար, դիտենան, պարդեւ են ու նուէր:  
Այո՛, պարդեւ են, պարդեւ, և պատիւ և պարծանք  
Քեզ համար Աստուած իմ, մեռնել կամ կրել տանջանք:  
Սիրել քեզ, ով Տէր իմ, սիրել և հայրենիք,  
Սիրել ազգ և ընկեր, սիրել և ընտանիք,  
Քո առաջին սպասուէրն է առաջին օրէնք  
Տո՛ր ինձ այդ կատարելու քո շնորհք և օրհնենք:  
Տո՛ր ինձ, տէր իմ, տո՛ր ինձ քո շնորհ և օրհնենք.  
Որ քո թըշնամու դէմ ինձ անեմ մ'օրհնեալ դէնք,  
Զի ահա այս բանտումն ու իմ այս վիճակումն  
Փորձում են իմ հոգին իմ սուրբ լոյս հաւատումն:  
Թէ դուցէ ուրանամ ես քո սուրբ անունը  
Թէ դուցէ մոռանամ ես քո ահեղ դալուսոր,  
Թող թափեն իմ արխոնը, թող հանեն իմ հոգին  
Թող լինիմ ես մի զոհ իմ տարաբաղդ ազդին  
Միայն թէ, դու, Տէր իմ պահիր իմ հայրենիք  
Քո սուրբ Եկեղեցին և իմ միակ խեղճ մայրիկ  
Ահ և իմ խեղճ քուրիկ:

ԲԵՐԴԱՊԱՀ (Առանցքն)

• • • • • Գըթայէք սրան ով Դիք:  
Զ'ահա երկու տարի է, որ այս պատանին

Չուրկ լուսնէն , արեւէն , եղելէ խաւարին  
կենդանի նահատակ և շընջաւոր հոգի  
Մեղ համար նախատինք և արեաց մեծ աղզի :  
ի՞նչ բաներ են որանք , որ Յաղկերտն է անում  
Միթէ մեր Դիք այսպէս զոհեր են կամենում :

Ճայ գուշը Գորեթնին , որ Քըւիս Աւակ Վեհ Յիշած , արդաւուն է նախաւ :

Այսպէս մի պատանի , որ կարծես հրեշտակ է ,  
զէտք է որ այս բանտում այսպէս մի կեանք վարէ ,  
Ահ երկնային հոգի ի՞նչ էր քո մեծ յանցանք  
Որ տալիս են քեղ մի այդպիսի դառն տանջանք :  
Միթէ այդ վեհ հոգին , որ դու քո մէջն ես կըում  
քեղ կարող էր դըրդել , որ դու այս մեր երկըում  
Զար խօսում , վատ դործում լինէիր այն մարդկանց  
Որոնց համար աղօթք ես անում առ Աստուած :  
Միթէ դու , ով մատղաշ և անուշ պատանի  
Դիքն որք արել են քեղ ըզգայուն , լեզուանի  
Մի վատ բան խօսեցար մեր արի արքային  
Եւ մեր դից պաշտօնեայ մողպետան մողպետին ,  
Որոնք քեղ այդ կերպով չարաչար տանջում են :  
Ասա ինձ , պատանի ինչո՞ւ քեղ դըրկում են  
Լուսնէն և արեւէն . . . վահ , ահա զարթեցաւ

ԳԱԲԵԳԻՆ ( Առանց գետակը բերդապահնեն )

Վայ ինձ . . . քանի՛ դառն է . . . այս իմ ցաւ  
Դառն է , դառն , այս բանտում յիշեմ ես իմ մայր , քոյր  
Լաց լինիմ անդադար և փրնառեմ իրեւ կոյր .  
Աչքիս լոյս , հոգուս ուժ և մարմնուս օդնութիւն  
Մօրս էլ յոյս իմ վրայ և ազգիս փրկութիւն :  
Դառն է դառն , այս մըթին խարիսավեմ աստ և անդ  
Եւ բըռնեմ ամեն օր մ'երկաթեայ պարաւանդ ,  
Որ ձեռներս կապկըսպած , ուներս են պատասած  
Ինձ անշարժ սրահելով մեռցընում են քաղցած :  
Դառն է դառն , ով մայրիկ այս մութն ու խոր բանտումն ,  
Ողջ դիշեր և ցորեկ արտասուօք միշտ աչքումն  
Վիշտ , տանջանք կըրելով հայրենիքս միտս ածեմ  
Զարաչար մեռնելով մայր ու քոյր միշտ յիշեմ :  
Դառն է , դառն , Տէր Յիսուս այս բանտում ես փակուած  
Ոչ տեսնեմ պատարագ , ոչ կարդամ սուրբ դրուած ,  
Եւ մեռնիմ զրկուած երեցու աղօթքէն

Եւ մնամ այս քանտում մոռցուած իմ աղղէն։  
Դառն է դառն՝ ի վերջոյ, ով Աստուած ողորմած,  
Թէ Յաղկերտ արքային չես տալ դու մի ոռը դարձ  
Որ այսպէս կուրօրէն քանդելով մեր ուխտը,  
Զնջէ նա մեր աղղը և քո ժաղովուրդը։

ԲԵՐԴԱԿԱԼԻՆ (առանձին)

Արի, մարդ եղիր դու և տե՛ս այս սկատանուն  
Դառըն վիճակին ու վրուեմազգած հոգուն,  
Եւ դիմացիր դու մարդ, եթէ ունիս մի սիլտ,  
Որ ըղղայուն լինի թէեւ կարծուի բիրտ։  
Ա՞ն ի՞նչ անեմ ես այժմ, գնամ արդեօք իր մօտը  
Կոտրատեմ շըղթաներն արձակեմ ձեռն ու ոտը։  
Թէ ոչ, ասեմ իրան, որդի ահա քեղ կը թողնեմ  
Թէեւ ես այս տեղ քեղ խիստ սրահելու պարտ եմ։  
Գնա՛, ուր որ կամք է քեղ քո աշխարհ, հայրենիք  
Պաշտիր դու քո կը ունի վայելիր և մայրիկ։  
Ի՞նչ կ'ասէք դուք ով դիք, արդեօք այս քանն անեմ,  
Եթէ ոչ այսպէս մի տեսարան միշտ տեսնեմ,  
Տը իմ սիրան ու հոգին հալումաշ է անում  
Այս խաւար ու խոնաւ քարապատ խոր քանտում։  
Արի գնամ, մի վորձեմ, տեսնեմ ի՞նչ է ասում  
Վեր կաց, վեր, քրիստոնեայ . . . . .

ԲԵՐԴԱԿԱԼ ճօրշնալվ Գարենին, իորը ճրածուած է և ակառած դողդողալվ  
Կը շղնաները արյակէւ։

ԳԱՐԵԳԻՆ (ԳԱԼԵՒԾ ՋԵՐ ԱՌԱԵԼՎ)

. . . . . Ո՞վ մարդ, ի՞նչ ես անում,  
Միթէ ժամն է հասել իմ նահատակութեան։

ԲԵՐԴԱԿԱԼ

Ո՛չ, որդի ոչ, այլ քո անձին ազատութեան

ԳԱՐԵԳԻՆ

Ի՞նչ է քո միտքը, ով մարդ եռ քեղ չեմ հասկանում

ԲԵՐԴԱԿԱԼ

Արձակել քո ձեռն ու ոտը ու տալ քեղ ազատում։

ԳԱՐԵԳԻՆ

Օրհնուի այն ձեռքը որ ինձ պիտ' ըսպաննէ  
Որ իմ հոգին այս մարմնէս վերջապէս ազատէ,

Զ՝ այս երկու տարի է, որ տանջանք եմ կրում  
Որպէս զի իմ հողին վեր գնայ երկնքում։

ԲԵՐԴԱԿԱՆ ( Խնաճըն )

Չարմանք բան, ես նրան բանտէն եմ աղատում,  
Նա իրան թոյլ մարմնոյն ըսպանումն է խնդրում։  
Ի՞նչ հողի ունին այս Հայկավն քրիտոնեայք  
Մարմնով հեղ, համբոյր են, բայց հողւով քաջ հսկայք։

( Գառեժնէն )

Որդնոտի այն ձեռն որ քեզ սլիտի սպաննէ  
Եւ աշխարհու տեսնելուց քեզ սլիտի միշտ զրկէ։  
Որդի, այն ձեռն իմ չէ և ես այդ մարդը չեմ  
Որ քեզ քո մօրմէն և քըրոջմէն բաժանեմ։  
Ե՛լ, վեր կաց, ահա դու արծակ ես այս բանտէն  
Լապանքէն, տանջանքէն ու ամեն դառն պատճէն։  
Գնա՛ քո աշխարհը, դնա քո հայրենիքը  
Վայելիր կեանք և վառք, և միշիր ինձ քո միտքը։

ԳԱՐԵԳԻՆ

Կը յիշեմ ես քեզ իմ առաջի Աստուծոյս,  
Որ երկնից վերեւէն քո հողուն տայ իր լոյս,  
Որպէս զի դու այդ սրտով սիրես նրան քան ըղքեզ  
Եւ հաւատալով նրան քո հողին աղատես։  
Բայց այժմ կայ հաւատարիմ Յաղկերտ արքային  
Եւ վարուիր իմ հետ միշտ ըստ նրա հրամանին։

ԲԵՐԴԱԿԱՆ

Ակթէ քո Աստուածը, որդի, և ինձ Աստուած չէ։

ԳԱՐԵԳԻՆ

Այն, իմ Աստուածն ամենուն Աստուածն է  
Եւ մանաւանդ նրանց որ նրան կը պաշտեն  
իրանդմէ աւելի սրտանց նրան կը պատռեն։

ԲԵՐԴԱԿԱՆ

Եւ ես որդի, քեզ պէս սիրում եմ և պատռում  
Այն Աստուածքն որք երկնից միշտ մեղ են խընամում  
իրանց լուսավառ և հրասփիւռ ճաճանչներովը։

ԳԱՐԵԳԻՆ

Մոլորուած ես ով մարդ զի նրանց ճանաչողը

ԶԵ հաւատող մի միայն ճշմարիտ Աստուծու ,  
ՈՐ ՏԵՐՆ է Տիեզերաց և ստեղծիչ մարդու .

ԲԵՐԴԱԿԱԼՆ

Հապա արեւն ու լուսինն աստուածք չե՞ն մարդու .

ԳԱՐԵԳԻՆ

ՈՇ , տարերք են նրանք , արարածք Աստուծու .

ԲԵՐԴԱԿԱԼՆ

Հապա , հուրն ու ջուրը՝ աստուածք չե՞ն մեղ համար .

ԳԱՐԵԳԻՆ

ՈՇ , տարերք են և նրանք մարդուա կենաց համար .

ԲԵՐԴԱԿԱԼՆ

ԱՌԴ , ցոյց տուր ինձ , որդի , ո՞ր տեղ է քո՝ Աստուծու  
ՈՐ տեսնեմ , իմանամ , թէ իրաւ է ասածդ  
Հաւատամ ես նըրան ու երկիրապագանեմ  
Եւ քեզ ել այս բանտէն դուրս թողնեմ , արձակեմ .

ԳԱՐԵԳԻՆ

ԹԵ հաւատաս դու , մարդ , ճշմարիտ Աստուծուն  
Եւ նրա սուրբ Հողոն և Միածին որդուն ,  
ՈՐ աշխարհը եկաւ մեղ մեղքէ փրկելու .  
Էաղաշեմ ես նըրան ինձ այս տեղ թողելու  
Ովնչեւ որ ինձ և քեզ միասին իրան կանչէ :

ԲԵՐԴԱԿԱԼՆ ( Խաժնիքան զարմանալով )

Չ'աղաչում , որ իրան այս բանտէն աղատէ  
Ու . . . . . . . . .

Այս մշտին յանկարծ մի ժանիք անդամ դրսէն բառելուամ էն : Բնիքան ալու սարսափաւ  
Գաորեքնի ճառա է զաղուամ , ու ու Յեւան ու ու ու նորէն կապուամ : Գաորեքնը հան  
Դարդ ու հեղ նոյն է դաշտ նըրան ինչ որ կոտու անէ :

ԳԱՐԵԳԻՆ

ՄԵ վախիր , եղբայր իմ , Հողին սուրբ քեզ կ'օդնէ :

ԲԵՐԴԱԿԱԼՆ

ԽՌԱՎԵՍ չվախեմ , որդի , նոյն ինքը մօդպետն է ,  
ՈՐ գալիս ամեն օր , քեզ մահ է ըսպառնում :

ԱՇ, ուր է, ես էլ իմ մահն եմ միշտ ըսպասում

Այս մշտական նորդն իր հայութ է ուրան բաղկաւլու

ԲԵՐԴԱԿԱԼԸ

ԱՇ որդին, որդի . . . կանչիր քո Տէր Աստուածդ,   
Որ օդնեւ ինձ այս ժամուս . . . . .

ԳԱՐԵԳԻՆ

. . . . . կատարուի թող խնդրուածդ :

ԲԵՐԴԱԿԱԼԸ բնուած է և բանադի դուռը բաց անուշ անուշ և դուռը : Բայց վայսուած  
Տոդուածուին՝ պահանուած է մի ալեւոր ծերուանի ճիշտուարական հայութուածը, յեւն ոչ  
քառական, որ դուռդըղալներս է մարտուած : ԲԵՐԴԱԿԱԼԸ շուարած բանադի դուռը  
կողքնած է և ականուած ծերուանան սպանի ցիւրի զնեւլ, նա առանց այլացը վետան  
բանադի դեռի իսորուածը, գլուխը վեր է բարձրացնուած, դեմ ու դեն ման է ա-  
ծուած երեւալն և բանադի իսորն է նկատուած Գարեգինը փնտուելու :

ՏԵՍԻԼ Բ.

ՄԵՐՈՒԽԻՆԻ ԿՐՈՆԱԿԱՐԸ, ԲԵՐԴԱԿԱԼՆ ՈՒ ԳԱՐԵԳԻՆԸ

ԲԵՐԴԱԿԱԼԸ

Ով դու ծերունի, ի՞նչպէս համարձակ,  
Եկար մըտար դու այս բանստ ամրավակ,  
Զե՞ս դիտեր, որ այս երկիրն աւերակ  
Մահապարտաց է միայն խուժ բընակ,  
Զե՞ս խմացել դու, խեղճուկ ծերունի  
Այն հըրամանն որ իր վըճիռն ունի  
Թէ Արեւելքէն ով որ միտք ունի  
Արեւմուտ անցնիլ ճանապարհ չունի,  
Ո՞նց յանդընեցար դու այդ հասակովդ  
Յնանց ճամբայէն անց կենալ ստովդ  
Եւ դալ բանտի դռան բաղխել այդ վայտովդ  
Հիմ, կը տեսնես դու՝ ով է քո պատժողդ :

ԲԵՐԴԱԿԱԼԸ դուքս է բնուած :

ՏԵՍԻԼ Գ.

ՄԵՐՈՒԽԻՆԻ (Գլուխը դեռ ուս դեն ման անելու) :

Ուր ես Գարեգին, իմ սիրուն որդեակ,

Մի, մօտըս արի, ցոյց տուր քո վիճակ,  
Զի ես եկել եմ այս հեռու դըղեակ  
Տեսնել քեզ աչքովս ու կալ քեզ պահակ:

ԴԱՐԵԳԻՆ (ՏԵՐԱՊԵՏԻՆ)

Ահա՛, այս տեղն եմ, իմ ծերուն հայրիկ  
Ասա՛, ինձ խնդրեմ, թէ որ հայրենիք  
Թողել ես եկել տեսնել մի խեղճիկ  
Որ կորուսել է իր անտէր մայրիկ  
Եւ իր . . . . .

ԾԵՐՈՒՆԻՆ (ԼԱՍՊԵՏԻՆ)

Ե՛կ, մի համբուրեմ, իմ քաջ պատանեակ  
Քո ոսկի բերան, քո ճակատ լուսնակ  
Եւ դըրկումս առնեմ քո արի հասակ  
Ասեմ, Յիսուսի է և այս նահատակ  
Այո՛, Յիսուսի, դու իմ Գարեգին  
Զոհեցիր այժմէն քո կեանք թանկաղին  
Թողեցիր մայր, քոյր սրգոք վըշտաղին  
Եւ Հայոց աշխարհըն ի ժամ թըշտառին:  
Ես, քեզ եմ եկել Հայոց աշխարհէն,  
Համբաւ եմ բերել քո հայրենիքէն  
Եւ Հայոց մեծաց ոխտի վիճակէն  
Եւ Արտաշատու Սուրբ հարց ժողովքէն:  
Ա՞ն, եկել եմ եկել, մինչ այս բանտ անել,  
Սար ու ձոր, հովիտ ոտով անց կացել,  
Քեզ, որդեակ իմ, քեզ, աեւ իմաց անել  
Թէ քո ընկերաց արխնն են թափել:

ԴԱՐԵԳԻՆ (ԶԱՐԵԿԱ-ՐԵՎԵԼ)

Ի՞նչ, իմ ընկերացս, արիւնն են թափել,  
Ի՞նչ ես ասում, հայր, ի՞նչ քօթ ես բերել,  
Միթէ իմ ոխտակից եղբարքս են մեռել:  
Ասա՛ ինձ հայրիկ, ես դեռ չեմ լըսել:  
Ա՛յ Տէր իմ Աստուած և այն քաջ եղբարքս  
Ներսեհ վարձաւոր իմ Ստովին ու վարսս  
Ծնկերով միասին կռուելով ընդ Պարսս  
Նահատակեցան յանուն և ի փառ  
Սուրբ եկեղեցուն Հայոց աշխարհին:

ԾԵՐՈՒՆԻՆ

Այս, ո՞նց պատմեմ քեզ, որդեակ Գարեգին

Այն տեսիլքն որ՝ նոյն ժաման ահաղին  
Երեւեցաւ իմ անարժան աչքին,  
Առանց սրտիս մէջ մի թունտ ըզդալու  
Եւ զուարթ արտսունք աչքէս թափելու,  
Միթէ՞, քեզ, որդեակ, ըզդում ես հուժկու,  
Ընկերացդ մահուան դուժը լրսելու.

ԳՅՐԵԳԻՆ

Պատմի՛ր, իմ հայրիկ, պատմի՛ր ինձ խնդրեմ  
Քո տեսիլքըն այն ահեղ ու վըսեմ.  
Ես արդ պատրաստ եմ, ասա՞ որ լրսեմ  
Թէ եւ այդ բօթն ինձ դառն է, նում.

ԾԵՐՈՒՆԻՆ

Երբ, քաջ Ատովմեանք, որդեակ ցաւակից,  
Տեսան՝ որ Յաղկերտ քեզ զոհեց իր կրից,  
Սառած, սարսափած, սըրտերում կոկիծ  
Փախչում են դաղոնի նրա սիղծ ձեռից.  
Բայց, Յաղկերտ արքայն, այդ որ կը լսէ  
Խոկոյն զայրացած, մի մարդ կը դրկէ  
Եւ պատուէր տալով նըրան այս կասէ  
Որ սուտ մնատ խօսքով, նրանց յետ բերէ.  
Ուստի այդ մարդը նրանց քամակից  
Դիմում է շուտով աշխարհէն Պարսից  
Եւ հասնում նըրանց, լինում խօսակից  
Ըստ այն պատուէրին, որ էր Յաղկերտից.  
Ատովմ, Մանաճիհը ընկերովք հանդերձ  
Երբ տեսնում են որ վտանգն է խիստ մերձ  
Ասում են, մարդուն թէ այդ պատուէր կեղծ  
Յաղկերտի ձեռքէն մեղ չի անել զերծ.  
Արդ, դնա՛ դու բանդ և թող մեղ արձակ  
Գնանք մենք մեր աշխարհ, լինինք համարձակ,  
Զի այդ հրաւէր է մի պատրուակ  
Մեղ աքսորելու ի դուռն անդ պահակ.  
Այս կերպով, որդեակ, քո քաջ ընկերներ  
Իրար սրտակից իրար անձնուէր  
Ընդնելով թագուն սարեր ու դաշտեր  
Գնում են մնանում մեր աշխարհ աւեր.  
Խակ Յաղկերտ արքայն զայրոյթը սըրտին  
Վճռում է խոկոյն թէ սըրով կորչին,  
Եւ պատուէր տալով իր զօրաց դընդին

Դրկում է յետնէն Ատովմանց խրմին,  
Այսպէս, իմ որդեակ, երբ ես միայնակ  
Ման էի դալի, դիշեր ժամանակ,  
Երբ երկնից աստղունք և փայլուն լուսնակ  
Անում են մեր դաշտ ճրդնողաց բընակ,  
Յանկարծ երկընքէն մի էսկ թրուաւ  
Թրութրուաց, ճօճաց և դէպ ինձ եկաւ,  
Ասաց, ծերունի, ահա մահն հասաւ  
Ատովմանց դընդին, որ քեզ մօտ իջաւ.  
Աեր կաց, տար շուտով այս լուրն Ատովմանց  
Որք դեղերում են մերձ Անձեւացեաց  
Որպէս զի դանեն մանապատ անանց  
Թաղչելու համար Յաղկերտի ձեռաց:  
Ես էլ, իմ որդեակ, ահն ու վախ սրառւմս  
Օրհնութիւն սաղմոս դողդողան բերնումս  
Ծշտապով դնացի տեսնել Սուրբ Ատովմս  
Եւ պատմել դրան թ' ինչ տեսայ աչքովս:  
Խակ նա՝ Սուրբն Ատովմ, իր ընկերներով  
Ծընկի վըրայ ընկած, ջերմեռանդ հոգւով  
Պատմում էք նըրանց մեծ ահ ու դողով  
Թէ յերկինս է տեսել մի կամար լուսով,  
Որ ամրող դընդին և զօրտվարաց  
Եղել հովանի երկընքէն ձրդուած  
Եւ մի լուսէ մարդ իր ձեռին բըռնած  
Վարդաղարդ պըսակ բաշխում էր իրանց:

Այս ժեղսնին, որ ծերուանին մի յետը Գարեժնին առայ վրան, միւս յեւնով  
Եւ շտին վրայ նէին ընկած սէւտորուել և աչերեն լոյս, բերնին հուր արյակեւ  
ւը, էր ուստիլու ու Ատովմանց ճարդիրուսունիւն էր պատմուած նըրան, բերդակալը  
շնորհները յեւնին դորյ է անուած բանադին քուտը բաց անելու, բայց զարմանին է  
պատմուած երբ բանադին դուտը բաց է գունուած և կարծելով, որ ծերուանին ու Գարեժնինը  
բանադին դախելեն, մի դուր ժամանակ շրիւտած յէմարի նման դէս ու դէն է  
ման ածուած էր աչերը, յետոյ ուեւնուած է ծերուանոյն, որ մի բան է ասուած Գարե  
ժնինն. Գարեժնինն էլ յեւները կապած մոլի է անուած ծերուանոյն: Մի սպիտակ լուս  
սույնուածն էրիւսին էլ դէմտը յեւն նման լուսուարուելէ, այնպէս որ կարծես  
երինային էակներ լինին. բերդակալը նախ առանց նկատելու այս պէսարանը, ճօ  
ճիւնուած է ծերուանոյն շղիւյսը կաղելու: Նա անորաբեր լոյս է գալի նըրան էր  
կամացը, բայց բերդակալը յանկարծ իսելաբերուած է և շնորհները յեւնին դեպին է  
լուսուած և պատահնծուած՝ յէմարի պէս մոլի է ուալի ծերուանոյն և պատմուայն:

ՆԵՐՈՒԹԻՒՆ, ԳԱՐԵԳԻՆՆ ՈՒ ԲԵՐԴԱԿԱԼԸ

ԲԵՐԴԱԿԱԼԸ ( Խնան իրան իսուածը )

Ո՞հ, ինչ յիմար է այս ծեր քրիստոնեան,  
Որ յանդղնում է մըտնել այս զընտան  
Արհամարհելով մեր Յազկերտ արքան  
Եւ այս ահագին երկաթէ շըղթան:  
Կը տեսնես հիմի, դու խեռ ծերունի  
Որ ոչ ոք բայց ինձ իրաւունք չունի . . .

Յանիարժ պետելով վերեւ նկարուած պատրիերը .

Վայ, այս ի՞նչ եմ տեսնում . . . բնակիչք լուսնի  
Եթէ ոչ պատկեր . . . . աէրունի:

ՆԵՐՈՒԹԻՒՆ ( Շաբանական է առաջ այլայլուած )

Հենց՝ երբ այդ ժաման, որդի զարեգին,  
Ասովմն ու իր գունդն աղօթք կանէին  
կատաղի Պարսիկք դօրքով մոլեղին  
Սուր, թուր նետ նըրանց թափեցին դըլխին.  
Բայց կրկին Աստուած, երկնից վերեւէն  
Պահպանեց նըրանց Պարսից նետերէն  
Ցոյց տալով նըրանց մ'էակ լուսեղէն  
Որ բաշխում էր իրանց պըտակ վարդեղէն.  
Երբ տեսաւ սուրբ գունդն այս երկնից հըրաշք,  
Մոռացաւ իրան, մոռացաւ աշխարհ.ք,  
Վար թողեց իր զէնք, նուիրեց իր կեանք  
Եւ ուրացաւ ոչ իր սուրբ լոյս հաւատք:  
Ա՛յս, ո՞նց պատմեմքեղ, որդի, այս սըտով  
Թէ ինչպէս Ասովմէր իր որդին վարոս  
Մատուց նըրանց առջեւ անել մարտիրոս  
Եւ յետոյ ինք էլ գնտով եղաւ որս:  
Նոյն այս ժամանակ մի Պարսիկ դինուոր  
Տեսնելով երկին.ք այն մարդ լուսաւոր  
Հաւատաց անդէն մեր Աստուծոյ Հօր  
Եւ դըուխը տուաւ, եղաւ երկնաւոր,  
Իսկ Մանաճիհը իր վոքը դնդով  
Երբ անց էր կենում Ռշտունեաց ճամբով  
Անօրէն Պարսիկ նըրանց էլ դաւով  
Արիւնն են խըմում սըլլով ու թըրով,

Եւ ինձ ծերունոյս յայտնեց տէր Աստուած  
Այն սրբոց արիւնն ուր որ էր թափուած  
Որ երթամ հողամ, որ մի օր չանցած  
Նրանց մարմինն էլ լինի նուիրուած։  
Արդ բաւ է, որդեակ, քեզ պէտք չէ քարոզ  
Զի ահա և դու ինչպէս սուրբ վարոս  
Եղել ես այս տեղ մի ողջ մարտիրոս  
Ես էլ, որդի աստ եմ մինչ իմ վերջին օրս։

ԲԵՐԴԱԿԱԼԻ (ԾԵՐԱԿԱՆՈՅՆ ՊՐԻՖԻՆ ԸՆՀԻՇԼՈՎ)

Ով իմ ծերունի, խնդրեմ, ասա՛ ինձ  
Միթէ՞ դու իջել լուսաւոր երկնից  
Եկել ես առնել այս դառն ինձնից  
Խնդրեմ քեզ, ասա՛ . . . . .

ԾԵՐՈՒՆԻՆ

• • • • • • • Ով մարդ լըսիր ինձ,  
Հաւատա՛ դու աստ Յիսուս Աստուծոյն  
Հօր ամենակալ և Աստուածորդւոյն  
Որ շնորհք տալով քեզ՝ իր Եկեղեցւոյն  
Հարազատ որդի անէ քեզ իսկոյն։

ԲԵՐԴԱԿԱԼԻ

Եթէ հաւատամ, կազրիմ ես ձեզ հետ  
Թէ ոչ, այս բանտում կը լիմ ես միշտ դէտ։

ԾԵՐՈՒՆԻՆ

Տէրն ինքն է միայն մարդուս վերջին դէտ  
Թէ հաւատան դու քեզ այլ ինչ չեն պէտ  
Բայց միայն յոյս, սէր և մի լոյս հաւատ  
Ընծայել ի Տէր և կալ միշտ հաստատ  
Այն եկեղեցւոյն որ առնէ աղատ  
Քո հոգի, քո կեանք քո կամօքն աղատ։

ԲԵՐԴԱԿԱԼԻ

Տամ քեզ, ծերունի, իմ հոգի և կեանք  
Թէ թողնես այս տեղ այս իմ դառն որդեակ։

ԾԵՐՈՒՆԻՆ

Ապահով կաց, մարդ, մենք աստ կը մնանք  
Մինչեւ որ մեր կեանք Տէր Աստուծուն տանք։

ԲԵՐԴԱԿԱԼԻ

Դու, աստ կը մընաս, այս խաւար բանտում։

ԾԵՐՈՒՆԻՑ

Այսուհետեւ այս անձը կամ պարզ է առաջ գալու համար:

ԲԵՐԴԱԿԱԼԸ

Հաճոյ եմ հոգւով, ես էլ կը թողնում  
Այս գառն որդիս, որ հալում է, մաշտոմ  
Գայ մեղ հետ միասին լոյս, արեւ տեսնէ,

ԵՐԵՒԱՆԻՑ

Ոչ, նա պէտք է որ միշտ բանսում ճըդնէ,  
Մինչեւ որ երկնից մի հրեշտակ իջնէ,  
Եւ նըրա գըլխին լոյս պրակ գընէ :

Ծեղուակն առ բերդակալը իսօսելիս ոյ զվանուց ներս է շրջանաւ բանակ պատճեն և  
իսօսիստելը բերդակալը է քնարաւայ: Բերդակալը բալորվին ինչնիւրան պատճեն  
էլաւ յանիարժ արմանաւ է նըստ և բարձրավելուաւ իւն է ի՞նչ է իսօսիստեյ:

Stuhl b.

## ԱՌԱՋԻՆՆԵՐՆ ՈՒ ԶԻՆՈՒՄՐԸ

## ԲԵՐԴԱԿՈԼԸ ( $Q_{\{n,\dots,n\}^n}$ )

Ո՞նց ես յանդդնել դու այս ժամանակ  
թողնել գըլեկին դռուըն անպահակ  
եւ դալ ինձ . . . . ,

ԶԻՆՈՒԱՐԸ

• • • • • Տէր իս, բաղխում են մեր դղեակ  
Մի խումք ձիաւոր մի դռնդ հետեւակ :

## ԲԵՐԴԱԿԱԼՆ ( Խնդիրներու զվարյացներու մեջ )

Մի խո՞ւմբ ձիաւոր, մի դո՞ւնդ հետեւակ,  
ի՞նչ է արդեօք տէր իմ, սըրանց նպատակ,  
Գընա՛ դու, զինուոր, արա՛ քո պահակ  
Թուրըն 'ի ձեռին, աղեղն 'ի դամակ.

Դաէսու ՚է ծեղուանուց ըստ ուսուկաց վա

Ո՞հ , վայ ինձ , հայրիկ , այս լունչ վըտանդ է ,  
Անշուշտ ինձ համար այս մի գուշակ է  
Որ վըհուկ մողպետն ինձ պիտի պատժէ  
Ասա՛ , հայրիկ , ասա՛ , միթէ այսպիս չէ՞ :

ԾԵՐՈՒՆԻՆ

Թէ հաւատ ունիս Աստուծոյ վըրայ  
Նա կ'աղատէ քեզ, մի՛ վախիր, յուսա՛.  
Արդ, դու ըշտապիր, շուտով դուրս դընա  
Եւ մի՛ վարանիր դուռը բայ արա՛.

ԲԵՐԴԱՀԱՆ ՊՐՈՎԻՆՑԻ Է ՀԱՅՈՒՄ :

ՏԵՍԻԼ Զ.

ԳԱՐԵԳԻՆՆ ՈՒ ԾԵՐՈՒՆԻՆ

ԳԱՐԵԳԻՆ

Դուն էլ, ով հայրիկ, խոյս տուր այս տեղաց,  
Որ չի տեսնեն քեզ իմ մօսս կանգնած.

ԾԵՐՈՒՆԻՆ

Միթէ՞ գարեգին, ես վանքէն եկած,  
Քեզ նըրանց ձեռին առանձին թողած,  
Պէտք է որ դընամ, հեռանամ քեղնից  
Եւ տեսնեմ ոչ քո լոյս պըսակ վարդից.

ԳԱՐԵԳԻՆ

Կաց, հայրիկ, այս տեղ, լե՛ռ ինձ կարեկից  
Չի դու հրեշտակ ես ուղարկուած յերկնից.

ԲԵՐԴԱՀԱՆ ՊՐՈՎԻՆՑԻ ՆԵՐԱ Է ՀԱՅՈՒՄ :

ՏԵՍԻԼ Է.

ԱՌԱՋԻՆՆԵՐՆ ՈՒ ԲԵՐԳԱԿԱԼԸ

ԲԵՐԴԱԿԱԼԸ

Աւետիս տամ քեզ: Աստուած մեզ վրկեց  
Եւ իմ խնդրածն իսկոյն կատարեց  
Չի ահա ձեզ աստ եղբայրներ դըրկեց:  
Արդ, զուարժ լե՛ռ որդի քեզ էլ աղատեց:

ԳԱՐԵԳԻՆ ( ԶԱՐԱՐԱՅԻ ԲՈՅԱՆԻ )

Ով տէր իմ Աստուած, ցոյց տուր և այս տեղ  
Որ ողորմած ես դու միշտ ամեն տեղ:

ԲԵՐԴԱԿԱԼԸ

Մի ծերունի կայ նըրանց հետ մէկտեղ

Որ ասում է թէ՝ անունն է Մուշեղ։  
Զըլնի՞ թէ ծանօթ է քեզ իմ որդեակ։

ԳԱՐԵԳԻՆ

Տէր Աստուած, Մուշեղն ինքն է, իմ դայեակ։  
ԲԵՐԴԱԿԱԼԸ

Ասեմ, ուրեմն, մրտնեն այս դրդեակ։  
ԳԱՐԵԳԻՆ

Փութա՛, Խընդրեմ նրան և արա՛ տեղեակ  
թէ ես ողջ եմ տակաւին . . . . .

ՔԵՐԴԱԿԱԼՆ հայիւ ԱԵ բանաբն դառն է հասնում, ՄՈՒՇԵՂ, ԵՐԱՆՈՒՆԻ՞Ն պըս-  
հաւոր նոյնպէս և մի զըրական ներս Են մասնում։

### ՏԵՍԻԼ Բ.

ԱՌԱՋԻՆՔ, ՄՈՒՇԵՂ, ԵՐԱՆՈՒՆԻ, ԶՕՐԱԿԱՆԸ ՈՒ ԲԵՐԴԱԿԱԼԸ

ՄՈՒՇԵՂ (ՏԵՐԴՔԻՆ)

Ուրախ լե՛ր Գարեգին, ահա՛ մեր քաջ արքան  
Շընորհեց մեղ քո կեանք և ներեց քո խօսման։  
Վեր կաց, վեր, որդեակ իմ և լըսիր այն շնորհն որ  
Մեր Յաղկերտ մեծ արքայն արաւ քեղ այսօր։

ԳԱՐԵԳԻՆ (ՅԱՆԱԳԻՆ)

Ո՞չ, հայրիկ իմ Մուշեղ, եկ իմ մօտ ձայնդ լըսեմ  
Եւ իմ ջերմ համբոյրը քո շըրթանց վրայ դընեմ։  
Ուրախ և զուարթ, փառք կը տամ Աստուծուն  
Որ ինձ իմ հայրենի . . . . .

ՄՈՒՇԵՂ (ԳԱՐԵԳԻՆ Խօսքը կորելով)

. . . . . Տէր, կարդա՛ իմ որդուն  
Մեր քաջ արքային տուած աղատութեան թուղթը։

ԶՕՐԱԿԱՆԸ

Պատրաստ եմ կատարել ես նըրա խոստմունքը։

Զօրականը ծոցին մի բարդուն է հանուամ և դեղ ՚է Գարեգինին առ բերդակալն  
դառնալով կարդուամ է այս խօսքը։

« Մենք, մեծ հաղարապետ արքունի պահ դրան  
» Բերդակալիդ յայտնենք այս արքունի հրաման։

“Մեր արքայից արքայն աստուածոյ սիրելին  
“Հաճեց ներում շնորհել Արուանձտեան գարեգնին :  
“Արդ արձակիր դու նրան տանջանքէ , կապանքէ  
“Եւ տուր ազատութիւն դուրս դընալ այդ բանտէ :  
“Եւ դու միշտ յիշելով մեր բարերար արքայն  
“Կաց մեր դենում ամուր և հաւատարիմ ծառայն ” :

Թօնութիւն բերդակալին ուսւած

Ա՛ռ այս թուղթը բերդակալ և տուր ազատորդուն  
Որ համբուրելով դըրան դըպցունէ իր դլխուն :

ԲԵՐԴԱԿԱԼԸ

Պատրաստ եմ կատարել , քո հրամանն ով իմ տէր :  
ԶՕՐԱԿԱՆԸ

Ես դընամ ուրեմն և դու միշտ առողջ լեր :

Զօրականը ժնուած է , բերդակալն էլ նրա եական :

ՏԵՇԵԼ թ.

ՄՈՒՇԵՂ , ԵՐԱՆՈՒՀԻՆ , ԾԵՐՈՒՆԻՆ ԵՒ ԳԱՐԵԳԻՆԸ

ԳԱՐԵԳԻՆ

Մուշեղ , ասա՛ խնդրեմ , ով է այդ զօրականը

ԵՐԱՆՈՒՀԻ (ԾԵՐՈՒՆԻՆ աղերքին նայելով )

Ես եմ , գարեգին , ես . . . քո . . . սիրականը :

ԳԱՐԵԳԻՆ (Զօրականը)

Դու ես , Երանուհի , դու իմ քոյլ ֊ . . . . .

Իրար ժընուած էն :

ԵՐԱՆՈՒՀԻ

. . . . . Այո՛ , իմ գարեգին . . . . .

ԳԱՐԵԳԻՆ

Փառք քեզ Աստուած իմ , փառք , որ այս ժամուս անդին  
Հասուցիր ինձ առողջ որ դըրկեմ իմ քոյլը :

ԵՐԱՆՈՒՀԻ

Կաց , տամ քեզ եղբայր իմ և ես իմ համբոյը :

Տուր ինձ Երանուհի քո համբոյր սիրանոյշ  
Եւ ասա՞ թէ ի՞նչպէս մեր մայրը վարդանոյշ,  
Թողեց քոյր իմ քեզ պէս մի սիրարփեայ կուսի  
Լինել կոյս նահատակ մեր տիրոջ Յիսուսի։

ԵՐԱՆՈՒՀԻՆ ( Շահնշահին )

Երբ Առովմեանք եղբայր, դարձ արին Հայաստան  
Եւ մարտիրոս եղան անդ ՚ի Վասպուրական,  
Մի ճըդնող ծերունի Աստուծմէ յայտնուած  
Ինքն Արտաշատ դալով՝ իմացուց մեր սուրբ հարց,  
Թէ Առովմանց մահը թէ քո բանտ մտնելը  
Եւ թէ նախարարաց Յաղկերտի կանչելը։  
Սրդ երբ այս գուժ լրսեց մեր մայրը, Գարեգին,  
Ահն ու սարսափ գրաւեց նրա սիրտն ու հոգին,  
Այնպէս որ վերջապէս այս բօթը միշտ իր մըտքում  
Նրա ծերուկ օրերն արաւ սուդ և տըրտում,  
Այնքան, որ եղբայր իմ, ցաւ ցաւերի վըրայ  
Անդադար դիղուելով նրա սըրտի վըրայ  
Չի կարաց դէմ դընել նրանց բուռն հարուածին  
Ցաւադար, յուսահատ նա ընկաւ անկողին։

ԳԱՐԵԳԻՆ ( Արդարաւուն աշխին )

Վայ մեզ Երանուհի . . . ո՞չ մայրիկ, մայրիկ,  
Ում թողեր . . . քո հարազատ որդիք  
. . . Եւ փոխեցար առ Աստուած։

ԵՐԱՆՈՒՀԻՆ

Ի գիրկո Եկեղեցւոյ ՚ի խնամն հայրենեաց։

ԵՐԱՆՈՒՀԻՆ

Մի լար, մի լար, եղբայր իմ Գարեգին  
Դեռ այս աշխարհումն է մեր մօր բարի հոգին։

ՄՈՒՇԵՂ

Եթէ կարծում ես դու, որդի՛, թէ Երանուհին  
Քո մօր մահէն յետոյ զէնք պիտ առնէր ձեռին,  
Եւ թէ ի՞նչպէս հիմա նրա կամքին հակառակ  
Եղել է հայրենեաց ախոյեան, նահատակ,  
Փարատիր այդ կարծիք, որդեակ իմ Գարեգին,  
Չի նա ինքն մայրը դըրաւ նրա կոյս գըլխին

Այդ սիպտակ փետուրով փալփրլոն սաղաւարտն  
Որ տեսնում ես այժմ նրա դլխի փառաղարդն։

ԳԱՐԵԳԻՆ

Ուրեմն Երանուհի, կենդանի՞ է մեր մայրը։

ԵՐԱՆՈՒՀԻ

Թէ ընդունի, եղբայր, մեր երկնաւոր հայրը  
Նրա վերջին ուխտն որ՝ նա արաւ քեզ համար  
Երբ այն գուժը առաւ թէ դու այս բերդ մըտար։  
Այս էր նրա սուրբ ուխտը, իմ հոգի գարեղին,  
Որ ինձ դրկումն առած արաւ տէր Յիսուսին։  
Ասայ, «Տէր իմ Յիսուս, կը նուիրեմ քեզ այս կոյս  
Միայն թե շունչ տաս ինձ և աչքերիս լոյս,  
Որ մի վերջին անդամ իմ որդին ես տեսնեմ  
Եւ դըրկումլս արած, վերջին անդամ օրհնեմ։  
Եւ ասեմ, գարեղին, քո հայրենեաց համար  
Զոհիր քո վառք, քո կեանք, զոհիր և քո հանճար։  
Թէ եւ քո հայրենիք քեզ ապերախտ լինի  
Մի լինիր դու նըրան մի հայրատեաց որդի։  
Այլ թափիր քո արիւն, ու վատնիր քո հանճար  
Մինչեւ որ կանդնուի մի աղատ սուրբ տաճար,  
Ուր տեղ, որ ամբողջ աղդն միաբան ուխտ արած  
Միրտ սըրտի յարելով և ձեռք ձեռքի տուած,  
Աղատէ հայրենիքն ու սուրբ Եկեղեցին  
Այն խուժ դուժ աղդերէն, որ եկան դերփիեցին։  
Արդ և ես եղբայր իմ, լըսելով այս ուխտը  
Ողբ ու կոծ անելով շարժեցի նրա դութը,  
Մինչեւ որ վերջն ու վերջը հաճեցաւ ինձ թողնել  
Սաղաւարտ դըրտիս և թուր ձեռիս առնել,  
Եւ դալ Մուշեղի հետ նախարարաց ատեան  
Ասել նրանց յատուի, որ քեզ աղատել հոգան։  
Այսպէս, իմ գարեղին, Աստուած օդնելով մեղ  
Աղատեց քեզ բանտէն և մեր մօր նուիրեց քեզ։  
Արդ փութանք դընանք էլ, մեր խեղճ մօր դըրկումը  
Եւ փարատենք նըրա մահատու տըրտումը։

ԾԵՐՈՒՆԻՆ

Ով օրհնած, որդեակիք իմ և դու եղբայր Մուշեղ  
Փութանք դընանք Հայաստան ամենքնիս միատեղ,  
Զի ահա ժամն հասաւ, որ Յիսուս Երկնքէն

Փրկէ Եկեղեցին Յաղկերտի ժամա ձեռքէն ,  
Վարդանեանք , Եղբայր իմ , Վաղուց եմ իմացել  
Արքունի պահ դռնէն Հայաստան են դնացել :  
Փութանք , դընանք և մենք , որդեակիք իմ Գարեգին  
Եւ կապուինք սուրբ սիրով Եկեղեցու ուխտին :

ՄՈՒՇԵՂ (Խնձորեան)

ՏԵՐ Աստուած , ով է այս ծերունի ճդնաւորը

Դաւանալով դեղի նրան

Ասա՛ , ինձ ծերունի , դու ես այն կրօնաւորը ,  
Որ եկաւ Արտաշատ իմացուց մեր սուրբ հարց  
Ատովմանց սուրբ դընդին և նըրա ընկերաց  
Նահատակութիւնը . . . . . \*

ԾԵՐՈՒՆԵՆ

. . . . . Այո՛ , ես եմ Մուշեղ ,  
Որ յետոյ այն տեղէն եկել եմ և այս տեղ  
Իմ Գարեգին որդու լոյս պլասակը տեսնել  
Ըստ այն պատուերին որ Աստուած ինքն էր յայտնել :

ՄՈՒՇԵՂ

ՏԵՐ Աստուած ողորմած , անբաւ է բարութիւնդ

ԵՐԱՆՈՒՀԻ (ԾԵՐՈՒՆԵՆ)

Ո՞վ հայր իմ շնորհալի և ինձ տուր օրհնութիւնդ :

ՏԵՌԻԼ Ժ.

ԱՌԱՋԻՆՅ ԵՒ ԲԵՐԴԱԿԱԼԵ

ԲԵՐԴԱԿԱԼ (Ուրախ և զարդին)

ԱՌԴ , արիք փութացէք հարք իմ և իմ որդեակիք  
Պատրաստեն ձեզ համար զինուորք և զօրականք .  
Որ եկել են այս տեղ Հայոց մեծաց կողմէն  
Առաջնորդ լինել ձեզ անանց ճանապարհէն  
Դէսի ձեր հայրենիք . . . . . \*

ԵՐԱՆՈՒՀԻ (Գալուստի յեւելու)

ԵՌ , դնանք , գարեգին ,

ԳԱՐԵԳԻՆ (Բերդակալին նայելու)


Ո՞վ , ՏԵՐ իմ , դու փրկիք և սրա անմեղ հոգին :

Յանձնեմ քեզ Աստուծու , որ ցոյց տայ քեզ իր փառքը ,  
Լոյս տալով քո հոգուն աղասի քո կեանքը : (Գնուած էն)

ԲԵՐԴԱԿԱԼՆ (Խնդիրան)

Հաւատացի քեզ ես , ով Աստուած քրիստոնէից ,  
Լոյս տուր դու իմ հոգւոյն այդ անհուն երկընքից  
Որ սըրանց պէս և ես հոգի հեզ ունենամ  
Եւ այս կեանք վըշտալի ես տանել կարենամ .

ՎԵՐՋ ԵԲՐՈՒՐԻ ՄԱՍԻՆ



# ՄԱՍՆ ԶՈՐՅՈՒԹ

Տեսարանն է Գալիպոլի գահվածը ինչպէս առաջին մասին մէջ :

ՏԵՍԻԼ Ա.

ՎԱՐԴԱԿԱՑ

Տէր, այս քանի՞ հարուած և քանի պատռհաս,  
Միշտ այսպէս անխընայ մեր երկրին դու կուտաս։  
Մինչեւ երբ քո ցատոմ մեր վըրայ պիտ' ըլնի  
Եւ թըշնամեաց ձեռին միշտ այսպէս մեղ յանձնի։  
Բա՛ է արդ, խնայիր մեղ, ների՛ր մեր յանցանքին  
Եւ տո՛ր մեղ զօրութիւն դէմ կալ նրանց հարուածին։  
Այս երկու տարիէ, որ որդիս ինձ ես տուել  
Երկու տարի է և նա, որ կըռւումն է մըղուել։  
Վըրայ երեք պիտ' ըլնի և այս անդամ իմ տէ՛ր,  
Թէ դու տաս նրան նորէն քո անհընարին սէր,  
Որ երթոյ վերըստին Եկեղեցւոյդ համար  
Թըշնամեաց դէմ դընէ և կըռուի արիաբար։  
Տո՛ր, Տէր իմ, տուր որդուս քո լոյսն ու քո սէրը  
Որպէս զի ցոյց տայ նրանց, որ դու ես մեր Տէրը,  
Որ մեղ կը պաշտպանես, երբ սպառուէրդ կը պահենք  
Եւ մեղ կը չորչորես, երբ օրէնքդ զանց կառնենք։  
Բայց, ո՛չ, ես այս անդամ ըստ իմ հաստատ խոստման  
Անըղղոյ պիտ' ըլնիմ իմ սըրտի բուռն յուղման։  
Մի դէն պիտի թողնեմ իմ մայրական դութը  
Եւ բոլոր սըրտով կատարեմ իմ ու խոր։  
Պիտ' ասեմ, որդեակը իմ, ահա՛ ես իմ ձեռքով,  
Թուր և սուր տալով ձեղ կուղարկեմ ձեղ զօրքով։  
Ծնդ դէմ այն ուխտադրուժ անըղղամ վասակին,  
Որ յայտնի, համարձակ եղել է մեր ազդին  
Մի ուրացող Յուդայ, եղբայրասպան կայէն  
Դաւաճան հայրենեաց, երկալառակ, անօրէն։  
Այս, Տէր, թող զընան իմ երկու որդիքը  
Նըրանք են քեզ համար իմ միակ նուերքը։  
Արդ, ով Տէր Աստուած իմ, ահա՛ ես ձեր առաջ,  
Արտաստք աչքերումն ու սըրտիս մէջ հառաջ,  
Դողալով ծունը կընկնիմ կաղերսեմ քեղ սըրտանց,  
Եր որդուս արիւնով նուիրես Հայկաղանց։

իրանց բուն հայրենիքն ու սուրբ Եկեղեցին  
Որն որ մեր Սուրբ Նախնիք իրանց արեամբ դընեցին։  
Այս, Տէր, մեր աշխարհն այն դրախտ աշխարհն է որ  
Դու ինքը շնորհեցիր մեր Հայկայ նախահօր։  
Որպէս զի անդ սփռէ մի աղատ քաջ սերունդ  
Քեզ համար լինելու հարազատ ժողովուրդ։  
Բայց աւազ այդ ազգը մոռացաւ քո անունդ,  
Ու եղաւ այլոց պէս մի օտար ժողովուրդ։  
Մինչեւ որ 'ի վերջոյ Միածին քո Որդին  
Իջնելով երկրնքէն աւետեց մեր սըրտին,  
Որ մենք քո անդրանիկ հարազատ որդիքն ենք  
Դըրախտում ըրնակող Աղամայ թոռունքն ենք։  
Բայց, ողբամ մեր վրայ զի ահա չար աղդեր  
Ծըռնանում մեր վրայ անում են մեզ աւեր,  
Զեն ուղաւմ, որ այսօր քո անուն, Տէր Յիսուս,  
Լինի մեր աշխարհին ապաւէն, անմահ լոյս։  
ԱՌԴ, մի թողիր, Տէր, նրանց, որ ջնջեն քո լոյսը,  
Մեր արիւնն ըմպելով կործանեն մեր յոյսը։  
Արիացու մեր ազգը, զարթեցու նրա հոդին  
Որ հաստատ սուրբ սըրտով միանան քո ուխտին։  
Բայց, ո՞յ է նա՝ որ դալիս է առանձին . . .

Stuhl. B.

### ՎԱՐԴԱՆՈՅԵ ԵՒ ԴԱՅԵԱԿԸ

ԳԱՅԵԱԿԸ

Վ.ԱՐԴ.ԱՆՈՅԵ

• • • • • • • • • • Ո՞վ, իմ Երանուհին  
իմ փառքն ու պարծանքը, Հայոց դիւցաղնուհին,  
Ասա, նրան, իմ դայեւակ, որ աստ ես պատրաստ եմ  
Եւ նըրա աչքերէն պաշելու ծարաւ եմ.  
Բայց, ուր է, իմ որդին, քաջասիրա գարեղինը,  
Հայաստան աշխարհի հարազատ որդեղիը.

ԴԱՅԵԱԿԸ

Ահա դալիս է և նա Մուշեղի հետ միասին.

Արիք · որդիքս , արիք , և ես աստ առանձին  
Ըսպասում եմ ձեզ , որ . . . . .

ՏԵՍԻԼ Գ.

ՎԱՐԴԱՆՅԵՑ , ԴԱՅԵԱԿ , ԵՐԱՆՈՒՀԻ , ԳԱՄԵԳԻՆ , ՄՈՒՇԵԿ

ԳԱՐԵԳԻՆ (ԱՐԵԿԱՆ ԵՐԱՆՈՒՀԻ)

• • • • • Մայր , նախ աջդ համբուրեմ  
Եւ ասիս մի առ մի համբաւ մեծ քեզ պատմեմ :

Գարեգինը առաջարկու է լինեն հանելով Երանուհոյն հետ իրանց մօռը իւլ մօռնան և  
աջը իւլ համբուրելու , մայրն էլ նրանց ճակատին վրայ մի համբոյր դնելուն յետու նրանց  
իլոյն վրայ յետունվ իւլ խաղակութե : Մուշը իսորը մասնանց մեջ մի դեն իսկանած  
իւրան աղըն իւլ բնիւշնեաց , նոյնու դայեակն էլ Երանուհոյն իւրախոյն :

ՅԱՐԱՉԱՍ ԷԼ , մայր , ուր տեղ քաջըն վարդան  
Ողջ նախարարքն չայոց համադոնդ , միարան  
Ժողովել էր այն տեղ իրանց քաջ զօրքերով  
իսկ այժմէն անելու մի մեծ զօրաժողով ,  
Այն տեղն էին մայր իմ , Ներշապուհ Արծրունին ,  
Խորէն խորխոռունին և Արտակ Պալունին :  
Վահան Ամատունին , գունդն վահեւունեաց  
Արշաւիր Արշարունին , թաթուլ Դիմաքսեաց :  
Արանց ամենք միասին և այլ մեծ նախարարք  
Աղատօրեայք , սեպուհք , արքունի աւագարք  
Համամիտ միութեամբ իրանց զօրքով հանդերձ  
Բազմել էին անդ , ուր Յովսէփ , Ղեւոնդ երէց  
Եւ պաշտօնեայք ամբողջ եկած էին ՚ի տես  
Եւ անել սուրբ ուխտով հետ հոգեւոր սուրբ հանդէս :  
Երբ ըսպարապեան մեր , արին ու քաջարան  
Ըսկըսաւ խօսել անդ նախարարաց համայն  
Առաց . « Ո՞վ եղբարք իմ և քաջ նիղակակից  
» կաղաշեմ ձեզ որտանց՝ որ ականջ գընէք լինձ :  
» Գիտէք , որ շատ անդամ ես և դուք միասին  
» Պատերազմ ենք մըտել ու յաղթել թըշնամին :  
» Թէ որ նրանք երբեմն յաղթող են երեւել  
» Բայց , այն է շատ անդամ , մենք ենք որ նրանց յաղթել ,  
» Բայց , սրանք , ովք քաջ եղբարք , մարմնաւոր են պարծանք

”Եւ անցաւոր արքայի բռնաւոր են հրամանք։  
”Բայց և այնպէս նրանք, որ ընդդէմ այդ հրամանին  
”Պատերազմի գաշտում դարձնելով քամակնին  
”Թողնում են ու փախչում իրեւ մի վատ զինուոր  
”Վատ են ու անարի, մահապարտ, յանցաւոր։  
”Խակ նրանք՝ որ քաջովմեամք նետն ու աղեղը ձեռին  
”Իրանց կուրծք ցայց տալով՝ կըուում յառաջ կ'անցնին  
”Քաջ անուն, մեծ պարզեւ անցաւոր արքային։  
”Իբր վարձ իրանց համար կ'առնեն ու ժառանդեն։  
”Դրանց պէս և մենք եղբարք, իբրեւ քաջ զօրական  
”Շատ վերքեր ենք առել, շատ պարզեւ մարմնական  
”Բայց անարդ համարիմ, անօգուտ, դուր վաստակ,  
”Այդ ամեն պարզեւներն ու ամեն յաղթանակ  
”Որ մի մահկանացու և օտար արքայի  
”Փառամոլ կամացը միմիայն ծառայի։  
”Թողենք այսուհետեւ մարդկանց ծառայելը  
”Եւ նըրանց կամքերը կուրօրէն կատարելը,  
”Այլ անմահ արքային, որ վերեւն է, երկնում  
”Եւ մեր բուն հայրենեաց, որ ունինք այս երկրում  
”Միայն նրան ծառայենք, նա է առ ողջ մարդկանց  
”Եւ միտյն որան աիրենք, սա է երդ Հայկազանց։  
”Ովք քաջ նախարարք, դուք որ ինձ, ձեզ համար  
”Զեր յօժար կամքովը ընտրեցիք զօրավար  
”Լըսելով այս խօսքերս դրոշմեցէք ձեր սըրտում  
”Եւ սերն հայրենեաց վառեցէք ձեր հոգւում  
”Մի խըրտնիք վախելով հեթանոս արքային  
”Եւ նըրա ահաղին մահացու բանակէն։  
”Տէր Սատուած մեր կողմն է կը տայ մեղ օդնութիւն  
”Կը ցըրուենք մենք նըրանց մարդկային զօրութիւն։  
”Եղբարք, ճշմարտութիւնն անմահ է ու անյաղթ  
”Բըռնակալին զէնքը նըրա դէմ է դժբաղդ։  
”Զուր տեղը թագաւորք փող, ոյժ են դործածում  
”Ոչուփուչ անելու հընարք են ըստեղծում։  
”Նա՝ միշտ ձեռին բըռնած Արդարութեան կշխը  
”Կըշուում է ու գատում նըրանց ամեն կըոիւր։  
”Արդ, մենք էլ սուրբ մահով անմահ ճշմարտութեան  
”Մեր աշխարհում կանգնենք մի անմառաց արձան։  
”Մեռնինք մենք արութեամք, թափենք մեր արիւնը,  
”Թողնենք մեր սերբնդոյ մեր անմահ անունը։  
”Զի փոխենք մեր Աստուածն այլոց աստուածոց հետ,

” Զի խառնենք մեր արիւնն այլոց արեանը հետ ,  
” կը կայ մի ժամանակ , մեր թափած արիւնէն  
” կենդանի հողիներ կը ծաղկին այս երկրէն ,  
” Միջի մենք արդէն այս մի քանի կոխներում  
” Քաջութեան , արութեան անուն չենք վայելում ,  
” Մենք չենք այն քաջերն որ Տիրոջն օդնութեամբ  
” Արքունի ղօրքերն անհընարին զօրութեամբ  
” Զարաչար զարնելով՝ շարդեցինք , ցըրուեցինք .  
” Մեր հայրենի երկրէն դուքս արինք , վանեցինք .  
” Մենք չենք , մենք եղբարք , որ զարդին մոդերը  
” կործանելով իրանց ճենճերոտ զոհերը  
” Սատակեցինք անխորնայ , վանելով մեր երկրէն ,  
” Ուրք այս տեղու այն տեղ կանգնել էին մեհեն .  
” Այս մենք էինք մանք , ովք քաջ գահակից ,  
” Ուր իրար հետ կապուած , միաբան , ոքրուակից  
” Անօրէն , բըռնաւոր , անաստուած արքային  
” Խուվայոյդ հոգւոյն ու չարակամ հրամանին  
” Դէմ առ դէմ զընելով մերժեցինք քաջութեամբ  
” Ոտի տակ առինք այն՝ ջնջեցինք արութեամբ .  
” Խակ նա՝ որ հիւսիսի քամու պէս բըռնացած  
” Եւ ծովու ալեաց պէս կասաղած , փրփրած  
” Ամպերի բարձրէն էր գուռում ու օրոտում  
” Եւ կայծակ և փայլակ մեր վրայ էր փայթեցնում  
” Ռիթը կաղ , ու երես յաղթուելով մեր խօսքից  
” Հուրն ու թուրը արդ ձեռին լինում է խօսակից ,  
” Ուրագէս զի մեր վրայէն իրբեւ մի վերարկու ,  
” Քրիստոսի սուրբ կրօնը փոխուէ , վեր առնու .  
” Բայց , թող քաջ գիտենայ , որ մեր հարց սուրբ կրօնը  
” Մեր հոգւոյն և մաքին թէ լոյսն է , թէ յոյոը .  
” Ինչպէս որ կարող չէ մարմնոց գոյնը փոխուել  
” Նոյնպէս մեղ կարող չէ յաւիտեան այլայլել .  
” Մեր կրօնի հիմունքը , հաստատոն , անսասան ,  
” Ոչ թէ այս երկրիս վրայ , այլ յերկինս է ապաստան .  
” Ուր տեղ ոչ անձրեւներ և ոչ բուռն քամիներ  
” Ոչ հեղեղ , ոչ մրրիկ երբէք չեն յարուցեր .  
” Ի՞րդ և մենք թէպէտ և մարմնով այս երկրումն ենք  
” Բայց յուսով հաւատով վերեւը երկրումն ենք .  
” Ուրեմն , ովք քաջեր կացէք միշտ հաստատոն  
” Յիսուսի Քրիստոսի մեր հզօր զօրադիխուն ,  
” Ուր երկնէն տեսնելով՝ մեր նահատակ կեանքը

” Եղբէք անուես չարտւ , կատարեց մեր կամքը :  
” Թէ որ մենք թշնամիք ցիրուցան ջարդելով  
” Աստուծոյ օրէնքին համար միայն կըռուելով  
” Քաջանուն մեղ համար իրաւամբ ըստացանք  
” Եւ սուրբ Եկեղեցուն թողեցինք փառք , պարծանք ,  
” Աստուած է , որ միայն մեր վարձուց անմահ փառք  
” Փոխարէն սլիախ տայ թէ վարենք մի սուրբ վարք :  
” Արդ , արիք , դնանք ամենքս կամ մեռնինք կամ յաղթեն  
” Եւ Եկեղեցու խաչն մողուց ձեռնէն թափենք :  
” Այս կոչում , ովք քաջեր , ալէտք է քաջ զիտենաք  
” Տէրն ինքն է մեղ անում , որպէս զի պատրաստ կանք  
” Արդ ուժեմն էլ բաւ է , չը լինինք աղդատեաց ,  
” Այլ ըստ օրինակին մեր քաջազն նախնեաց  
” Լինինք տէր և պաշտպան մեր սուրբ Եկեղեցուն  
” Ար է դրօշ փրկութեան հայրենեաց որբ որդուն :  
” Բաւ է , բաւ , ովք Հայեր , որ մենք մինչեւ այսօր  
” Մոռացած մեր նախնեաց քաջութիւնն մեծազօր  
” Յնտէք ու անպաշտպան իրը անըզգայ դեղջուկ  
” Ամբարիչտ աղդերին լինինք մենք միշտ ըստրուկ :  
” Ահա այսօր , ովք քաջեր ժամանակն է եկել  
” Մեր հայրենեաց դրօշը ՚ի տես մարդկանց հանել  
” Մինչ այսօր ճընշուած տըրտում ու մունջ էլինք  
” Հայրենեաց համար էլ խորթ որդի , տար էլինք :  
” Որդ այժմէն ըսկըսած ամենքս ըզդաստանանք :  
” Եւ հոգւով և սըրտով զուտըթ , զարթուն կենանք :  
” Խըլենք մեր որբերէն և մեր մըտքի մէջէն  
” Այն փըթած երկիւղն որ ջընջելէ մեր որբերէն  
” Թէ հայրենեաց սուրբ սէրն թէ մարդկութեան ոլորտքերը  
” Եւ թէ մեր տիրատուր աղդային փառքերը :  
” Լինինք աստուածապաշտ , լինինք հայրենասէր  
” Զի մենք ենք միմիայն Հայաստանեայց բուն տէր :  
Այս խօսքերն էին , մայր , որ արին մեծ վարդան ,  
խօսեցաւ վեհ հոգւով այն ամեն բաղմութեան .

### ՎԱՐԴԱՆՈՅ

Ուրեմն , որդեակ իմ , մօտեցաւ այն ժամը ,  
Որ Հայոց աշխարհին աղատանու դասը  
Ամենքը միասին սիրու որտի հետ կապուած ,  
Հայրենեաց որդիքը քնէն զարթեցուցած  
Պիտի աղատեն մեր հայրենիքն ու աղդը

ԳԱՐԵԳԻՆ

Այդ խընդիրը, մայր իմ, միայն Արտազու դաշտը  
կարելի է վըճռէ թէ կամք է Աստուծուն։

ՎԱՐԴԱՆՈՅՑ

Երբ Գարեգին, ասա՛, Էղուց առաւօտուն

ԳԱՐԵԳԻՆ

Ո՛չ, մայր իմ, այդ բանը, դաղտնի է քո որդուն

ՎԱՐԴԱՆՈՅՑ

Ա՛րդ, պատրաստիր Մուշեղ, իմ սիրելի որդուն  
Սաղաւարտն ու թուրը, որ հէնց այժմէն օրհնեմ։

ԵՐԱՆՈՒՀԻ

Մայր իմ, մի՛ մոռանար, որ ես էլ պատրաստ եմ

(Պատահաւով դեռև դայձելին)

Արի՛, դայեակ խընդրեմ, տուր իմ աղեղն ու թուրը  
Սաղաւարտն ու զըրահ և նիղակն ու սուրը։

ՎԱՐԴԱՆՈՅՑ

Այ՛, Երանուհի և քեղ պարտ եմ զըրկել  
Եւ արտազու դաշտում իմ ազգին նուիրել,  
Տէ՛ր, դու որ լըսեցիր իմ ջերմեռանդ ուխտը  
Այժմ ընդունիր խընդրեմ և իմ միակ դուստը։  
Արի՛ք, մօտս դառնուկներս, որ տամ ձեղ իմ համբոյը  
Եւ ասեմ Աստուծոյ ահա եղբայր և քոյր,  
Որ սուրբ Եկեղեցուն և իրանց հայրեննեաց  
Աղատութեան համար զոհ են անում իրանց։

ՏԵՍԻԼ Դ.

ԴԵՒՐՆԴ ԵՐԵՑ ԵԿ ԱՌԱՋԻՆՔ

ՎԱՐԴԱՆՈՅՑ

Ո՛վ է նա, Գարեգին, որ հէնց այս ժամանակ  
Գալիս է քո դահլիճ, այսպէս համարձակ։  
Ո՛վ եմ տեսնում, Աստուծ, Ղեւոնդ երէց ինքն է։  
Ո՛վ հայր սուրբ, դու ես . . . կաղաչեմ ինձ ներէ՛,  
Բայց, այդ ի՞նչ եմ տեսնում, Տէ՛ր, քո դէմքի վըրայ  
Ասա՛, խընդրեմ, ասա միթէ՞ մի նոր բան կայ։

ՂԵՒՌՆԴ ԵՐԵՅ

Ո՞հ , Վարդանոյշ , լրսիր , ասեմ քեղ ինչ հարուած  
Այսօր ըսպառնում է մեր ուխտին հայրենեաց :  
Ուրացողն Վասակ և Մուշկանն Նիւսալաւուրտ  
Ամեն դաւ են վորձում կործանել մեր սուրբ ուխտ :  
Թէ Արտազու դաշտում տէր Աստուած երկնքէն  
Օդնութիւն տալով մեղ աղատեց նրանց ձեռքէն ,  
Կ'աղատուինք , Վարդանոյշ և մենք այն ժամանակ ,  
Եթէ ոչ ամենքս էլ կը լինինք նահատակ :  
Զի ահա Յաղկերտ ինքն ահագին բանակով  
Մուշկան Նիւսալաւուրտ դաւաճան Վասակով  
Կ'ուղարկէ մեր վըրայ Զարեւանդի դաւառը  
Վերն ու վար անելու ողջ Հայոց աշխարհը :  
Արդ այժմ ամբողջ աղդն անդ Արտազու դաշտում ,  
Միագունդ զինուորուած Վարդանայ քաջ ձեռում  
Դէմ ու դէմ դու Պարսից բիւրաւոր բանակին  
Կանդնած է պատրաստի խաչն ու սուրբ ձեռին .  
Թէեւ Վասակ Յաղկերտէն հրաման է ընդունել  
Բոլոր քրիստոնեայքը թըրէ անց կացունել  
Թէ որ կրկին նոյնպէս իրանց ուխտին վըրայ  
Հաստատոն մընալով պիտի լինին վըկայ :  
Ահա այս հարուածն է , որ այսօր Վարդանոյշ  
Ըսպառնում է մեր . . . . . :

ՎԱՐԴԱՆՈՅՇ (Թաղակալով)

. . . . . Տէր , ըսպառեցաւ և իմոյժ :

ԵՐԱՆՈՒՀԻ (Խնախան)

Ով Աստուած , մի՛ թողիր մեղ Վասակայ ձեռին

ԳԱՐԵԳԻՆ (Յառագին)

Տէր , թէ դու չես պաշտպան մեր Հայոց աշխարհին  
Ով պիտի լինի մեղ աղատարար իշխան :

ՂԵՒՌՆԴ ԵՐԵՅ

Մի՛ վախենաք , որդեակիք , Աստուած է մեղ պաշտպան

ՎԱՐԴԱՆՈՅՇ

Այն , Աստուած է մեղ պաշտպան և ապաւէն

Բայց Հայոց աշխարհն անզօր է ու անդէն :

Ի՞նչպէս մենք , իմ սուրբ հայր , մեր վոքրիկ բանակով

Պարսից պիտի յաղթենք դէմ առ դէմ կռուելով  
Նրանք Մասեան գունդ ունին և զինակիր փռեր  
Անհամար այրուձի և բիւրաւոր զօրքեր :  
Որոնք ամեն կողմէն ահազին յարձակմամբ  
Կարող են մեզ ջընջել անհնարին կոտրմամբ :

Դեկտ Ե՞կէ

Միթէ՞ մենք, Վարդանոյշ, պէտք է սիրենք մեր կեանք,  
Երբ մեր Եկեղեցին և հայրենի աշխարհք  
Անդարման կորստեան վտանգումն է տապալում,  
Մի վայրադ թըշնամու ձեռքով է կործանւում:  
Ոչ երբէք Վարդանոյշ, սիրենք ոչ այս կեանքը  
Այլ մահուան դիմելով որոնենք մեր փառքը :  
Զի Աստուած երբ երկնէն խօսում է մեր սըրտին  
Նա կընի անպատճառ և պաշտպան մեր ազգին :  
Զերկնչինք, Վարդանոյշ, մահկանացու մարդէն  
Եւ նըրտ անցաւոր ըսպառնացող պատժէն :  
Ի՞նչ կարող է անել հողեղէն բռնաւորը  
Երբ պաշտպան է մեզ մեր երկնաւոր թաղաւորը :  
Զուր տեղը դործ կ'ածէ իր ամեն բռնութիւն  
Երբ Աստուած ցոյց կը տայ իր անհուն զօրութիւն :  
Զի Նա երբ միայն խօսի ամենքը ցիրուցան  
Սպառսպուռ անհետ կը ջնջուին անձայն :  
Նրա ձեռին, Վարդանոյշ, ծով երկիր և երկնք  
Մեծամեծ խաղաւորք, հողեղէն ողջ մարդիկ  
Տիեզերքն ամրող և ամեն կենդանիկ  
Չընչին արարած են աննըշան խաղալիկ :  
Արդ մեր անցաւոր կեանքն որ մենք վարում ենք այսօր  
Մերը չէ Վարդանոյշ այլ տէր Աստուծոյ հօր :  
Եւ թէ որ մեզ այսօր պատերազմ է մրղում  
Անշուշտ մեր ազդն ու ուխտն պահպանել է ողում :  
Կարի քաջ դիտենաք, դուք, ով Հայկազն տիկնայք  
Որ մեզ Հայաստանեացս միմիայն քրիստոնեայք  
Տէր Աստուած է ընտրել ամրող Արեւելքում  
Որ իր Եկեղեցին պահպանենք մեր միջում :  
Արդ, Հայք, այս աշխարհում մի ուրիշ փառք չունին  
Բայց միայն Քրիստոսի ողջ նահատակ ընին :  
Այս է Եղել մեր հարց նախնի կեանք ու վիճակ,  
Այս է նաեւ այժմ մեր ներկայ հանդամանք,  
Այս պիտ ընի նաեւ մինչեւ այն ժամանակ ,

Որ Հայկայ սերունդէն մի աղատ քաջ ժառանգ  
Աղատէ մեր աշխարհն ու մեր Եկեղեցին,  
Որ անաստուած իշխանք աստե անդ ցրուեցին.  
Բայց թէ որ այժմ Աստուած թողնումէ Վասակայ,  
Որ այսպէս մեր աշխարհն անէ տակնուվըրայ,  
Ենշուշտ նրա կամքն է, որ մեր եռանդը փորձէ  
Եւ մեր աշխարհի մէջ ըսքանչելիք դործէ:  
Նա կարէ Վասակին ոչուփուչ անելով,  
Փրկել Եկեղեցին մեր անկարող ձեռքով:  
Թէ որ մենք, վարդանոյշ, այս յուսով և հոգւով  
Չենք դիմել պատերազմ՝ ողջ աղդով և որդւով  
Կը կորչի մեր աղդը, կը վերնայ մեր աշխարհ  
Եւ յաւիտեան կը լինին օտար աղդաց աւար:  
Արդ, դնանք գարեղին, զի էդոց վաղ այգուն  
Մեծ հանդէս պիտ' ընի Արտազու մեծ դաշտում:  
Զօրականք և զինուորք ամենքը միատեղ  
Աղօթքով, սաղմոսով պիտ' հազորդուին ոյն տեղ:

ՎԱՐԴԱՆՈՅՑ

Ճշմարիտ են խօսքերդ, ըզդում եմ ես, հայր սուրբ,  
Որ քեզ խօսեցընովն նա ինքն է Հոգին սուրբ:  
Արդ, Նա մեր մահը սուրբ, արդար թող անէ,  
Եւ արդարոց մահուան հաւասար թող դասէ:  
Միայն թէ մեր արիւնք հաճելով Տէր Աստուած  
Մեր սուրբ Եկեղեցուն թոյլ տայ ոչ տան հարուած:  
Ահա ես այս ժամուս իմ երկու որդիքներս  
Քեզ եմ յանձնում. հայր սուրբ, զի սրանք են զոհերս:  
Արդ, արի՛, գարեղին, և դու երանուհի  
Տամ ձեզ վերջին համբոյրս և օրհնենք մայրունի:

Գարեդինն ու Երանունին իրանց հօքն առաջը ձնիան քրայ ընդեւկ նրա աջն են  
համբաւընում: Վարդանոյշը արցունի Երանում, աիրու ըստու եւ նրանց եւ  
ըստու առաջընում է:

Գշնացէք, իմ որդիքս հեթանոսաց ձեռնէն  
Աղատեցէք սուրբ ուխտն քրիստոնէից ամեն:  
Պատարագ մատուցէք առաջի Աստուծոյ  
Չեր արիւն թափելով յանուն Եկեղեցւոյ:  
Տէրն օրհնէ այն հողն որ ձեր արիւն տի ծըծի:  
Տէրը տայ, որ այն հողն նորէն ձեղալէսներ ծընի:  
Տուր, Մուշեղ, ինձ այդ թուրը, որ ես ինքս իմ ձեռքով

Գարեգնիս մէջն ածեմուրախ ու զուարիթ սըրտով,  
Եւ դու, դայեակ, իմ քոյր, տուր այդ սաղաւարտն  
Որ ես ինքնս իմ դստեր գըլիսին անեմ անմահ դարդն։

Ղեկոնդ երեք

Հերիք է, վարդանոյշ, ահա՛ ժամն է եկած  
Եւ այս գիշեր ահաւոր իր կէսէն է անցած  
Արիք, գընանք որդիքս 'ի դաշտ անդ Արտազու  
Եւ էդուց վաղ այդուն աղօթենք Աստուծուն։

ԳԱՐԵԳԻՆ (Երանուհու Յեռակն բանելով)

Արի, Երանուհի, էդուց արշալուսին  
Պատարագ անենք մեղ մեր տիրոջ Յիսուսին։

Ա.Հնիւն միանին գնասաճ էն

Տեսարանը չոփոխառաջ է և ներկայացնուած ներառառանց Արդուուշ դաշտուն և որոշուած  
չեղուն։ Հետառար առըերի ժամակնին Երեսառաջ է արևոտ ձագուածը։ Տեսարանին բնեմն  
է մի բարձրաւանդասի, որու վրայ է կանգնեցուած Գարենի վրանը։ Տեսարանի խու-  
զուածին Երեսառաջ էն ընդուրյանի և հետառար հովուածը և դաշտուն, որոնի Երբետն  
ամուն կամ նե փոշուալ էնը բնե Երեսառ և աներեւան էն լինուամ։

ՏԵՐԵԼ Ե.

ԵՐԱՆՈՒՀԻՆ ԵՒ ԴԱՅԵԱԿ

ԵՐԱՆՈՒՀԻՆ (Ապղաւարդ հլինին և նուրին ու վահան յեւին)

Զուարիթ եղիք, դայեակ իմ, ահա արեւն աւետեց,  
Որ Աստուած Երկրնքէն մեր աղերսն ընդունեց։  
Ով երկին և երկիր, ով լերինք, դաշտօրայք  
Դուք եղէք մեղ այսօր ականատես վրկայք։  
Ահա թուրն 'ի ձեռին մենք 'ի մահ ենք դիմում,  
Որ Քրիստոսի խաչը պաշտպանենք մեր Երկրում։  
Եւ դուք ով քրիստոնեայք, իմացէք, որ մենք, Հայք,  
Իշխանք և նախարարք, սեպոհք, աղատօրեայք,  
Գիւղականք և հովիւք և մինչեւ խաշնարած,  
Ամենքըս միարան հոգւով մարմնով զինուած։  
Դէմ առ դէմ կրուում ենք Զըրադաշտայ դենին  
Եւ յաղթում ենք նըրանց դիւահար մողերին։  
Թող գիտենան նաեւ հայրենեաց մեր որդիք,  
Թէ այսօր մենք եւս, թէ կանայք թէ աղջիկք  
Ամենքըս միասիրտ, միարան միագունդ  
Մեր Տերոջ Քրիստոսին եղել ենք դինադունդ։

Ա.յ՛ , մենք հայրենեաց լինելով նահատակ  
թողնում ենք նրանց այսօր մի այնպէս յիշատակ՝  
Որն որ դարէ ՚ի դար և սերընդէ սերունդ  
Լինի նրանց օրինակ , աղատութեան սընունդ . . . .  
Ա.յս ի՞նչ ձայն է դայեակ , որ դալիս է հեռուանց  
Խընդրեմ , գնա՞ նայիր ու տե՛ս , լըսիր վերեւանց :

Երանունին աւշադրութեամբ ականջ է դնում հետուանց եկած յայնին , որն որ ժա-  
նի ժնուած , ճաղբենուած է : Դայեակը ժնուած է աւ զբանի բարձրէն նկազուամ պատարանի  
իսրը , որ աւեղէ զբութերէ յայնն է դալի :

### ԴԱՅԵԱԿԸ

Ա.րի՛ , Երանուհի : Գարեդինն է զօրքով ,  
Որ դալիս է դէպ ՚ի մեզ օրհնութեան երգերով :

Երանունին իսկոյն ժնուած է դայեակի ճշու և այն բարձր որեւէն ճարի է գալի Գայրեժ-  
նին և նրա ժնութին՝ որու աւետէն սիրու շարժելով՝ ծնկան զբայ է ընկուած դայեակին  
հետ միասին և յեւտերնին իրար առալով աւ իրանի և լերի ելով պատասխանամ էն զբ-  
ութին :

Գայրեժնի զբաժնութին հետուանց երդած երդը :

### ԶՈՐԱԳՈՒՆԴԻ

Ա.րի՛.ք մանկուն.ք մեր Հայկազուն.ք  
կան.ք մեն.ք պաշտպան եկեղեցեաց .  
Ա.րի՛.ք զինուոր.ք , վեհ քաջազուն.ք  
կանդնեն.ք դրօշակ մեր հայրենեաց

ԵՐԱՆՈՒՀԻՆ ԵՒ ԴԱՅԵԱԿԸ (Միասին )

Ո՛վ տէր մեր Աստուած  
Քո ողորմութեամբ ,  
Դու տուր մեր զօրաց  
Լինել քաջութեամբ  
Նահատակ հրզօր  
Մեր սուրբ հարց ուխտին .  
Ախոյեան զինուոր  
Հայոց աշխարհին

### ԶՈՐԱԳՈՒՆԴԻ

Ա.րի՛.ք , մանկուն.ք մեր հայրենեաց  
Մեն.ք աղատեն.ք մեր հայրենի.ք  
Ա.րի՛.ք կըտրիճ.ք Հայոց մեծաց  
Արտաքս վանեն.ք մեր թըշնամի.ք

ԵՐԱՆՈՒՀԻՆ ԵՒ ԴԱՅԵԱԿԻ

ՈՎ տէր մեր Աստուած  
 Տուր մեղ քո շընորհք ,  
 Որ մեր հայրենեաց  
 Լինինք .քաջ դինուորք .  
 Զի ահա Պարսիկք  
 Անօրէն աղդեր  
 Անում են սաստիկ  
 Մեր երկիրն աւեր :

ԶՈՐԱԳՈՒՆԴՆ

Արիք մանկունք մեր հայրենեաց  
 Ամենքս հոգւով մենք միանանք  
 Արդ այսօր է մեր օր փառաց  
 Լուսով , սիրով մենք զարդանանք :

ԵՐԱՆՈՒՀԻՆ ԵՒ ԴԱՅԵԱԿԻ

ՈՎ տէր մեր Աստուած ,  
 Դու մեր Հայ աղդին  
 Դարձու քո նայուած  
 Սրա նրա հոգին ,  
 Հայրենեաց սիրով  
 Վառուն վառվըռուն  
 Աստուծոյ լուսով  
 Փայլուն վարփըլուն :

ԶՈՐԱԳՈՒՆԴԸ

Զարթիք մանկունք արդ Հայկաղունք  
 Մեր աշխարհը լուսաւորենք  
 Յիշենք , որ մենք Հայկայ թոռունք  
 Արեւելքում աղնիւ աղդ ենք

ԵՐԱՆՈՒՀԻՆ ԵՒ ԴԱՅԵԱԿԻ

ՈՎ տէր մեր Աստուած ,  
 Դու մեր աշխարհին  
 Սրա քո սուրբ այց ,  
 Օրհնէ մեր աղդին :  
 Տուր մեղ զօրութիւն  
 Որ արիանանք  
 Յաղթենք թըլշնամուն  
 Եւ աղատանանք :

ՏԵՍԻԼ Զ.

ԵՐԱՆՈՒՀԻՆ, ԴԱՅԵԱԿԻ, ԳԱՐԵԳԻՆՆ ԻՐ ԶՈՐԱԳՆՈՎԸ

ԵՐԱՆՈՒՀԻՆ

Արի . . . արի . . . եղբայր իմ, գարեղին  
Յոյց տուր ինձ, ուր է մեր անօրէն թշնամին

ԳԱՐԵԳԻՆ

Ահա՛, Երանուհի, Աւարայրի գաշտը,  
Ուր սեպուհն Արանձար և իր զօրեղ վաշտը  
Զարկին, սատակեցին Յաղկերտի դընդերը,  
Որ տեղ են և հիմա Մուշկանի խըմքերը:  
Ահա՛ և քաջ վարդանն իր քաջազուն դընդով  
Արշաւում է դէպ 'ի ծրղմուտի այս կողմով:  
Ես էլ իմ դընդովը յարձակում եմ ահա՛,  
Օգնական լինելու մեր մեծին վարդանայ:  
Արդ, ըշտապի՞ր, քոյր իմ, վեր առ քո դէնքերը  
Զի ինձ են ըսպասում իմ կըտրիճ զօրքերը:

ԵՐԱՆՈՒՀԻՆ

Գնա՛նք, եղբայր իմ, դընանք, բայց ուր է քաջ Մուշեղ:

ԳԱՐԵԳԻՆ

Նա դընդի դլուխն անցած, դիմեց դէպի այն տեղ,  
Ուր որ քաջըն վարդան նրշանակեց նըրան,  
Որ Սըրուանձտեան դընդով օգնական ըլնի իրան,  
Պարսից Մատեան դունդը միասին ցըրուելու:

ԵՐԱՆՈՒՀԻՆ

Դիմե՛նք մենք էլ եղբայր, այդ փառքին հասնելու:

ԳԱՐԵԳԻՆ

Յառաջ բերեք զինուորք, ճերմակն իմ երիվար: (Երանուհին)  
Երանուհի, արի դիմե՞նք արիաբար,  
Ահա՛ փողերն հնչում, թըմբուկներն են ածում

ԵՐԱՆՈՒՀԻՆ

Ահ, եղբայր իմ, եղբայր կըուում են կըուում:

ԳԱՐԵԳԻՆՆ ՈՒ ԵՐԱՆՈՒՀԻՆ (Միաբն)

Ահ, դայեակ իմ, դայեակ արի իրար համբուրենք

ԴԱՅԵԱԿԻ (ԹԵ-ԵՐԸ Բաց անելով )

Եկէք , որդեակը իմ , եկէք իրար ողջագուրենք

ՏԵՍԻԼ Է .

ՄԻ ՔԱՆԻ ԶԻՆՈՒՈՐՆԵՐՈՎ ՄԻ ԶՈՐԱԿԱՆ ԵՒ ԱՌԱՋԻՆՔ

ԶՈՐԱԿԱՆԸ

Տէր , քաջ արին Մուշեղ զօրագըլուխն մեր  
Եւ արին մեծ վարդան ըստարապետն մեր ,  
Ընդդէմ Արեաց Մատեան մեծամուր , հզօր դընդին  
Բոլոր զօրագլխաց հետ յարձակում արին ,  
Պատերազմն ըսկըսաւ և յանդուդն յարձակմամբ .  
Միմեանց հետ բախուելով անհնարին բըռնութեամբ  
Մեծ տաղնապ , մեծ սարսափ միմեանց են ըսպառնում  
Եւ երկու կողմերէն շատ դօրքեր են ըսպանում .  
ԱՌԴ , ըշտապին , տէր , զի արին մեր վարդան  
Բոլոր զօրագըլխաց արձակեց խիստ հրաման ,  
Որ հէնց իսկ այս ժամնուա և մենք միահամուռ  
Յարձակինք և քակտենք Մատեանն այն մեծամուր .  
Այս հրամանն է , տէր իմ . . . . .

ԵՐԱՆՈՒՀԵ

\* \* \* \* \* ԱՌԴ ԴԵՆԱՆՔ , Գարեգին

ԴԱՅԵԳԻՆ (Թեյլէլին)

Օքհնէ , դայեակ , օքհնէ քո գարեգին որդին  
Եւ մի վերջին անդամ . . . . .

Ա.ԵՆ+Ը մասն գընուած էն երժելով պըտիչնէ երժը , բայց ուսոյեակը յեւները դէռէ  
Երին+ բարձրացնուելով ասուած է :

\* \* \* \* \* Դու , օքհնէ սրանց Աստուած  
Եւ սոնը քո զօրութիւն յաղթել քո թըշնամեաց :

ՏԵՍԻԼ Ը .

ԴԱՅԵԱԿԻ (Աւանչին ու արիստին մէ քուր կանչ առնելով յետոյ )

Այս ի՞նչ տաղնապ ահեղ , այս ժամուս ահաւոր ,  
Մեր աշխարհն է սարսում , ով Աստուած երկնաւոր ,  
ԱՌԴ , քայ արա՛ մեղ քո երկնային դըռները

Եւ ընդունիր մեր զօրաց նահատակ սըրտերը :  
Յուղարկիր մեղ երկնէն մի բանակ հրեշտակաց  
Օդնական լինելու մեր քաջասիրտ զօրաց ,  
Որ հէնց մի յարձակմով Պարսից Մատեան դընդին  
Մի հարուած հասցունեն և տապալեն գետին :  
Ընդունէ , ովլ իմ Տէր , այս աղերսն իմ առանձին  
Եւ մի տար մեր զօրքերն նրա ուժդին հարուածին :  
Թէ միանդամ այն գունդն իր մէջ տեղէն քայուի  
Պարսից զօրքն անպատճառ մեր զօրքէն կը յաղթաւի . . .  
Բայց այս ի՞նչ աղաղակ երկինք երկիր է բըռնել . . .  
Դնամ , դիտեմ միանդամ , թէ կարող եմ տեսնել :

Դայէտէլ ժնուած է առ վրանէ իշտէ բարյը պէսէն դաշտն է նկազուած :  
Ո՞հ , ի՞նչ ուրսուռ է այս , որ սըրտումն եմ ըզդում ,  
ի՞նչ ահեղ տեսարան ես աչքովս եմ տեսնում :  
Ամպ , արե , հողմ փոշի մարդկանց հետ կատաղած  
իրար են ջընջելու կարծես պատրաստուած :  
Սաղաւարտներն ամեն կայծ ու բոց են ցայտեցնում  
Սըրերն ու թըրերը կայծակներ շանթեցնում :  
Ո՞հ , տաղնապ ահաւոր , ո՞հ , աղէտ ահոելի  
Երկինք երկիր կատղել իրար են կուլ տալի :  
Ի՞նչ յանգուդն յարձակմով միմեանց եմ կոտորում ,  
Որ ուրերն ու դաշտերը թողում են , որոտում :  
Վայ ինձ , Հայոց դընդին ծախակողմը շարժեց ,  
Ահա մեծ վարդան ինքն իր գունդն առաջ մղեց :

Դայէտէն անկարող ուստերացէ դաշտը դէտելու , էր եկած ուղին անշարժ և ըստու  
է մնուած մի իստր , յետոյ նորէն վէր ե կենուած առները դէպէն երինին ե բարյ-  
բացնուած :

Տէր , թէ որդոս արիւն քեղ պատարագ եղաւ  
Աղատիր աղաչեմ , գէթ մեր Եկեղեցին . . .  
Ի՞նչ է այս , մեր զօրքերն են , թընամին ցըրուեցի՞ն . . .  
Հապա ում ձայն է այս , որ ականջս է դալի :

Մէ իստր մէջոց ոկանջէ դնուած :

Վայ ինձ , լաց են լինում , վայնասոն են տալի :  
• • • • • • Տէր Աստուած , Գարեգինն է :  
Վիրաւորուած . . . այո՛ . . . իմ որդին է :

**ՏԵՍԻԼ թ.**

ԳԱՐԵԳԻՆ ԵՐԱՆՈՒՀԵՈՅ ԳԸՐԿՈՒՄ, ԴԱՅԵԱԿԸ ԵՒ ԶԻՆՈՒՈՐՔ

ԳԱՐԵԳԻՆ ՇԱՀԱՊԱՐ

Ա՛Ն քոյր իմ, մեռնում եմ, մահացու է իմ հարուած :

ԵՐԱՆՈՒՀԻ ՀԵԺԵԺԱԾՀ

Դու հասիր օդնութիւն . . . ողորմած իմ Աստուած :

ԳԱՐԵԳԻՆ

Փա՛ռք քեղ տէր Աստուած իմ, որ արժանի եղայ

Մեր սուրբ Եկեղեցւոյն լինել անմահ վրկայ .

Մինչդեռ շին և պայծառ քո սուրբ Եկեղեցին

Առաքինի վրկայք հաստատոն պահեցին . . .

Ահա և ես Տէր իմ ըստ երկնաւոր կոչման

իմ արիւն թափեցի քո փառաւոր անուան :

Արդ, ընդունիր այժմ իմ արիւն և իմ մահ

Եւ նահատակաց մահուան հաւասար արա :

Ազատիր մեր ուխտը, այս դառն հարուածէն

Պաշտպանիր մեր աշխարհ դաւաճան վասակէն

Մի տար, Տէր, մի տար մեր ազգին վասակներ,

Որ այսպէս չարաչար հասցունեն վընասներ :

Այլ դու միայն, դու, լե՛ր միշտ ապաւէն

Եւ վերացու մեր մէջէն իշխաններն անօրէն :

Դու միայն մեր ազգին շընչիր քո անմահ լոյս,

Որ իր ազատութեան լինի մի արգար յոյս :

Ահա, ես իմ հոգին . . . քո ձեռն եմ աւանդում

Տուր, աղաչեմ քեղ Տէր, իմ ազգին ազատում . . .

Ներիր դրայանցանքին իմ թափած արիւնով

Եւ նորոգիր նրա կեանք մի սթափած սերընդով . . .

Ա՛Ն, իմ Երանուհի . . . շունչը սպառեցաւ . . .

Արդեօք և մեր մայրը . . իմ մահն իմացաւ :

Արի, դայեակ իմ, արի . . . մօտեցիր իմ մօտ

Եւ, դնա՛, ասա իմ վարդանոյշ մօր

Թէ իր որդին . . . գարեգին նահատակ եղաւ :

**ՏԵՍԻԼ ժ.**

ԽԵՐՈՒՆԻ ԿՐՈՆԱԿԱՐՆ ՈՒ ԱՌԱՋԻՆՔ

ԵՐԱՆՈՒՀԻ

Գարեգին, իմ եղբայր, տես միանդամ ով եկաւ :

Եւ դու, Գարեգին, որդեակ իմ, որդեակ,  
Վերջապէս եղար ուխտին նահատակ  
Եւ տուիր քո կեանք իբրեւ իսահակ  
Մեր Տէր Աստուծոյն անմահ պատարագ  
Էրնեկ քեզ որդի՛, այսօր քո հոգին  
Մեծին վարդանայ և իր սուրբ գլուղին  
Հոգւոյ հետ մէկտեղ 'ի մէջ դըրախտին  
Սրժանի եղաւ Աստուծոյ փառքին :

ԿՐՈՆԱԿԻՑԻ

Հայր, միթէ՞ և մեր քաջ արին վարդան  
Յարձակելիս ընդդէմ գլուղին Մատեան  
Պատարագ եղաւ Աստուծոյ անուան :

ԿՐՈՆԱԿԻՑԻ

Այս, Երանուհի և նա այս վայրկեան  
Հայրենեաց ուխտին իր կեանքը զոհեց  
Եւ իր սուրբ արիւնն Աստուծոյ տուեց :

ԳԱՅԵԱԿ

Որդի՛, քո աղերսն ահա Տէրն ընդունեց  
Եւ մեծին վարդանայ քեզ հաւասարեց :

ԳԱՅԵԳԻՆ

Ո՞վ ես դու հայրիկ . . . Աստուծ դըրկեց քեզ,  
Որ վարդանայ մահն իմաց անես մեզ  
Ասա ինձ հայրիկ, զի ուրախ եմ ես :

ԿՐՈՆԱԿԻՑԻ

Ես այն ծերուկն եմ, որդի՛ կը յիշե՞ս,  
Որ պահակ դըրան բանտումն եկայ  
Եւ քեզ շըդմայով կապկապուած տեսայ :

ԳԱՅԵԳԻՆ

Ա՛հ հայրիկ — ներիր — այժըմ իմացայ,

Գարեգինն ուղարք է ծերունաց արտը ընկնել ու կարող ովնել գետին է ընկնաց

Տուր աջդ համբորեմ . . . ո՞հ չեմ կարող մեռայ :

ԿՐՈՆԱԿԻՑԻ

Ով իմ գարեգին, սիրելի որդեակ

Ահա Երկընքէն լուսեղէն հրեշտակ  
Դընում են գըլխիդ վարդենի պըսակ  
Եւ օծում են քեղ Հայոց նահատակ  
Քեղ պէս, իմ որդեակ, և քաջըն վարդան  
Երբ կործանում էր գունդըն այն Մատեան  
Փոխարէն իր քաջ առաքինութեան  
Ծնդունեց պըսակ նահատակութեան:  
Եւ դու գարեղին, Աստուծոյ զաւակ  
Եղար մեր ուխտին օրհնած զուարակ:  
Ահա և այսօր մեր այս յաղթանակ  
Եկեղեցւոյն է անմահ յիշատակ  
Գընամ, տօնեմ այս օրըն փառաւոր,  
Զի և ինձ կանչում է Աստուծ Երկնաւոր:

ԵՐԱՆՈՒՀԻ

Օգնութիւն հասիր, հայր, իմ խեղճ եղբօր  
Հողին աւանդում է տէր Աստուծոյ հօր:  
Օրհնութիւն, սաղմոս կարդաւ առ Աստուծ:

ԿՐՈՆԱՒՐԸ

Ահա, որդի, քեղ լրաեց տէր Աստուծած  
Եւ իսկոյն կատարեց և քո խընդըրուած  
Զի սուրբ Երեցներ են դալի աստ:

ՏԵՍԻԼ ԺԱ.

Դեկոն, Խորին Երեքք, ՄՈՒՇԵՂ ԻՐ ԳՅՆԴԵՐՈՎ ԵՒ ԱՌԱՋԻՆՔ  
ՄՈՒՇԵՂ,

ԱՌ որդեակ իմ, գարեղին, և դու ընկար նահատակ,  
ԳԱՐԵԳԻՆ

Ասաւ, հայրիկ իմ Մուշեղ թէ տարանք մենք յաղթանակ  
ՄՈՒՇԵՂ,

Այս, որդի, դու տարար մեր յաղթութեան անմահ թագ  
Եւ մեր Հայոց սուրբ ուխտին այսօր եղար պատարագ  
Տէր, պարզեւիր մեր աղդին այս սանուս պէս զաւակներ:

ԳԱՐԵԳԻՆ

Եւ Հայկաղուն զաւակաց իմ հօրըս պէս դայեակներ:

ԴԵԿՈՆ ԵՐԵՑ

Ուրախ եղիր գարեղին, ահա Աստուծած Երկընքէն

Քո տանջանքին վոխարէն քեզ կոչում է այս երկրէն :

ԽՈՐԵՆ ԵՐԵՑ

Այսօր, արեամբդ գարեղին օրհնուում է մեր աշխարհքը  
Նոյնպէս անուամբդ, որդեակ իմ հոչակւում է մեր վառքը :

ԳԱՄԵԳԻՆ (Կէառան)

Ո՞հ, ով իմ սուրբ հարք, դուք էք, սուէք ձեր աջն համբուրեմ  
Եւ մի վերջին անդամ ձեր օրհնութիւնն ես առնեմ:  
Դուք մեր աղդին, սուրբ հարք իմ, պահապանն էք հըրեշտակ  
Մի թողէք որ օտար աղդք մեր ուխտն առնեն իրանց տակ.  
Այլ օրն ՚ի բուն ձեր աղօթք մատուցէք տէր Աստուծոյն  
Որ նա ինքն ուղարկէ քաջ հովիւներ Եկեղեցւոյն.  
Նոյնպէս հարք իմ, դուք եղէք տէր Աստուծոյն աղօթարար  
Որ իր շընչով յարուցանէ Հայոց աղդին աղատարար:  
Ահա սրանք են իմ խնդիրք ... արդ ընդունիր տէր Աստուծ ...  
Վայ ինձ ... ընկալ Տէր իմ հոգի ... և ներիր իմ մեղաց ... Ընդուռէ

ՀԵԽՈՆԴ ԵՐԵՑ

Ահա այսօր գարեղին, մի գունդ հըրեշտակ երկրնքէն  
իրանց ձեռքով քեզ տուին մի լուսավառ թագ վարդէն.  
Դու մեր աղդին զոհեցիր քո վըշտալի դառն կեանքը  
Եւ քեզ ժառանդ ըստացար արքայութեան լոյս կեանքը:  
Դու ես այսօր գարեղին, մեր հայրենեաց նահատակ  
Դու ես նաեւ Հայկաղանց քաջալերող օրինակ:  
Քո բարքն ու վարքը, որդեակ իմ, յիշատակ է և նըրանց  
Որոնք իրանց արիւնը կը նուիրեն հայրենեաց:  
Այսուհետեւ գարեղին, քո անունը սիրելի  
Գարուց ՚ի դար մեր աղդին պիտի լինի տօնելի :

ԽՈՐԵՆ ԵՐԵՑ (Դէպէ ժողովրդեան)

Ահա այսպէս, Հայկաղունք, Տէրն յայտնել է իր հըրաշք  
Եւ աղատել մեր հարց ուխտն ու մեր Հայաստան աշխարհք :  
Արդ, զարդանանանք մենք, եղբարք, մըխիթարուինք Աստուծով  
Նա չի թողել մեղ թըշտառ թէ յուսանք մենք հաւատով :  
Այսպէս թէ դուք, ով Արդիք համբեր հողւով դուք միմեանց  
Կըլնիք սիրող օդնական և միաբան միաղգած,  
Այն ժամանակ սուրբ Հոգիք և ամեն դասք արդարոց  
Զեղ օդնական կը լինին կատարելու արդար դործ :  
Խոստովանողք, մարտիրոսք մեր Հայաստան աշխարհին  
Թող մեղ լինին օրինակ մինչ կատարած աշխարհին :

Նրանց արեամբ Հայկաղունք, շաղախուած է մեր աշխարհք  
Եւ ամեն տեղ մեր երկրում երեւել է մեծ հըրաշք։  
ԱԻԱՐԱՅԻ դաշտն այսօր պայծառացաւ ծաղկեցաւ  
Զի մեր սուրբ Հարց արիւնով, ոսկորներով ցանուեցաւ։  
Ուր էք մըշակք Հայրենեաց, արիք գընանք այն դաշտերն  
Հընձենք այն սերմն որ արեամբ ոռողեցին մեր պապերն։

## ՎԵՐՋ

---

### ՏՊԱԳՐԱԿԱՆ ՍԽԱԼԱՆՔ

Արժ.	Տար.	Ախալ	Ուղղ.
28	4	տիկնաց	տիկնանց
40	2	զօրաց	զօրացն
70	10	շարդին	շարդէն
71	8	յաղթեն	յաղթենք
"	10	դիտենաք	դիտենանք







Հ 9 Մ





5574

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0313154

